

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳԱՆՈՒՍՏՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ
(1920-1960-ական թվականներ)



Շապիկի առաջին էջում՝
ԱՆԹԱՄԱՐԻ ՎԱՆԸ

ՇՆԹԵՐՑԱՍՐԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ
(1920-1960-ական թվականներ)**

*Մեկենասությամբ
Արմեն և Բերսարի Շերինյան Հիմնադրամի
- ԱՄՆ -*

A II
85531



ԵՐԵՎԱՆ 1999

ԳՏՀ 941(479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Գ 217

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արժեքազիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագիր՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ՎԱՅՆ ԲԱՅԲՈՒՐՅԱՆ

Գ 217

Գալուստյան Հ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ

*ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ (1920-1960-
ական քվականներ) . - Եր.: Եգես, 1999. - 112 էջ*

Աշխատության մեջ համակողմանի քննության է ենթարկվում հանրապետական թուրքիայի կառավարության քաղաքականությունը այսպես կոչված «արևելյան շրջանների» կամ «արևելյան վիլայեթների» նկատմամբ, որի տակ պետք է հասկանալ Արևմտյան Հայաստանը: Հարուստ փաստերի հիման վրա ցույց է տրվում, որ երկրամասը, շնորհիվ հայ ժողովրդի աշխատասիրության, միշտ էլ եղել է տարածաշրջանի կենտրոնակ շրջաններից մեկը: Սակայն XX դարի սկզբի հայաքիմք փոթորիկներից՝ 1915 թ. արևմտահայոց ցեղասպանությունից հետո, այն վերածվեց թուրքիայի տնտեսապես հետամնաց շրջաններից մեկի: Հանրապետական թուրքիայի կառավարությունը անցած յոթ տասնամյակների ընթացքում ի վիճակի չեղավ երկրի արևելյան շրջանները դուրս բերել տնտեսական հետամնացության վիճակից: Աշխատությունում համոզիչ փաստերով ցույց է տրվում, որ դրա պատճառը ոչ միայն թուրքական կառավարության արատալիոր քաղաքականությունն է, այլև այն, որ 1915 թ., արևմտահայոց ցեղասպանության հետևանքով երկրամասի տնտեսական ու մշակութային զարգացմանը հասցված կործանաբար հարվածը մինչև օրս ամեն քալախիդիսում դեռ զգացնել է տալիս իրեն:

Գ 0503020913
0069 (01)-99 99

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-808-4-5

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 1999

© «ԵԳԵԱ» հրատարակչություն, 1999

HAYKAZOUN GALUSTYAN

**THE POLICY OF THE GOVERNMENT
OF REPUBLICAN TURKEY
IN THE EASTERN PROVINCES
(1920-1960s)**

*This Publications was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.
USA*

YEREVAN 1999

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՐՄԻՑ - Ն. Դովհաննիսյան

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՐՄԻՑ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- I. Ազգայնականությունը որպես Թուրքիայի կառավարող շրջանների ազգային քաղաքականության հիմք
- II. Արևելյան վիլայեթների տնտեսական զարգացման պատկերը մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը
- III. Տնտեսության ռազմականացումը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին
- IV. Արևելյան վիլայեթների սոցիալ-տնտեսական զարգացման միտումները (1945-1960 թթ.)
- V. Ազգային փոքրամասնությունների վիճակը
- VI. Դրությունը Արևելյան վիլայեթներում 1960-ական թվականներին
- VII. ՎԵՐՋԱԲԱՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ (1923-1985թթ.)



Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող «Հանրապետական

Թուրքիայի կառավարության քաղաքականությունը Արևելյան վիլայեթներում (1920-1960-ական թվականներ)» աշխատությունը Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի աշխատակից, վաղամեռիկ թուրքագետ Հայկազուն Գալուստյանի առաջին և, ավաղ, վերջին մենագրական ուսումնասիրությունը եղավ: Նա համեմատաբար ուշ ոտք դրեց գիտության բնագավառը, սակայն

մրա մուտքը եղավ շատ սահուն և ներդաշնակ, որը մրա գիտական կարողությունների, բանիմացության և լայն գիտելիքների ամառարկելի վկայության մասին է խոսում:

Հայկազուն Գալուստյանը ծնվել է 1923 թ. օգոստոսի 31-ին, Թուրքիայում, Բյուզանդական կայսրերի երբեմնի փառաբեղ մայրաքաղաք Կոստանդնուպոլիս-Ստամբուլում:

Նախնական կրթությունը ստացել է Գետիք-փաշա թաղի Մեսրոպյան վարժարանում, որն ավարտել է 11 տարեկան հասակում՝ 1934 թ.: Այնուհետև նա իր կրթությունը շարունակում է Ղալաթիայի Կենտրոնական միջնակարգ վարժարանում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, 19-ամյա երիտասարդ Հ.Գալուստյանը զորակոչվում է թուրքական բանակ և ծառայում մինչև 1946թ.:

Ձորացրվելուց հետո, մոտ ութ տարի, 1947-1955թթ., նա աշխատում է Ստամբուլի Կարագյոզյան գիշերօթիկ վարժարանում որպես հսկիչ, ապա և ուսուցիչ, իրեն նվիրելով հայ մանուկների հայեցի դաստիարակության գործին: Միաժամանակ նա շարունակում է աշխատել իր կրթության կատարելագործման և գիտելիքների հարստացման վրա և 1955 թ. ստանում է Լիցեյի ավարտական վկայական:

Ուսման ծարավը Հայկազուն Գալուստյանին տանում է Ստամբուլի համալսարան, որտեղ նա ուսանում է գրական ֆակուլտետի փիլիսոփայական բաժնում: Այստեղ նա հատկապես մեծ ուշադրություն է դարձնում հոգեբանության, փիլիսոփայության և մանկավարժություն առարկաների վրա, որոնցից նա ստանում է համալսարանում սահմանված ամենաբարձր միշերը: Նա Ստամբուլի համալսարանն ավարտում է 1964 թ.:

Հայկազուն Գալուստյանը փոքր հասակից մեծ սեր է ցուցաբերել գրականության նկատմամբ, գրել բանաստեղծություններ, ըստ որում հայերեն և թուրքերեն լեզուներով: Թուրքերեն բանաստեղծությունները հրատարակվել են 1942 թ. առանձին զրբույկով՝ «Բալքըս» խորագրի ներքո, իսկ հայերեն բանաստեղծությունները 1962 թ. «Գործիս ճամբուն վրա» ժողովածուում:

Հայկազուն Գալուստյանի կյանքում շրջադարձային եղավ վերադարձը Հայաստան, 1965 թ. հոկտեմբերին: Նա եկավ հայրենիքում ընդմիջտ մնալու վճռականությամբ: Եկավ, տեսավ թե՛ լավը և թե՛ վատը, թե՛ լուսավոր և թե՛ ստվերոտ կողմերը: Տեսավ և որոշեց մնալ: Դրանով դրսևորվեց նրա բնավորության և մտածողության լավագույն գծերից մեկը՝ կուլ չգնալ մանրություններին, մանավանդ կենցաղային, կառողանալ վեր բարձրանալ կյանքի դժվարություններից և ազգի ու հայ-

րենիքի հետ կապված հարցերը լուծել լայնախոհությամբ, դավանելով ազգին բուն հայրենիքում օգտակար լինելու վսեմ սկզբունքը:

Նա մնաց և ստացավ Հայաստանի քաղաքացիություն:

Դյուրությամբ լուծվեց մահ նրա աշխատանքի հարցը: 1966 թ. հունվարի 1-ին մահ աշխատանքի ընդունվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորում, որը 1971 թ. վերակազմավորվեց ինստիտուտի: Նա դարձավ ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատող: Թուրքիայի իրադրությանը, ներքաղաքական կյանքին լավատեղյակությունը, թուրքերենի հիմնալի իմացությունը, ֆրանսերեն, անգլերեն լեզուներին տիրապետելը, կանխորոշեցին նրա ապագա գիտական գործունեության հիմնական ուղղությունները: Նա մախընտրեց զբաղվել Թուրքական Հանրապետության ներքին քաղաքականության և ազգային փոխհարաբերությունների հարցերով:

Սակայն նրա գիտական գործունեության առանցքը հանդիսացավ Թուրքիայի արևելյան շրջանների սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրությունը, որն, ըստ էության, դուրս էր մնացել հետազոտողների տեսադաշտից: Դա հատկապես հուզում էր հայ ընթերցողին, բանի որ «արևելյան շրջաններ» կոչվածի մեծ մասը մախսիկն Արևմտյան Հայաստանն է: Իսկ հրապարակի վրա չկար այդ շրջանների իրական և հավաստի պատմությունը, որը ցույց տար, թե ինչպիսին է այդ շրջանների վիճակը հայերի ցեղասպանությունից և տեղահանությունից հետո: Հայկազուն Գալուստյանը հաջողությամբ լուծեց այդ խնդիրը: Նրա սույն ուսումնասիրությունը այդ պլանին հետազոտմանը նվիրված առաջին արժեքավոր աշխատությունն է:

Հայկազուն Գալուստյանը վայելում էր իր գործընկերների համակրանքը և հարգանքը:

Նա շատ նրբամկատ և համեստաբարո անձնավորություն էր, միշտ պատրաստ օգտակար լինել իր գործընկերներին:

Նրա անժամանակ մահով անավարտ մնացին նրա շատ գի-

տական ծրագրեր: Բայց այն, ինչ նա թողել է, ապահովում է նրա պատ-
վավոր տեղը հայ թուրքագետների շարքում:

**Հայաստանի Գիտությունների ազգային
ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ
իրնօրին, պրոֆեսոր՝ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Ներկայումս թուրքական հրատարակություններում ընդունված է Արևմտյան Հայաստանը և նրա հարակից շրջանները կոչել ոչ թե իրենց պատմական-իրական անվանումով, այլ ոչինչ չասող «Արևելք», «արևելյան շրջաններ կամ վիլայեթներ», «Արևելյան Անատոլիա» անվանումով: «Արևելյան շրջաններ» տերմինը սովորաբար օգտագործվում է նաև վարչական առումով՝ որպես երկրի տնտեսական շրջան:

Սույն աշխատության հեղինակ, հանգուցյալ արևելագետ-թուրքագետ Հայկազուն Գալուստյանը «արևելյան վիլայեթներ» հասկացությունը օգտագործում է հենց այդ իմաստով, նկատի ունենալով, որ դա Արևմտյան Հայաստանի և նրա հարակից շրջանների տարածքն է: Անտարակույս թուրքական պետական գործիչները և քառուղյական մեքենան հորինել են «արևելյան վիլայեթներ» կամ «արևելյան շրջաններ» տերմինը, ձգտելով իսպառ վերացնել ու արմատախիլ անել Արևմտյան Հայաստան հասկացողությունը, մոռացության մատնելու համար այն իրողությունը, որ այդ տարածքի վրա պատմության հնագույն ժամանակներից ի վեր ապրել են հայեր, ստեղծելով պետականություն, կերտելով բարձր մշակույթ և այլն:

«Արևելյան շրջաններ» կոչված ագրարային արևելքի մեջ մտնում են հետևյալ վիլայեթները. Ադրի, Ադիյահաման, Արթվին, Բինգյոլ, Բիթլիս, Վան, Գազիանթեպ, Գիրեսուն, Գյումուշանե, Դիարբեքիր, Կարս, Մալաթիա, Մարաշ, Մարդին, Մուշ, Ռիզե, Սըվաս (արևելյան մասը), Սղերդ, Ուրֆա, Հաքյարի, Տրապիզոն, Թունջելի, Էյլազիզ, Էրզինջան, Էրզրում: Դրանց ընդհանուր տարածքը 290,7 հազար քառ. կմ. է, որը կազմում է երկրի ողջ տարածքի 37,3 տոկոսը: 1970 թ. մարդահամարի տվյալներով «արևելյան վիլայեթներում» բնակվում էր 9,9 միլիոն մարդ, այսինքն երկրի բնակչության 28 տոկոսից էլ պակաս: Միջին խտությունը մեկ քառ. կմ. վրա կազմում էր 34 մարդ, համարյա երկու անգամ պակաս Արևմտյան տն-

տեսական շրջանի բնակչության միջին խտությունից:

Արևելյան վիլայեթները աչքի են ընկնում իրենց բնական հարստություններով՝ կան հիանալի արոտավայրեր, բազմաթիվ լեռնային գետեր, որոնք ունեն վիթխարի էներգետիկ հնարավորություններ, այդ շրջաններով են հոսում Թուրքիայի երկու խոշորագույն գետերը՝ Եփրատը և Տիգրիսը: Հարավ-Արևելքում է գտնվում Թուրքիայի ամենախոշոր լիճը՝ Վանա լիճը: Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում ամենատարբեր օգտակար հանածոները՝ նավթը, քրոմիտները, պղնձի և երկաթի հանքավայրերը, գորշ ածուխը և այլն:

Սակայն այդ բոլորով հանդերձ, երկրի արդյունաբերական Արևմուտքի և ագրարային-արդյունաբերական Կենտրոնական շրջանի համեմատ ագրարային Արևելքը հանդիսանում է բոլոր առումներով թերզարգացած, իսկ, ավելի ճիշտ, հետամնաց մի շրջան: Որո՞նք են դրա պատճառները, արդյոք դա այդ երկրամասի համար հանդիսացել է մշտական գործո՞ւն, թե ավելի նոր ժամանակների երևույթ է: Սրանք հարցեր են, որոնց պատասխանը կարելի է գտնել սույն հետաքրքիր և ուշագրավ աշխատությունում: Հեղինակը՝ Հայկազուն Գալուստյանը իր առջև հատկապես խնդիր է դրել ուսումնասիրել առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդող շրջանում Թուրքիայի արևելյան վիլայեթների ժողովրդագրական և տնտեսական վիճակում առաջ եկած փոփոխությունները:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունը Արևմտյան Հայաստանը նվաճեց XVI դարի սկզբին, նրա տարածքն անվանելով «Վիլայաթի շարքին» («արևելյան վիլայեթներ»): Հայ ժողովրդի բնօրրանը վերածվեց Օսմանյան կայսրության գաղութային տիրույթի: Անցած չորս հարյուր տարիների ընթացքում քուրքական տիրապետությունը Արևմտյան Հայաստանում եղել է հայ ժողովրդի ազգային ու կրոնական ճնշումների, մշակութային հալածանքների, բնակչււն աճի արհեստական կասեցման, դեմոգրաֆիական ճնշման և վերջապես ֆիզիկական ոչնչացման ու էթնիկական գտման մի անվերջ շարան: Այդ տևական ժամանակամիջոցի ընթացքում իրար հաջորդող քուրքական կառավարությունները ոչ միայն հոգ

չէին տանում գերազանցապէս ոչ բութ բնակչություն ունեցող այդ երկրամասի նկատմամբ, այլև արհեստականորեն խոչընդոտում էին նրա տնտեսական ու մշակութային զարգացումն ու առաջադիմությունը: Անցնելով հարյուրամյակներ տևած այդ մղձավանջի ճանապարհով, հայ ժողովուրդը կարողացել է սակայն պահպանել իր կենսունակությունը, լեզուն ու կրոնը, դարերով սրբազործված իր ավանդությունները և վերջապէս ազգային դիմագիծը: Նրա ստեղծագործական եռանդի և անօրինակ աշխատասիրության շնորհիվ Արևմտյան Հայաստանը միշտ էլ եղել է Օսմանյան կայսրության ծաղկուն շրջաններից մեկը, իր զարգացած երկրագործությամբ, արհեստագործությամբ և կրթական-մշակութային հայտնի կենտրոններով: Նրա բարեկեցությանը առաջին մեծագույն հարվածը հասցվեց XIX դարի 90-ական թվականներին, արյունոտ սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած հայերի զանգվածային ջարդերի ժամանակ: Այդ արհավիրքի տարիներին և նրանից հետո սկսվեց արևմտահայության զանգվածային արտագաղթը երկրից, որի հետևանքով հայության բնօրրանը դատարկվում և աստիճանաբար ամայանում էր: «Համիդիե» կոչված հրոսակային գնդերի օգնությամբ սուլթանը հետևողականորեն իրականացնում էր հայերին տնտեսապէս հյուծելու և հայ ազգային-ազատագրական շարժումը իր տնտեսական հենքից զրկելու քաղաքականություն: Հայ բնակչության նկատմամբ բռնությունները, կողոպուտն ու թալանը, ապօրինի տուրքերը, հափշտակումներն ու ամեն տեսակի կամայականությունները ընդունել էին աներևակայելի մեծ թափ ու ծավալ: Նշված քաղաքականության օգնությամբ սուլթանական կառավարությունը ձգտում էր ոչ միայն ջախջախել հայ ազգային-ազատագրական շարժումը, այլև Արևմտյան Հայաստանից դուրս մղել աշխատանքային ու ստեղծագործական եռանդով ու ավյունով լի հայկական բուրժուազիային և առհասարակ գործարար կյանքի բոլոր ներկայացուցիչներին և ուղի հարթել բութ ազգային բուրժուազիայի զարգացման համար, որն ի վիճակի չէր խաղաղ մրցակցությամբ հաղթող դուրս գալ տնտեսապէս ուժեղ հայկական և առհասարակ այլազգի բուրժուազիայի նկատմամբ: Աբդուլհամիդյան ջարդերի

հետևանքով Արևմտյան Հայաստանի մի շարք շրջանների համարյա ողջ առևտուրը և վերամշակող արդյունաբերությունը, որոնք մինչ այդ գտնվում էին հայերի ձեռքում, սկսեցին անցնել թուրքերին: Եվրոպացի դիտորդները նկատել էին, որ 90-ական թվականների հայկական ջարդերից հետո սկսվեց հայերի ոչնչացումը տնտեսական ճանապարհով, դանդաղ, աննկատ, բայց և համառ կերպով: Բազմաթիվ մանր, հազիվ նշմարելի միջոցառումներ հետևողականորեն սկսեցին բայքայել հայերի կենսական ուժերը, որոնք սկսեցին կործանվել տնտեսական դանդաղ մահով, իսկ նրանց փոխարեն և ի հաշիվ նրանց հարստացում ու ծաղկում էր թուրք տարրը: Այդ քաղաքականությունը թուրքական դավադրական զինամուցի թիվ երկու զենքն էր ջարդի մեթոդից հետո՝ աստիճանաբար մաշեցնել իր համար անցանկալի տարրերին և նրանց հասցնելով բայքայման ու աղքատացման, հետևաբար նաև ծայր հուսահատության, դուրս մղել երկրից, կենսական տարածություն ապահովելու նպատակով թրքության համար:

Հատկանշական է, որ 90-ական թվականների ջարդերի ընթացքում «նոր օսմանների» ժառանգորդները՝ երիտթուրքերը ևս գտնում էին, որ հայերի զանգվածային ջարդերը կրուպացնեն հայ բուրժուազիային և ուղի կհարթեն թուրք բուրժուազիայի ասպարեզ գալու համար, ուստի և արդարացնում էին սուլթանական իշխանությունների արյունոտ գործողությունները հայերի նկատմամբ:

90-ական թվականների ջարդերից հետո օսմանյան կառավարությունը բռնագրավում էր երկրից փախած տասնյակ հազարավոր հայերի հողերը, շարժական և անշարժ գույքը: Արևմտյան Հայաստանում ամենուրեք իշխում էր բիրտ ու վայրենի ուժը, անիշխանությունն ու քաոսը: Խոսք անգամ չէր կարող լինել անձի, գույքի անվտանգության, առավել ևս պատվի ապահովության մասին: Արևմտյան Հայաստանի ծաղկուն շրջանները բայքայվում և վեր էին ածվում ավերակների: Առևտուրը, ճանապարհների վտանգավոր լինելու պատճառով, սահմանափակվում, իսկ երբեմն համարյա իսպառ դադարում էր: Մտացվող եկամուտները խիստ պակասում էին, գանձարանը կրում էր մեծ վնասներ: Ջարդերից հետո

հայկական գյուղերում անասուններ համարյա չէին մնացել, որով-
հետև նրանց մեծ մասը բշել տարել էին քուրդ և թուրք ավատատե-
րերը: Սուլթան Աբդուլ Համիդի «զուլումի» քաղաքականության վեր-
ջակետը դրվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին,
երբ թուրքական մարտնչող ազգայնականության ներկայա-
ցուցիչները՝ «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցության կառավարու-
թյունը 1915-1916 թթ. կազմակերպեց արևմտահայության ցեղաս-
պանությունը, որի հետևանքով հայ ժողովրդի արևմտյան հատվա-
ծը բնաջնջվեց ու դուրս մղվեց իր դարավոր հայրենիքից և
Արևմտյան Հայաստանի տարածքը վերածվեց տնտեսապես քայ-
քայված, հետամնաց մի երկրամասի:

Արևմտահայության ցեղասպանությունը մեծագույն հար-
ված հանդիսացավ Թուրքիայի արևելյան վիլայեթների սոցիալ-տն-
տեսական և մշակութային զարգացման հետագա ճանապարհին:
Տեղի ունեցավ բնակչության՝ հատկապես քաղաքային բնակչու-
թյան կտրուկ նվազում, որը պարզապես հայաջնջման արդյունք էր,
տնտեսության անկում, արհեստների անհետացում: Մի շարք քա-
ղաքներ մինչև օրս ունեն ավելի քիչ բնակչություն, քան նախկինում:
Քաղաքային բնակչության կրճատումը խիստ նեղացրեց Թուրքիա-
յի արևելյան վիլայեթների ներքին շուկան: Հիրավի, փաստերը ան-
հերքելիորեն վկայում են, որ ժամանակակից Թուրքիայի «արևե-
լյան շրջաններում» կան վայրեր, որոնք իրենց տնտեսական ու
մշակութային զարգացմամբ ներկայումս գտնվում են ավելի ցածր
մակարդակի վրա, քան XX դարի սկզբներին, այսինքն մինչև հայոց
ցեղասպանությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին
Արևմտյան Հայաստանի և մերձակա շրջանների տարածքը անա-
սելի ավերածության ու տնտեսական քայքայման ենթարկվեց մա-
քմամական բանակների ռազմական գործողությունների հետևան-
քով: Վերջապես պատերազմի տարիներին երիտթուրքերի կողմից
կազմակերպված այլ տեղաբնիկների՝ ասորիների, հույների, մա-
սամբ մաև քրդերի տեղահանությունները էլ ավելի ամայացրին եր-
կիրը, վերջնականապես ոչնչացնելով այդ շրջանների տնտեսա-

կան զարգացման համար առկա գրեթե բոլոր մախադրյալները:

Վերոհիշյալ պատճառների հետևանքով փոխվեց մաև Թուրքիայի «արևելյան վիլայեթների» ժողովրդագրական պատկերը: Ոչ բուրք բնակչության թիվը կտրուկ անկում ապրեց: Էական փոփոխությունների ենթարկվեց մաև այդ շրջանների տնտեսական վիճակը: Տնտեսության բոլոր ճյուղերում տեղի ունեցան ոչ միայն բանական, այլև խորը որակական բնույթի փոփոխություններ: Տնտեսության ամբողջ ճյուղեր ու ենթաճյուղեր ուղղակի անկում ապրեցին: Անհետացան բազմաթիվ արհեստներ: Տնտեսական ենթակառուցվածքների կազմալուծումը անշրջելի դարձրեց արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և այլն հետագա անկումը: Այդ բոլորը կանխորոշեց հետագա տասնամյակների ընթացքում, ընդհուպ մինչև մեր օրերը, «արևելյան վիլայեթների» զարգացման դանդաղեցված տեմպերը և երկրի արևմտյան շրջաններից անհուսալիորեն հետ մնալը:

Ամբողջ խնդիրը սակայն կայանում է նրանում, որ անցյալի և ներկայիս թուրք պատմաբանները միտումնավոր կերպով այդ բոլորի մեջ չեն ուզում տեսնել երիտթուրքական կառավարության հանցավոր քաղաքականությունը, ամեն ինչ «վերագրելով» պատերազմի պատճառած ավերածություններին, դրանով իսկ կոպիտ կերպով կեղծելով և խեղաթյուրելով իրականությունը:

1923 թ. հանրապետական Թուրքիան երկրի արևելքում օսմանյան կառավարությունից ժառանգեց բայքայված ու կիսավեր մի երկրամաս, անդամալուծված տնտեսությամբ, նոսր բնակչությամբ, մարդաբափ եղած քաղաքներով ու գյուղերով, աղքատացած ու թշվառության դուռը հասած բնակչությամբ:

Անտարակույս թուրք ազգայնականները՝ քեմալականները հասկանում էին, որ «արևելյան վիլայեթների» մնացած վիճակը, առավել ևս, որ դրանք գերազանցապես բնակեցված էին ոչ թուրք էթնիկական խմբերով, կտրված էին թրքության հիմնական կենտրոն հանդիսացող բուն Անատոլիայից, սահմանակից էին Խորհրդային Միությանը և այլն, հրամայողաբար պահանջում էր անհապաղ իրականացնել սոցիալ-տնտեսական, վարչական, քաղաքական, կր-

քական ու մշակութային բնույթի վերափոխություններ, այլապես երկրամասի հետագա ճակատագիրը կարող էր ենթարկվել անկանխատեսելի փոթձությունների: Անձամբ Մուստաֆա Քեմալի համար զաղտնիք չէր նաև, որ տնտեսական և մշակութային առումով արևելքի հետամնաց շրջանները ավելի են հակված դեպի անջատվողականություն և մշտապես հանդիսանում են անկայունության օջախներ: Սակայն ամբողջ խնդիրը կայանում է նրանում, որ հանրապետական Թուրքիան, թեև հրաժարվեց կրոնական սկզբունքից և որդեգրեց պետական կառուցվածքի աշխարհիկ-լաիկ տական սկզբունքը, սակայն ազգային հարցում գնաց տրոքված ուղիներով, Օսմանյան կայսրությունից և երիտթուրքերից ամբողջապես ժառանգելով ազգայնականության, այլամերժության, շովինիզմի, այլազգիների համաձուլելու ու թուրքացնելու գաղափարախոսությունն ու քաղաքական գործելակերպը: Միանգամայն պարզ է, որ մտածելակերպի ու գործելակերպի մնաց ոճը կատարելապես անհաբիր էր երկրի արևելքում բարեփոխումներ իրականացնելու շահերին:

1919 թ. հուլիսի 10-23-ը տեղի ունեցած Էրզրումի կոնգրեսի մանիֆեստում թուրք ազգայնականները հայտարարում էին, որ Էրզրումի, Սըվասի, Դիարբեքիի, Խարբերդի և Բիթլիսի վիլայեթները կազմում են մի միասնական ամբողջություն, որը ոչ մի պատրվակով չի կարող անջատվել Օսմանյան կայսրությունից: 1919 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Սըվասի կոնգրեսը ևս ամբողջապես հագեցած էր ազգայնական ոգով և արհամարում էր ազգային փոքրամասնությունների իրավունքները: Էրզրումի և Սըվասի կոնգրեսների որոշումները ընկան 1920 թ. հունվարին Մտամբուլի պառլամենտի կողմից ընդունված «ազգային ուխտի» հիմքում, որը դարձյալ կտրականապես ժխտում ու մերժում էր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Ինչպես հայտնի է, առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունից անջատվեցին մի շարք ոչ թուրք բնակչություն ունեցող երկրներ: Սակայն Թուրքիան կարողացավ պահպանել իր տիրապետություն-

ըն Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Ամրապնդելով իրենց իշխանությունը երկրում, քեմալականները ձգտում էին Թուրքիան վերածել ազգային առումով միատարր պետության: Հենց այդ նպատակով նրանք ձեռնամուխ եղան երիտթուրքերի կողմից սկսված Արևմտյան Հայաստանի «մաքրման» քաղաքականությանը նրա բնիկ բնակչությունից:

20-ական թվականներին, հատկապես սուլթանաթի (1922) և խալիֆաթի (1924) վերացումից հետո Անկարայի կառավարությունը ուժեղացրեց երկրի արևելքում կենտրոնական իշխանությունների ազդեցությունը ամրապնդելու միջոցառումները: Դա նշանակում էր «արևելյան վիլայեթներում» ահաբեկման քաղաքականության ուժեղացում: Ամենուրեք սկսեցին տեղի ունենալ այսպես կոչված «անկախության դատարանների» հաշվեհարդարները:

Լոզաննի կոնֆերանսից հետո (1923թ.) թուրքական կառավարող շրջանները էլ ավելի ուժեղացրին ազգային փոքրամասնություններին հալածանքների ենթարկելու և նրանց համաձուլելու քաղաքականությունը: Ազգային իրավունքների նկատմամբ արհամարանքի թուրքական քաղաքականությունը ցայտուն կերպով դրսևորվեց Թուրքական ազգային մեծ ժողովի կողմից 1924 թ. ընդունված Թուրքական հանրապետության առաջին սահմանադրության մեջ, որի 88-րդ հոդվածում ասված էր, որ «Թուրքիայի բոլոր քաղաքացիները, անկախ կրոնական և ռասայական պատկանելությունից, թուրքեր են»:


Քեմալականների այդ քաղաքականությանը քրդերը պատասխանեցին իրենց ազգային իրավունքների համար զինված պայքարով: 1919 թ. քրդական ապստամբություն բռնկեց Մալաթիայում: 1920-1921 թթ. քրդական շարժումներ տեղի ունեցան Քոչգիլի-Դերսմի շրջաններում, 1925 թ. բռնկեց շեյխ Սայիդի ապստամբությունը, 1927-1931 թթ. հուժկու ապստամբական շարժում ծավալեցին Արարատի շրջանի քրդերը, դրան հետևեց 1936-1938 թթ. Դերսիմի (Թունջեփ) քրդերի ապստամբությունը և այլն: Քրդական այդ շարժումները ռեակցիա էին քրդաբնակ շրջաններում թուրքական կառավարության վարած ճնշումների և ազգային խա-

15531
A II
րականության քաղաքականության նկատմամբ: Քրդերի պայքարը իրենց ազգային իրավունքների համար հենց սկզբից հանդիպեց քեմալականների վճռական դիմադրությանը, որոնք այդ շարժումները սկսեցին ճնշել զենքի օգնությամբ: Անթիվ ու անհամար քրդական ապստամբությունների դաժան ճնշումը քայքայում ու անդամալուծում էր արևելյան վիլայեթների տնտեսությունը: Իսկ քրդերի զանգվածային տեղահանությունները դեպի արևմտյան վիլայեթները էլ ավելի էր նոսրացնում տեղական բնակչության թիվը և սահմանափակում աշխատանքային ռեսուրսները:

1927 թ. նոյեմբերի 30-ին Անկարայում տեղի ունեցած Ժողովրդա-Հանրապետական կառավարող կուսակցության պառլամենտական խմբի նիստում Թուրքիայի «երկրորդ մարդ» հորջոքջվաժ վարչապետ Իսմեթ Ինենյուն հայտարարեց, որ կառավարությունը արևելյան վիլայեթների կառավարման բնագավառում որդեգրում է «նոր մեթոդ», որի էությունը կայանում է նրանում, որ այնտեղ վերջ է տրվելու իշխանության բացառիկ բնույթին, բացվելու է խաղաղ քարեփոխումների դարաշրջանը և այդ վիլայեթներում արմատավորվելու է բնականոն քաղաքացիական վարչություն:

Սակայն թուրքական իշխանությունների իրականացրած մակերեսային «քարեփոխումները» չէին կարող նպաստել արևելյան շրջանների սոցիալ-տնտեսական վիճակի արմատական փոփոխությանը, առավել ևս նրանց հետամնացության փոքր ի շատե վերացմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի փայփայած ռազմաշունչ նկրտումները հարկադրեցին կառավարությանը որոշ ուշադրություն դարձնել «արևելյան վիլայեթների» զարգացմանը: Ըստ այնմ զարկ տրվեց ռազմագիտական նշանակություն ունեցող ճանապարհների շինարարությանը և այլն: Պատերազմից հետո «Մարշալի պլանի» շրջանակներում որոշ փորձեր կատարվեցին «արևելյան վիլայեթների» տնտեսական աշխուժացումը արագացնելու և այդ շրջաններում ներդրումներն ավելացնելու ուղղությամբ: Այս անգամ ևս, թուրքական քարոզչությունն աշխատում էր երկրի հասարակական կարծիքին պարտադրել այն



համոզումը, որ երկրի Արևելքի համար բացվում է նոր դարաշրջան, որ կառավարությունը հետամուտ է լինելու «արևելյան վիլայեթները» զարգացնելու ու բարձրացնելու նպատակամետ քաղաքականության: Սակայն իրականում Ժողովրդա-Հանրապետական կուսակցությունը նման քաղաքական հմարքների օգտագործմամբ պարզապես փորձում էր ամրապնդել իր խաբիլված դիրքերը և խաթարված հեղինակությունը: 1950 թ. նա ստիպված եղավ երկրի ղեկը հանձնել նորաստեղծ Դեմոկրատական կուսակցությանը: Ի դեպ, վերջինիս իշխանության գլուխ գալու կարևորագույն խաղաքարտերից մեկը հանդիսացավ երկրի Արևելքը տնտեսապես բարձրացնելու վերաբերյալ «նոր կուրսը»: Սակայն քիչ ժամանակ պահանջվեց համոզվելու համար, որ այդ «նոր կուրսը» հետապնդում էր զուտ բարոզչական նպատակներ, մասնավորապես Ժողովրդա-Հանրապետական կուսակցության անհոգությունը և «հանցավոր անտարբերությունը» Արևելքի նկատմամբ քննադատելու և նրան վարկաբեկելու միտումներ: Թեև ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ ճանապարհաշինության, երկրամասը էլեկտրիֆիկացնելու, որոշ արդյունաբերական ձեռնարկություններ գործի գցելու, գյուղատնտեսության մեջ կապիտալիստական բնույթի նոր մեթոդներ ներդնելու, դպրոցական համակարգը զարգացնելու գործում Դեմոկրատական կուսակցության կառավարությունը վարչապետ Ջելալ Բայարի գլխավորությամբ որոշ դրական քայլեր կատարեց:

1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից հետո իշխանությունն իր ձեռքերում կենտրոնացրած «Ազգային միասնության կոմիտեն» ծրագրեր մշակեց արևելյան վիլայեթների տնտեսական զարգացումը խթանելու համար: Սակայն այդ ծրագրերը, որպես կանոն, մնացին անկատար: 1965 թ. իշխանության գլուխ եկած Արդարության կուսակցության կառավարությունը ևս բավարար չափով ուշադրություն չդարձրեց արևելյան վիլայեթների զարգացման հարցին:

Ընդհանուր առմամբ կարելի է ամփարան ասել, որ 60-ական թվականներին ավելի խորացավ արևելյան վիլայեթների և

Թուրքիայի մնացած շրջանների միջև գոյություն ունեցող տնտեսական անհամահասնությունը: Երկրի Արևելքը շարունակում էր մնալ որպես հետամնաց ագրարային շրջան: Դա անշուշտ չի նշանակում, որ «արևելյան վիլայեթների» զարգացումը կանգնել էր մեռյալ կետի վրա, մի հանգամանք, որ ընդհանրապես բնության մեջ և հասարակական հարաբերությունների բնագավառում գոյություն չունի: Ավելին, 60-ական թվականներից սկսած մինչև 90-ական թվականների վերջերը, այդ շրջանների զարգացման բնագավառում նկատվում է տեմպերի աննախադեպ աճ: Սակայն ամբողջ խնդիրը կայանում է նրանում, որ երկրի Արևելքի և Արևմուտքի միջև եղած անջրպետը, ավելի ճիշտ զարգացման մակարդակների տարբերությունը, ոչ միայն չի նվազում, այլև գնալով մեծանում է: Այսօր էլ արևելյան վիլայեթներում ուրբանիզացման գործընթացը նշանակալիորեն հետ է մնում երկրի մյուս տնտեսական շրջաններից: Արևմտյան և Կենտրոնական Թուրքիայից նկատելիորեն հետ է մնում մաև քաղաքների բարեկարգման վիճակը: Չափազանց խայտաբղետ է Արևելքի բնակչության էթնիկական կազմը, որտեղ թուրքերի հետ միասին ապրում են քրդեր, լազեր, թուրքմեններ, արաբներ և այլն: Տնտեսության առաջատար ուղղություն է շարունակում մնալ գյուղատնտեսությունը, հատկապես անասնապահությունը: Բնակչության ջախջախիչ մեծամասնությունը զբաղված է գյուղատնտեսության մեջ և միայն չնչին մասը՝ արդյունաբերության:

Անվարան կարելի է ասել, որ մեր օրերում ևս Թուրքիայի արևելյան շրջանները դեռևս բավարար չափով չեն ինտեգրացվել ավելի զարգացած Արևմուտքի և Կենտրոնի հետ, կամ դեռևս չեն վերածվել այդ երկրի տնտեսության բաղկացուցիչ մասի:

Թուրքական պաշտոնական քարոզչությունը Արևելքի հետամնացությունը փորձում է բացատրել աշխարհագրական անբարենպաստ գործոնով (բարձրադիր լեռնային շրջան, հարմար կոմունիկացիաների բացակայություն, զարգացած կենտրոններից մեծ հեռավորություն և այլն): Անշուշտ դրա մեջ կա ճշմարտության հատիկ: Սակայն էականը դա չէ: Իրականում իրար հաջորդած թուրքական կառավարությունները, ելնելով այլևայլ, այդ բովում անկաս-

կած մաս որոշակի քաղաքական նկատառումներից, երբեք լրջորեն չեն զբաղվել ազրաբային հետամնաց «Արևելքի» խնդրով: Համեմայն դեպս յոթ տասնամյակից ավելի է, ինչ համրապետական Թուրքիայի կառավարող շրջանները փորձում են տնտեսական, էքոնիկական, ազգային ու պատմական առումով յուրացնել արևելյան շրջանները, բայց այդ ջանքերը չեն տալիս ցանկալի արդյունքներ: Ուստի այդ խնդիրն ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս հանդիսանում է աղքատության, հետամնացության, հիվանդությունների, ազգային ու սոցիալական ճնշման մի բարդ հանգույց: Իրավացի է բուրբ պատմաբան Շ.Ալդեմիրը, որի կարծիքով մեր օրերում ևս թուրքական պետության «արևելյան շրջանները» մնում են որպես Թուրքիայի համար չլուծված մի պրոբլեմ, որպես «արյունածոր մի վերք»:

Իրականության հետ բնավ առնչություն չունի թուրք պատմաբանների ու քաղաքական գործիչների այն տեսակետը ևս, որ Թուրքիայի արևելյան վիլայեթների մինչև օրս շարունակվող տնտեսական հետամնացությունը պետք է բացատրել նրանց նկատմամբ տարբեր ժամանակների թուրքական իշխանությունների կրավորական անտարբերությամբ: Մեր կարծիքով դա իրականում հատուկ մշակված ու գիտակցաբար իրականացված քաղաքականություն է հանդիսացել:

Ներկայումս, երբ Խորհրդային Միության փլուզման հետևանքով տարածաշրջանի երկքաղաքական վիճակի մեջ տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ, համրապետական Թուրքիայի դեկավար շրջանները փոխել են, կամ փոխում են իրենց մախկին դիրքորոշումները արևելյան վիլայեթների նկատմամբ: Օրակարգում լրջորեն դրված է բոլոր չափանիշներով «Արևելքը» յուրացնելու խնդիրը: Դրան խթանող կարևորագույն գործոններից մեկն է հանդիսանում, անշուշտ, Թուրքիայում քրդական հարցի նոր սրումը: Կասկածից վեր է, որ այդ երկրում կան մարդիկ, որոնք հիանալի հասկանում են, որ քրդական հարցը ապակայունացնող գործոն կարող է հանդիսանալ ոչ միայն արևելյան շրջանների, այլև առհասարակ ողջ Թուրքիայի համար, որ ռազմագիտական առումով

սխալ է սահմանամերձ շրջանների զարգացման համար բավարար չափով հոգ չտանելը, մտահոգիչ է բնակչության նոսր խտությունը, մշակութային զարգացման ոչ բավարար մակարդակը, անարդյունավետ է արևելյան շրջանները արտաքին ազդեցություններից պաշտպանելու համար լոկ սահմանամերձ գոտու նկատմամբ հսկողության ուժեղացումը, հենց արևելյան շրջանների շահերից ելնելով անհեռանկարային է ամմիջական սահմանակից երկրներից արհեստական մեկուսացումը, այդ երկրները Թուրքիայի հետ կապող կոմունիկացիաների շրջափակումը, ինչ-ինչ բաղաքական խնդիրների և «եղբայրական համերաշխության» ցույցերի հետևանքով ուրիշ պետություններին պատանդ հանդիսանալը և այլն:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒԴՅԱՆ

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը արևելյան վիլայեթներն Օսմանյան կայսրության հիմնականում ոչ թուրքերով բնակեցված մի երկրամաս էր, թեև առանձին շրջաններում փոքրաթիվ չէին մահ թուրքերը: Ազգաբնակչության քանակով առավելություն ունեին առաջին հերթին հայերն ու քրդերը, ապա՝ թուրքերը, առանձին շրջաններում՝ ասորիներն ու արաբները: Արևելյան վիլայեթներում բնակվում էին մահ այլ ժողովուրդներ և էթնիկական խմբեր՝ հույներ, քաղղեսցիներ, չերքեզներ, լազեր, գնչուներ, թուրքմեններ, քահթացիներ և այլն:

Ազգային կազմի այս բազմազանությանը ուղեկցվում էր կրոնական այլազանությամբ: Օրինակ՝ մահմեդականները (թուրք կամ քուրդ) բաժանվում էին սուննիթների և շիաների: Բնակչության առանձին խմբերի, հատկապես քրդերի մոտ դեռևս առկա էր ցեղային-աշիրեթային կառուցվածքը, թեև նրանց մեծ մասը վարում էր կիսաքրիզվորական և մատակյաց ապրելակերպ:

Թուրքական կառավարությունը ամեն կերպ աշխատում էր սրել հակասությունները արևելյան վիլայեթներում ապրող էթնիկական տարբեր խմբերի միջև, առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով:

Ազգային և կրոնական խտրականության մման քաղաքականության հետևանքով ճնշվողն ու հարստահարվողը սովորաբար լինում էին ոչ թուրքերը՝ հայերը, քրդերը, արաբները, ինչպես մահ ոչ ուղղափառ մահմեդականները:

Թուրքական կառավարությունը առանձնահատուկ դաժանությամբ հալածանքներ էր գործադրում հայ ժողովրդի նկատմամբ, որոնք պարբերաբար ուղեկցվում էին զանգվածային ջարդերով, ունեցվածքի, շարժական և անշարժ գույքի բռնագրավումներով:

Նման քաղաքականության հետևանքով արևելյան վիլայեթներում սուր բնույթ էին կրում կյանքի, պատվի և գույքի անապահ

հովությունը, հարկերի գանձման հետ առնչվող չարաշահումներն ու բռնությունները, չարիքներ, որոնք խիստ բնութագրական էին օսմանյան կարգերին:

Բնականաբար այդ բոլորը խիստ կասեցնում ու արգելակում էր արևելյան վիլայեթների բնականոն զարգացումը: Սակայն այդ բոլորով հանդերձ, առանձին շրջաններում նկատվում էր գյուղատնտեսության, արհեստների, արդյունաբերության և առևտրի զարգացում: Անկասկած, սոցիալ-քաղաքական նպաստավոր պայմանների դեպքում զարգացումը կարող էր լինել ավելի արագ: Առաջին համաշխարհային պատերազմը և կառավարող շրջանների վարած քաղաքականությունը մեծ վնաս պատճառեցին ինչպես ամբողջ Թուրքիային, այնպես էլ արևելյան վիլայեթների տնտեսական կյանքին¹: Առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդող մի քանի տարիների ընթացքում բնաջնջման, բռնագաղթի և այլ բռնությունների հետևանքով Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև արևելյան այլ վիլայեթների դատարկվելը հայերից, հույներից, ասորիներից, մասամբ նաև քրդերից, անբուժելի հարված հասցրեց այդ տարածքների տնտեսությանը: Արևմտահայության ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի բնօրրանը իսպառ հայաթափ եղավ:

Հանրապետություն հռչակվելիս (1923 թ.) ամայացած էին նախկինում շեն ու բազմամարդ մի շարք շրջաններ: Ե՛վ գյուղերը, և՛ քաղաքները գտնվում էին կիսավեր վիճակում: Արդյունաբերությունը, արհեստները համարյա ամբողջովին անհետացել էին: Որակյալ արհեստավորների բացակայությունը զգացվում էր այնպիսի ճյուղերում, ինչպիսիք էին՝ որմնադրությունը, ատաղծագործությունը, երկաթագործությունը:

Ծանր հարված էր ստացել նաև հողագործությունը: Կրճատվել էին ցանքատարածությունները: Որակական առումով հողագործի երկրագործական փորձը², աշխատանքի գործիքները³, ոռոգման հնարավորությունների օգտագործումը⁴, զիջում էին նախապատերազմյան մակարդակին, որի հետևանքով խիստ նվազել էր բերքատվությունը: Կրճատվում էր նաև անասունների գլխաքա-

նակը: Տնտեսության այլ ճյուղերի կրած հարվածների հետևանքով ամասնապահությունը դարձել էր տնտեսության գերիշխող ճյուղը:

Քայքայվել էին տնտեսության առանձին ճյուղերի և տնտեսական առանձին շրջանների միջև եղած կապերը: Նեղացել էր ներքին շուկան: Գյուղատնտեսությունը կրում էր բնատնտեսային բնույթ:

Մի խոսքով, արևելյան վիլայեթները կորցրել էին դարերի ընթացքում ձեռք բերածը:

Տնտեսության ընդհանուր անկման հետևանքով թուրք առևտրականները, ազատ մասնագիտությունների տեղ մարդիկ և որակյալ արհեստավորները գաղթում էին տարբեր քաղաքներ, առանձնապես արևմտյան վիլայեթներ:

Երկրամասում տիրում էին ավատական կամ կիսաավատական հարաբերությունները: Թուրքական կամ քրդական վերնախավն իր ավարտին հասցրեց լքված հողերի բռնագրավումը: Թուրք և քուրդ հողագործ գյուղացիությունը հայերից դատարկված հողերից համարյա ոչինչ չստացավ: Մեծ թիվ էին կազմում հողագործներն ու սակավահող գյուղացիությունը: Հակառակ շրջանի խիստ սակավաբնակ լինելուն, նրանցից շատերը, կարծես արևելյան վիլայեթների տնտեսության համար «ավելորդ» ձեռքեր, դիմում էին պանդխտության⁵:

Զինվորականներ, վարչական պաշտոնյաներ, ուսուցիչներ, պետական առողջապահական ցանցում աշխատող բժիշկներ և պետական այլ ծառայողներ չէին ցանկանում պաշտոնավարել հրապույրը կորցրած այդ վիլայեթներում, որտեղ դժվար էր իրագործել անգամ ամենատարրական պահանջները, և դիմում էին արտագաղթի⁶:

Բնականաբար, նման վիճակը կառավարությունից հրամայաբար պահանջում էր անցկացնել սոցիալ-տնտեսական վերափոխումներ:

Սակայն այն կախված էր կառավարող շրջանների վաղած ազգային քաղաքականությունից, քանի որ արևելյան վիլայեթները դեռևս բնակեցված էին ոչ թուրքերով, այլ՝ քրդերով:

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Հանրապետական Թուրքիայի կառավարող շրջանների ազգային քաղաքականության հիմքում ի սկզբանե դրվեց ազգայնականությունը: Կառավարող շրջանները հետապնդում էին ոչ բուրք ժողովուրդներին բուրքերի մեջ ձուլելու քաղաքականություն: Չնայած քրդերը կազմում էին արևելյան վիլայեթների բնակչության մեծամասնությունը, նրանց զրկեցին ամեն մի իրավունքից: Օրինակ՝ ոչ միայն չբացեցին քրդական դպրոցներ, այլև բուրքական դպրոցներում էլ նվազագույն չափով անգամ տեղ չէին տալիս քրդերենի դասավանդմանը:

Այդ քաղաքականությունը արդարացվում էր սահմանադրությամբ, որտեղ նշված էր, թե բոլոր քաղաքացիները «բուրքեր» են: Նենգափոխելով պատմությունը՝ փորձում էին ապացուցել, որ քրդերը, իրոք, ծագումով բուրք են, որ իբր կորցրել են նրենց ազգային դիմագիծը, ազգային լեզուն, ազգային գիտակցությունը և իրենք իրենց «զգում են» բուրք: Այսպիսով, ծուլման քաղաքականությունը ներկայացվում էր որպես «քարեհոգություն», պատմական դժբախտության ապաքինում, վերահաստատում՝ բուրք լինելու գիտակցությունը քրդերի մեջ:

Կառավարող շրջանները չէին հանդուրժում մույնիսկ կենցաղի և սովորությունների հետ առնչվող այնպիսի երևույթների, ինչպիսիք էին ժողովրդական տարազն ու երգը, եթե դրանք վերաբերում էին քրդերին ու ոչ բուրք ժողովուրդներին: Միմյանցից ավելի քան 40 տարվա ժամանակով բաժանվող երկու դեպքերը պատկերացում են տալիս բուրք հետևողականության մասին մեծ հարցերում: 1928 թ., Սկյուտարում, բացօթյա խաղատանը, երգչուհի Վիկտորիա Խաչի-

կյանը երգում էր արարերեն: Ազգայնականների մի խումբ զայրացած աղաղակեց՝ «արարերեն չենք ուզում»: Պատահել են անտեղի վիճաբանություններ: Ոստիկանությունը միջամտելով՝ կասեցրել է դեպքի ծավալումը⁷: Իսկ 1971 թ. Դիարբեքիում, Դիարբեքիի և Սղերդի շրջանը պաշարած հրամանատարությունը, չբավարարվելով «քայքայիչ» գործողության համար մի շարք բուրդ երիտասարդների ձեռքակալությամբ, հսկողության տակ առավ երգիչ Ռամազան Կարա-Գյոզին՝ ամառային բացօթյա կազմնյում բրդերեն երգելու համար⁸:

Քրդերը գրկված էին ոչ միայն ազգային, այլև քաղաքական մի շարք իրավունքներից: Տեղական իշխանությունները նրանց հետ վարվում էին խտրականության ոգով՝ արհամարհանքով, ատելությամբ, գործերի ձգձգումով, քմահաճ բռնություններով:

Այսպիսով, քրդերը, տեսականորեն համարվելով «թուրք», գրկվում էին ազգային, իսկ գործնականում ընդունվելով որպես քրդեր՝ քաղաքացիական իրավունքներից:

Ազգային մեծ քաղաքականությունից առաջացած դժգոհությունը միահյուսվելով խանգարված տնտեսության պատճառած դժգոհություններին՝ պատճառ դարձավ քրդական մի շարք ապստամբությունների, որոնք 20-ական թվականներից, ընդհատ-ընդհատ, տևեցին մինչև 30-ական թվականների վերջը:

Թուրքական բանակը ապստամբությունները ճնշելու պատրվակով, մույնիսկ ճնշելուց հետո, հաշվեհարդար էր տեսնում խաղաղ բնակչության հետ՝ հրկիզում ու ավերում գյուղերը, կոտորում բնակիչներին:

Թուրքական իշխանությունները քրդերին մասսայաբար արտորում էին արևմտյան վիլայեթները:

Այս բուրդը իրենց հերթին ծանր հարված հասցրին արևելյան վիլայեթների, առանց այն էլ քայքայված տնտեսությամբ: Հետևաբար, արևելյան վիլայեթների հետամնացությունը չպետք է բացառել միայն թուրքական իշխանությունների պասսիվ անտարբերությամբ, ինչպես փորձում են ներկայացնել Թուրքիայի պետական գործիչները: Դա նշանակում է՝ անտեսել թուրքական իշխանություն-

ների կողմից գիտակցաբար գործադրված բռնությունների բացասական ազդեցությունն արևելյան վիլայեթների տնտեսության վրա:

Արևելյան վիլայեթների մի շարք քրդական շրջաններ բնաջնջվել ու ավերվել են, ինչպես հետագայում հայտնեց առողջապահության մախարար Յուսթյունդաղը:

Արևելյան վիլայեթների նկատմամբ կառավարության հոգատարության բացակայությունը պատահական չէր: Այն բխում էր կառավարող շրջանների վարած ազգային քաղաքականությունից: Սակայն չի կարելի ասել, որ կառավարությունը բացարձակ անտարբերությամբ էր վերաբերվում արևելյան շրջանների ճակատագրին:

Կային մի շարք դրդապատճառներ, որոնք մղում էին կառավարությանը շահագրգիռ վերաբերմունք ունենալ արևելյան վիլայեթների նկատմամբ:

Առաջին. կառավարող շրջանները երկրի ընդհանուր ֆինանսատնտեսական պրոբլեմների լուծման հարցում չէին կարող անտեսել արևելյան վիլայեթների ընձեռած հնարավորությունները՝ անհրաժեշտ գյուղատնտեսական մթերքների ստացումը, արդյունաբերության, արտաքին առևտրի պահանջների բավարարումը, արևելյան վիլայեթների օգտագործումը որպես արևմտյան վիլայեթների գյուղատնտեսության և արդյունաբերության շուկաներից մեկի: Այս բոլորը երկրի ընդհանուր հետաննացության պայմաններում պահանջում էին որոշ աշխատանքներ կատարել արևելյան վիլայեթներում:

Երկրորդ. արևելյան վիլայեթները ոչ թուրքերով բնակեցված վիլայեթներ էին: Նույնիսկ առանձին շրջաններում թուրքերը կազմում էին բնակչության փոքրամասնությունը: Ավելին, եթե կառավարող շրջանները մի կողմից հաշվի առնելով արևելյան վիլայեթների բնակչության ազգային կազմը վարում էին հատուկ քաղաքականություն, ապա բոլորովին պասսիվ չէին ազգային այդ կազմի նկատմամբ: Ջանում էին քրդերին ձուլել բռնագաղթի ու հայերից, ասորիներից, քրդերից դատարկված շրջաններում թուրքեր բնակեցնելու շնորհիվ՝ այն վերածել իրենց համար ցանկալի վիճակի: Այնուամենայնիվ, այդ ուղղությամբ ձեռք առնված միջոցառումներն ունեցան

միայն մասնակի հաջողություններ և մեծ փոփոխություններ տեղի չունեցան արևելյան վիլայեթների բնակչության ազգային կազմում:

Երրորդ. պետական ապարատի աշխատանքը հեշտացնելու, վարչական աշխատողների և նրանց ընտանիքի անդամների պահանջները բավարարելու համար կառավարող շրջանները ստիպված էին զբաղվել մի շարք հարցերով, ինչպես ճանապարհաշինության, առողջապահության և լուսավորության գործերի կազմակերպման ու կարգավորման և այլն:

Չորրորդ. կառավարող շրջաններն ունեին մահ քաղաքական դրդապատճառներ: Օրինակ, ճանապարհաշինարարությունը, մասնավորապես երկաթուղային շինարարությունը, կապված էր կառավարող շրջանների հետապնդած ռազմական մպատակների և հավանական ապստամբություններին միջամտելու ցանկությունների հետ: Դպրոցական ցանցի ընդարձակմանը մայում էին որպես ոչ թուրք երիտասարդ սերնդին թուրքական մշակույթով դաստիարակելու, թուրքական ազգայնականությամբ վարակելու, մի խոսքով, որպես ձուլման միջոցներից մեկի: Վերջապես, այդ թուրք ինչ-որ չափով անհրաժեշտ էր պրոպագանդայի համար: Ծանապարհի շինարարությունը, մի քանի դպրոցի կառուցումը, որքան էլ հեռու լինեին ոչ թուրք բնակչության պահանջումները բավարարելուց՝ ներկայացվում էին որպես կառավարության կողմից ցուցաբերված հոգատարություն:

Այնուամենայնիվ, այն դրդապատճառները, որոնք առնչվում էին արևելյան վիլայեթների տնտեսական, մշակութային կյանքի միայն առանձին կողմերին, թույլ դրդապատճառներ էին և հիմնականում կառավարող շրջանների վարած ազգային քաղաքականությամբ էր որոշվում հոգատարության չափն ու տեղաբաշխումը: Թեև ժամանակի ընթացքում նշված դրդապատճառների աշխուժացման և նորերի առաջացման հետևանքով աճեց կառավարող շրջանների շահագրգռվածությունը, սակայն տիրապետում էր ազգային քաղաքականության բացասական ազդեցությունը: Իհարկե, մեծ քաղաքականության հետևանքով տուժում էր մահ շրջանի թուրք բնակչությունը:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՒԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Արևելյան վիլայեթների զարգացման համար տրամադրված միջոցներով կատարված աշխատանքի վերլուծությունը ցույց է տալիս՝

ա) արևելյան վիլայեթների զարգացման համար տրամադրված միջոցները, մասնավորաբար մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, բացարձակ արժեքներով այնքան փոքրաքանակ են եղել, որ զգալի փոփոխություններ չեն առաջացրել արևելյան վիլայեթների տնտեսական կյանքում:

բ) արևելյան վիլայեթների զարգացման համար տրամադրված միջոցները շատ փոքր են մաս հարաբերական արժեքներով, արևմտյան վիլայեթներին հատկացված միջոցների համեմատությամբ, որի հետևանքով, ինչպիսի փոփոխություններ էլ կատարվեն արևելյան վիլայեթներում՝ միևնույնն էր, միջոցների բաժանման անհավասարությունը միայն խտացնում էր անհամաչափությունը արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև:

Դրան նպաստում էր մաս այն հանգամանքը, որ շատ հարցեր պետք է լուծվեին տեղական միջոցներով, իսկ դրանք խիստ սահմանափակ էին արևելյան վիլայեթներում:

գ) արևելյան վիլայեթների զարգացման համար տրամադրված միջոցների բաժանումը անհավասար է եղել մաս արևելյան վիլայեթների ներսում: Մի խումբ վիլայեթներ, որտեղ թուրքերը համեմատաբար մեծ թիվ էին կազմում (Կարս, Էրզրում, Էրզինջան, Էլազըղ, Մալաթիա, Ադի Յաման և Անթեբ (Այնթաբ) ավելի շատ են օգտվել այդ միջոցներից, քան վիլայեթների մի երկրորդ խումբ, որտեղ բնակչության մեծամասնությունը կազմում էին հիմնականում

քրդերը (Աղրը, Թունջեկի, Դիարբեքիր, Մարդին, Ուրֆա) ¹⁰:

Վիլայեթների բնակչության ազգային կազմի վերաբերյալ որոշ մանրամասնություններ տրվում են N 3 աղյուսակին կցված բացատրության մեջ:

Բերենք օրինակներ, որոնք որոշակի պատկերացում են տալիս մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը արևելյան վիլայեթների զարգացման համար տրամադրված միջոցների չափերի և մրանց առանձին շրջանների միջև բաժանման մասին՝ ընտրելով ոչ քե «ձեռնտու» օրինակներ, այլ՝ ընդհակառակը, այնպիսի հարցեր, որոնց լուծումով շատ ավելի շահագրգռված էին կառավարող շրջանները, ինչպես երկաթուղիների և ճամապարհների շինարարությունը:

Հանրապետություն հռչակելու ժամանակ (1923 թ.) Թուրքիայում երկաթուղային ցանցի ընդհանուր երկարությունը մոտավորապես 4 հազար կմ էր ¹¹: Սակայն երկաթուղային ցանցի զգալի մասը գտնվում էր կիսավեր վիճակում և 1923 թ. շահագործվում էր ընդամենը 3 756 կմ ¹²: Արևելյան վիլայեթներում գտնվում էին երկու երկաթուղային գծեր: Դրանցից առաջինը Կարսի երկաթուղին էր՝ 355 կմ երկարությամբ՝ բաղկացած երկու տեղամասերից.

ա) Արփաշայ-Մարիդամիշ (123 կմ), որը կառուցվել էր ռուսական կառավարության կողմից, երբ Կարսը գտնվում էր ցարական Ռուսաստանի կազմում, բ) Մարիդամիշ-Էրզրում-Ջյուրյուրյու (նեղիժ 232 կմ), որը կառուցվել էր ռուսական զորքերի կողմից՝ 1914-1916 թվականներին, և այժմ էր ընկնում իր ցածր թողունակությամբ ¹³: Երկրորդը Բաղդադի երկաթուղային մայրուղու Ֆեվզիփաշա-Նուսայբին (Նիզիբին, հայկական աղբյուրներում Մծրին խմբ.) տեղամասն էր (416 կմ), որը շոշափելով անցնում էր շրջանի հարավային սահմաններով, ձգվում թուրք-սիրիական սահմանի երկայնքով և համարյա ոչ մի էական դեր չէր խաղում արևելյան վիլայեթների տրանսպորտային կապը հեշտացնելու գործում: Պարզ է, որ երկաթուղային ցանցի անբավարարության պատճառով արևելյան վիլայեթները գտնվում էին անմխիթար վիճակում:

Հանրապետական Թուրքիան մեծ ուշադրություն դարձրեց

երկաթուղային ցանցի ընդլայնմանը: 1924 թվականից մինչև 1942 թ. երկաթուղային շինարարությանը հատկացվեց 425 մլն լիրա՝ ժողովրդական տնտեսության մեջ կատարված կապիտալ ներդրումների մոտավորապես 80 տոկոսը ¹⁴:

Մակայն երկաթուղիներից համարյա զուրկ արևելյան վիլայեթներում երկաթուղային շինարարությունը սկսվեց որոշ հասպաղումով (1929 թ.)՝ մինչ այդ արևմտյան վիլայեթներում 680 կմ երկաթուղայնք նոր երկաթուղիներ կառուցելուց հետո ¹⁵, և ոչ այնքան արագ տեմպերով, որպեսզի վերացներ արևելյան վիլայեթների միջև եղած տարբերությունը:

Արևելյան վիլայեթներում երկաթուղիների շինարարության տեմպերը խիստ արագացան Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, իսկ արևմտյան վիլայեթներում մնան շինարարության տեմպերն արդեն մվազել էին (տես աղ. 1): Դա բացատրվում էր նախ՝ ռազմաստրատեգիական նպատակներով, ապա՝ արևմտյան վիլայեթների՝ երկաթուղիներով քիչ թե շատ հագեցվածությամբ և, վերջապես, կապիտալ ներդրումների սահմանափակությամբ:

Այդ շտապողությունը վերաբերում է մասնավորապես Սվազ-Էրզրում երկաթուղիներին: Մինչ այդ նախապատվությունը տրվում էր հարավային ուղղություններին (Մալաթիա, Էլազըղ): Թուրքիան արարգացրեց այդ երկաթուղու կառուցումը ¹⁶, որի շինարարությունը նախատեսվել էր համեմատաբար ուշ՝ 1933 թ. մայիսի 20-ի օրենքով ¹⁷: Շինարարությունը սկսվեց 1935 թ.: 1935-1937 թթ. ընթացքում շահագործման հանձնվեց միջին հաշվով տարեկան 59 կմ, 1938 թվականին՝ 156 կմ, 1939 թվականին՝ 214 կմ ¹⁸:

**Թուրքիայում երկաթուղային ցանցի աճը
ըստ հնգամյա ժամանակաշրջանների (կիլոմետրերով)**

	Ամբողջ Թուրքիայում (*)	Այդ թվում՝	
		Արևելյան վիլայեթներում (**)	Թուրքիայի մնացյալ մասում
1926-1930 թթ.	1682	138	1544
1931-1935 թթ.	1000	391	609
1936-1940 թթ.	742	557	185
Ընդամենը	3424	1086	2338

*) *Sh'u "İstatistik yıllığı", 1960-62, s. 515, tablo: 460.*

**) *Sh'u "İstatistik yıllığı", 1960-62, s. 515, tablo: 461.*

Այսպիսով, մինչև 1940 թ. վերջը արևելյան վիլայեթներում կառուցվեցին մոտավորապես 1000 կմ երկաթուղյա՝ երկաթուղիներ: Դա չէր վերացնում անհամաչափությունը արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև, սակայն անցյալի համեմատությամբ մեծ «պարզե» էր, որը արևելյան վիլայեթները ստացան հապաղումով:

Կառավարող շրջանների վարած ազգային քաղաքականության, հետապնդած ստրատեգիական-քաղաքական նպատակների և տնտեսական շահավետության հետ կապված նախընտրությունների հետևանքով ստացվեց այնպես, որ նոր կառուցված երկաթուղիների ցանցը հիմնականում բաժին ընկավ առավել թուրքաբնակ վիլայեթներին և պատահամբ, նույն գոտում գտնվող Կարսի երկաթուղու հետ միասին, հյուսիս-արևելքից ձգվում էր դեպի արևմուտք և թեքվում դեպի հարավ՝ ադնեի ձևով շրջապատելով առավել քրդաբնակ վիլայեթները, բացառությամբ Մադեն (Էլազըղի վիլայեթ)-Դիարբեքի տեղամասի (83 կմ, 1935 թ.) և Դիարբեքի-Բիսմիլ տեղամասի (47 կմ, 1940 թ.)¹⁹:

Երկաթուղային ցանցը, մասնավորապես արևելյան վիլա-

յեթներում, հեռու էր տնտեսական մեծ նշանակություն ունենալուց, քանի որ այն չէր սնվում խճուղային ճանապարհների բավարար ցանցով:

Հանրապետություն հռչակելու ժամանակ անմխիթար էր խճուղային ճանապարհների վիճակն արևելյան վիլայեթներում, որին հակառակ, ավելի շատ հոգածության արժանացան արևմտյան վիլայեթները: Մեր ձեռքի տակ եղած 1928-1934 թթ. տվյալների համաձայն, 7 տարվա ընթացքում արևելյան վիլայեթներում կառուցվեցին ընդամենը 179 կմ երկաթուղյան ճանապարհներ, որոնք կազմում էին թուրքիայում մույն ժամանակի ընթացքում կառուցված ճանապարհների հազիվ 9%-ը, այդ թվում՝ 3,2%-ը առավել քրդաբնակ, և մնացյալ 5,7%-ը՝ առավել թուրքաբնակ վիլայեթներում (տե՛ս աղ. 2):

Աղյուսակ 2

**Ճանապարհաշինարարությունը թուրքիայի
արևելյան վիլայեթներում 1928-1934 թթ (*)**

	Նոր կառուցված ճանապարհներ		Անրանորոգում	
	կմ	%	կմ	%
Առավել քրդաբնակ վիլայեթներ	64	3,2	162	4,0
Առավել թուրքաբնակ վիլայեթներ	115	5,7	294	7,3
Ընդամենը՝ արևելյան վիլայեթներում	179	8,9	456	11,3
Թուրքիայի մնացյալ մասում	1827	91,1	3585	88,7
Ամբողջ թուրքիայում	2006	100,0	4041	100,0

*) *Stb u "Istatistik yillığı", 1934-1935, s. 607-608.*

Այդ թվականների վարչական բաժանման համաձայն, առավել քրդաբնակ վիլայեթների խմբի մեջ մտնում էին՝ Ադրը, Հաքյարին, Բիթլիսը (Մուշ), Սդերդը, Դիարբեքիրը, Մարդինը, Ուրֆան: Խումբը կազմում էր թուրքիայի տարածության 16, բնակչության՝ 17%-ը: Առավել թուրքաբնակ վիլայեթների խմբի մեջ մտնում էին Կարսը, Էրզրումը, Էլազըղը, Մալաթիան, Անթեբը: Դերսիսը և մի քանի այլ քր-

դարձակ ենթաշրջաններ ևս մտնում էին այս խմբի մեջ, քանի որ առանձնացված տվյալներ չեն եղել: Խումբը կազմում էր Թուրքիայի տարածության 14, բնակչության՝ 11%-ը:

Տարբերությունը մի կողմից արևմտյան և արևելյան վիլայեթների միջև, մյուս կողմից՝ արևելյան վիլայեթների ներսում՝ կրկնվում էր մասնախապես առկա ճանապարհների վերանորոգման գործում, ինչպես ցույց է տալիս աղյուսակը:

Ճանապարհաշինարարության մասն ընթացքի մեջ մեծ դեր էր խաղում մասնա, որ ճանապարհաշինարարությունը պետք է լուծվեր հիմնականում տեղական միջոցների հաշվին, իսկ տեղական միջոցներն արևելյան վիլայեթներում սահմանափակ էին:

Պետական բյուջեից կատարված հատկացումները (11,4 մլն լիրա) կազմում էին ճանապարհաշինարարության համար կատարված ծախսումների (60,8 մլն լիրա) հազիվ 19 %-ը ²⁰, որի մեջ առյուծի բաժինն ընկնում էր արևմտյան վիլայեթներին: Թուրքական վիճակագրական տարեգիրքը, ըստ վիլայեթների, տվյալներ տալիս է միայն 1928 և 1929 թթ. համար: Այդ տվյալների համաձայն, պետական բյուջեից երկու տարվա ընթացքում կատարված հատկացումներից միայն 8,3%-ն էր բաժին ընկնում արևելյան վիլայեթներին, այդ թվում՝ 2,3%-ը գերազանցապես քրդաբնակ, իսկ մնացյալ 6%-ը առավել քուրքաբնակ վիլայեթներին ²¹:

Փաստերը ցույց են տալիս, որ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, և նրան հաջորդող տասնամյակում, ճանապարհների բարեկարգման գործն արևելյան վիլայեթներում ընդամենում էր խիստ դանդաղ: Օրինակ, 1942 թ. տվյալներով, եթե հաշվի չառնենք սալյուղիները, արևելյան վիլայեթներից և ոչ մեկին չհաջողվեց իր խճուղային ճանապարհներով հասնել Կարսի մակարդակին, որն անցյալում եղել էր ցարական Ռուսաստանի կազմում, և խճուղային ճանապարհների խիտ ցանցով օժտվելու բախտին արժանացել: 1942 թ. Կարսի վիլայեթում ավելի շատ խճուղային ճանապարհներ կային (865 կմ), քան առավել քրդաբնակ վիլայեթների խմբում՝ ամբողջությամբ վերցրած (619 կմ): Ինչ վերաբերում էր որակական ցուցանիշներին, Կարսում լավ վիճակում էին գտնվում խճուղային ճանապարհների 83%-ը, իսկ վերոհիշյալ վիլայեթների խմբում՝ 22%-ը ²²:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՏԱՎԱՐԱՑՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կառավարող շրջանները վարում էին տնտեսության միլիտարիզացման կուրս: Պետական հատկացումների մի կարևոր մասը կլանում էր բանակը: Օրինակ՝ ապարատի կարիքների համար ծախսված գումարը կազմեց բյուջեի հատկացումների 58%-ը²³: Մինչդեռ պատերազմի նախօրյակին այդ ծախսումները համեմատաբար քիչ էին: Օրինակ՝ 1938-1939 ֆինանսական տարում՝ 36%-ը²⁴:

Պատերազմի տարիներին և՛ արևելյան վիլայեթների, և՛ ամբողջ Թուրքիայի զարգացման հարցերը կորցրեցին իրենց նշանակությունը, բացառությամբ երկաթուղային և խճուղային շինարարության, որոնք, կապված լինելով կառավարող շրջանների ռազմաստրատեգիական պլանների հետ, ընդհակառակը՝ ավելի մեծ նշանակություն ստացան:

Սակայն ռազմական ծախսերը կլանում էին ֆինանսական միջոցների մեծ մասը՝ հնարավորություն չտալով լուծել նույնիսկ այդ էարցերը: Պատերազմի տարիներին երկաթուղային շինարարությունը քեև չդադարեց, սակայն խիստ դանդաղեց²⁵: Դա մասնավորապես նկատվեց 1941-1945 թթ. ընթացքում: Այդ հինգ տարիների ընթացքում կառուցվեցին ընդամենը 138 կմ երկաթուղային երկաթուղիներ, տարեկան միջին հաշվով՝ 28 կմ, կամ հինգ անգամ քիչ, քան նախորդ հնգամյակում²⁶: Երկաթուղային շինարարության դանդաղ տեմպերի հետևանքով, չնայած այդ երկաթուղիները համարյա ամբողջովին կառուցվել էին արևելյան վիլայեթներում (115կմ), կառավարող շրջաններին չհաջողվեց երկաթուղու մեկ թևը հասցնել մինչև Իրանի, երկրորդ թևը՝ Իրաքի սահմանը, քեև նրանց

շինարարությունը դարձյալ նախատեսված էր ստրատեգիական նկատառումներով²⁷:

Նույնը կարելի է ասել խճուղային ճանապարհների շինարարության մասին: Ինչպես նշում է թուրք տնտեսագետ Ջիլլովը, կառավարող շրջանները պատերազմի ընթացքում ճանապարհներով զբաղվելու կարիքն զգացին, և թեև ստրատեգիական տեսակետից մեծ նշանակություն ունեցող շրջաններում ու Թրակիայում ծավալվեցին ճանապարհաշինարարական աշխատանքներ, սակայն, ֆինանսական դժվարությունների հետևանքով, մորից հնարավոր չեղավ լուծել հարցը²⁸:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան պահեց մեկ միլիոնանոց բանակ: 1940 թ. ընդունված «Ազգային պաշտպանության օրենքը» սահմանում էր աշխատավոր զանգվածների, մասնավորապես գյուղացիության հարկադրական աշխատանք՝ ճանապարհաշինարարության մեջ, հանքերում, կալվածատիրական և կուլակային տնտեսություններում: 1942 թ. ընդունվեց այսպես կոչված «Ունևորության հարկ»-ի օրենք (Varlık vergisi), ըստ որի, իբր, երկրի ֆինանսական դժվարությունները վերացնելու համար բացառիկ հարկ էր գանձվելու խոշոր կալվածատերերից, առևտրականներից և ունևոր այլ խավերից: Իրականում այն ուղղված էր ոչ թուրքերի դեմ, անկախ նրանց նյութական վիճակից: Հարկերն այնքան մեծ չափերի էին հասել, որ շատ հայեր, հույներ, հրեաներ ստիպված եղան վաճառել իրենց ամբողջ ունեցվածքը: Շատերը, չկարողանալով վճարել սահմանված հարկը, ստիպված եղան այն հատուցել աշխատանքային ճամբարներում՝ աշխատելով խճուղիների շինարարության և երկաթուղիների վերանորոգման բնագավառում՝ անտանելի ծանր պայմաններում, առողջությունն ու կյանքը կորցնելու գնով:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (1945-1960 թթ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բազմակուսակցական կառավարման անցնելն ինքնին ավելացրեց կառավարող շրջանների շահագրգռվածությունը դեպի արևելյան վիլայեթները: Ժողովրդա-Հանրապետական կուսակցությունը, որը Հանրապետություն հռչակվելուց հետո իր ձեռքին էր պահում իշխանությունը, ամբողջովին կորցրել էր իր հեղինակությունը ժողովրդի մեջ: 1948 թվականին դեռևս չէին վերացել Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տնտեսության ռազմականացման պատճառած տնտեսական և ֆինանսական դժվարությունները: Մակայն «Մարշալի պլանի» շրջանակներում ԱՄՆ-ի հետ կնքած պայմանագրով ձեռք բերվեց «տնտեսական օգնություն» ստանալու հնարավորություն: Կուսակցության շատ հայտանի գործիչներ, ուղևորություններ կատարելով արևելյան վիլայեթներում, գտան, որ դրանք գտնվում են խիստ հետամնաց վիճակում և այդ հետամնացությունից դուրս գալու համար անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռնարկել. արագացնել ճանապարհաշինարարությունը, ընդարձակել դպրոցական ցանցը, հիմնել մի քանի հիվանդանոցներ և այլն: Այդ նույն թվականին արևմտյան վիլայեթներ աքսորված քրդերին արտոնվեց վերադառնալ իրենց բնակավայրերը:

Ժողովրդա-Հանրապետական կուսակցության կառավարությունը «հաշվի առնելով» իր անդամների առաջարկները՝ մշակեց եռամյա ծրագիր, որը գործադրության մեջ մտավ 1949 թվականից: Այդ ծրագրի համաձայն, սովորական հատկացումներից բացի, արևելյան վիլայեթներին տրվելու էին հատուկ հատկացումներ: Մակայն դրանք դեռևս հեռու էին մեծ գումարներ լինելուց: 1949 թ. հատուկ հատկացումները կազմեցին 10 մլն լիրա, 1950 թ.՝ 13 մլն լիրա և նախատեսվում էր 1951 թ. հատուկ հատկացումները բարձ-

րացնել 50 մլն լիրայի²⁹։ Այդ ծրագիրը ներկայացվում էր որպես արևելյան վիլայեթների զարգացման պլան։ Մասնուր հաճախակի հաղորդումներ էր տալիս արևելյան վիլայեթներում զարգացման պլանով նախատեսված շինարարության սկսման, ընթացքի և շահագործման հանձնելու մասին։ Ժողովրդա-Հանրապետական կուսակցությունը 25 տարի անհրաժեշտ հոգատարություն չցուցաբերելուց հետո, առաջին հերթին, ճանապարհաշինարարության, ապա դպրոցաշինարարության ժամանակավոր արագացումը ներկայացրեց որպես կառավարության բացառիկ հոգատարություն արևելյան վիլայեթների նկատմամբ, չնայած նույն աշխատանքները կատարվել էին նաև արևմտյան վիլայեթներում՝ առանց «հատուկ պլանի» և այդքան մեծ աղմուկի։

Կառավարությունը 1949 թ. երաշտի հետևանքով առաջացած սերմացուի, հացահատիկի, անասնակերի անբավարարությունը մեղմացնելու նպատակով գյուղացիությանը տրամադրեց որոշ օգնություն, որի մասին հաճախակի հաղորդումներ տրվեցին մամուլում։ Իրականում այդ օգնությունից հիմնականում օգտվեց գյուղացիական վերնախավը³⁰։

Արևելյան վիլայեթների բնակչության համակրանքը ձեռք բերելու նպատակով կատարված քարոզչությունը չօգնեց Ժողովրդա-Հանրապետական կուսակցությանը՝ վերստին գրավել իշխանությունը։ 1950 թ. ընտրությունների հետևանքով ստիպված եղավ իշխանությունը հանձնել նորակազմ Դեմոկրատական կուսակցությանը։

Անցնելով ընդդիմադիր դիրքերը՝ Ժողովրդա-Հանրապետական կուսակցությունը հանդես եկավ արևելյան վիլայեթների պաշտպանի դերում։ Կուսակցության անդամները մեջլիսում կամ մեջլիսից դուրս հայտարարություններ անելով, մամուլում հոդվածներ հրապարակելով՝ կառավարության ուշադրությունն էին հրավիրում արևելյան վիլայեթների չլուծված հարցերի վրա կամ մեղադրում կառավարությանը՝ արևելյան վիլայեթների նկատմամբ հոգա-

տարություն չդրսևորելու համար: Օրինակ՝ հայտնի քաղաքական և պետական գործիչ Նիհադ Էրիմը 1952 թ. գրում էր, որ Դեմոկրատական կուսակցության կառավարությունը վերցրել էր արևելյան վիլայեթների համար մախատեսված հատուկ հատկացումները և մույնիսկ կես առ կես չի կատարվել արևելյան վիլայեթների զարգացման պլանը ³¹, իսկ Թունջէլիի (Դերսիմ) պատգամավոր Արսլան Բոքան մեջլիսի մախագահության ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ Թունջէլիի վիլայեթում դեռևս ոչ մի լիցեյ չկա, որ վիլայեթի, մախապես արգելված գոտի հայտարարված և բնակչությունից դատարկված, ենթաշրջաններում արգելքը վերանալուց հետո վերստին բնակելի դարձած գյուղերից ոչ մեկում մախակրթարաններ չկան ³²: Մյուս կողմից փորձում էին արդարացնել անցյալում ունեցած իրենց անհոգատար վերաբերմունքը արևելյան վիլայեթների նկատմամբ՝ պատճառաբանելով, որ Առաջին համաշխարհայինի, ապա՝ անկախության պատերազմի, ավելի ուշ՝ քրդական ապստամբությունների պատճառած վնասները, համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները, Երկրորդ համաշխարհային պատերազմի թելադրած ռազմական ծախսերը հնարավորություն չեն տվել զբաղվելու արևելյան վիլայեթներով և, վերջապես, երբ հասել էր արևելյան վիլայեթներով զբաղվելու ժամանակը, հեռացվել են իշխանությունից ³³: Մի խոսքով, արևելյան վիլայեթների զարգացման հարցերի լուծված չմնալը բացատրում էին իշխանության փոխվելով: Այդ պատճառաբանությունները, բնականաբար, չեն արդարացնում Ժողովրդա-Հանրապետական կուսակցության քաղաքականությունը: Եթե մույնիսկ խնդրո առարկա դժվարությունների մեծ մասը հետևանք էր Ժողովրդա-Հանրապետական կուսակցության վարած քաղաքականության, ապա այստեղ հարցը ոչ թե նյութական միջոցների սահմանափակությանն է վերաբերում, այլ՝ նրա կատարումը աշխատավոր զանգվածների և ազգային փոքրամասնությունների հաշվին:

Արևելյան վիլայեթների շուրջ ծավալված միջկուսակցական պայքարի ընթացքում Ժողովրդա-Հանրապետական կուսակ-

ցության անդամները մեծ գայրությունով ընդունեցին Դեմոկրատական կուսակցության կողմից հանրապետականներին ուղղված մեղադրանքները՝ քրդերի դեմ գործադրված բռնությունների և արևելյան վիլայեթների նկատմամբ անհոգատար վերաբերմունքի համար: Հանրապետականները դարձել էին ընդդիմադիր կուսակցություն և փորձում էին ահաբեկել դեմոկրատականներին՝ քրդերի դեմ կատարված բռնությունների վերաբերյալ մեղադրանքները հայտարարելով որպես ազգային գիտակցությունից զուրկ, միայն քշմամուն վայել գրգռիչ քարոզչություն ²⁴: Ավելին, ոմանք, այդպես էին գտնում նաև Ժողովրդա-Հանրապետական կուսակցության անհոգատար վերաբերմունքը արևելյան վիլայեթների ²⁵ նկատմամբ: Ժողովրդա-Հանրապետական կուսակցությունը գրավում էր ընդիմադիր դիրք, և իշխանություններին միշտ մեղադրում արևելյան վիլայեթների նկատմամբ անհոգատար վերաբերմունքի համար: Դեմոկրատական կուսակցության օրգան «Ուլուս» թերթում տպագրվեցին հոդվածներ, որոնք մեղմ և փափկամկատ ձևով, առանց ընդգծելու խոստովանում էին Ժողովրդա-Հանրապետական կուսակցության՝ քրդերի նկատմամբ գործադրած բռնությունների և արևելյան վիլայեթների զարգացման վերաբերյալ վարած հետադիմական քաղաքականության մասին: Օրինակ՝ Մ.Մունուլլահ Արքսոյը գրում էր. «Արևելյան վիլայեթները դարեր շարունակ ունեցել են անփութություն մի ճակատագիր: Դա այն է, որ պետությունը, կառավարողները արևելյան վիլայեթներին մայել են որպես խորթ զավակի, այնտեղից վերցրել են իրենց վերցնելիքը, սակայն փոխարենը ոչինչ չեն տվել ²⁶, իսկ Էմրուլլահ Գյունեյը փափկամկատությամբ մեղադրում էր մայսնին իշխանություններին՝ ապստամբությունների կամ տարբեր անկարգությունների պատճառով խաղաղ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու համար: Նա թեև մեղադրում էր Շեյխ Սաիդին, իբրև անգլիացիներից ստացած փողերով ապստամբություն բարձրացնողի, սակայն նշում էր, որ դրանից տուժել է ոչ մի բանից անտեղյակ խեղճ ժողովուրդը»: Նա, անդրադառնալով այլ անկարգություններին, գրում է. «Օր է եղել, հայտնվել են մի քանի բանդիտներ, խաբաջ ²⁷ են վերցրել բոլոր գյուղերից, և վրդովվել է

ճնշված, չքավոր ժողովուրդը: Օր է եղել, մեկը կողոպտել է զանձատար կառքը Բիթլիսի ճանապարհում, կողոպտողը փախել է Սիրիա, բուն տառապանքը քաշել է անմեղ ժողովուրդը Թրակիայում³⁸: Երջանկությունից բաժին չի ստացել արևելյան վիլայեթների բնակչությունը³⁹»:

Դեմոկրատական կուսակցության գործիչները, քրդերին սիրաշահելու նպատակով, ճառերով և հողվածներով պախարակեցին Ժողովրդա-Հանրապետական կուսակցությանը՝ Դերսիմում և այլուր քրդերի դեմ գործադրած անմարդկային բռնությունների համար⁴⁰: Սակայն միջկուսակցական պայքարի այդ ձևը երկար չտևեց, քանի որ դա կարող էր պատճառ դառնալ ազգայնական լայն շրջանակների համակրությունը կորցնելուն, մանավանդ այդ բռնությունների համար մասամբ մեղավոր էր նաև մախկին վարչապետ Ջելալ Բայարը, որ ներկայումս քրդերին «պաշտպանող» նուրակազմ Դեմոկրատական կուսակցության մախսագահն էր:

Բնականաբար, Դեմոկրատական կուսակցությունը պրոպագանդում էր իր կատարած գործերը արևելյան վիլայեթներում և Ժողովրդա-Հանրապետական կուսակցությանը մեղադրում արևելյան վիլայեթների նկատմամբ տասնամյակներ շարունակ անփութ փարվելու համար: Ամեն մեկը մատնացույց էր անում իր արածը և ջանում մերկացնել մրցակցի ներկայացրած հաշվետվության սնանկությունը: Այսպիսով, արևելյան վիլայեթների զարգացման հարցը մնաց որպես միջկուսակցական պայքարի ունայն վիճարանություններից մեկը:

Իշխանությունը զբաղեցնող բուրժուա կալվածատիրական մի կուսակցության փոխարինումը մյուսով, իրականում արևելյան վիլայեթների սոցիալական և ազգային հարցերում ոչինչ չէր կարող փոխել:

Պարզվեց, որ Դեմոկրատական կուսակցության ազգային քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում Ժողովրդա-Հանրապետական կուսակցության ազգային քաղաքականությունից: Քրդերի իրավագուրկ վիճակը պահպանվեց նույնությամբ՝ չվերացավ ազգային ճնշումը, չդադարեցին հալածանքներն ազգային իրա-

վունքների համար պայքարողների դեմ: Պարզվեց նաև, որ Դեմոկրատական կուսակցությունը ունի նաև արևելյան վիլայեթների զարգացման հարցում և իր խտրականությունը բողարկելու համար առաջ քաշեց այն թեզը, թե իբր անհնար է պլան պատրաստել ամեն մի վիլայեթի համար, որ Թուրքիան անբաժանելի է, և պիտի զարգանա որպես ամբողջություն “:

Բոլոր այն դրդապատճառները, որոնք Ժողովրդա-Հանրապետական կուսակցությանը մղում էին ինչ-որ չափով զբաղվելու արևելյան վիլայեթներով, առկա էին նաև Դեմոկրատական կուսակցության կառավարման ժամանակ: Ավելին, դրանք ավելի կենսունակ էին դարձել, և առաջացել էին նոր դրդապատճառներ, որոնցից մեկը բազմակուսակցական կյանքին անցնելն էր: Անհրաժեշտ էր ինչ-որ գործ կատարել արևելյան վիլայեթներում և այն պրոպագանդել կուսակցության օգտին: Չնայած արևելյան վիլայեթներում կատարված աշխատանքը արևմտյան վիլայեթների համեմատությամբ խիստ նվազ էր, իրագործվում էր հապաղումով և շատ հեռու էր պահանջմունքները բավարարելուց, այնուամենայնիվ այդ աշխատանքների շնորհիվ արևելյան վիլայեթներում հայտնվեցին այնպիսի նորություններ, որոնց մասին անցյալում մտածելն անգամ կարող էր երազ թվալ: Օրինակ, երկաթուղին մուտք գործեց Մալաթիա՝ 1931 թ., Էլազըլ՝ 1934 թ., Դիարբեքիր՝ 1935 թ., Էրզինջան՝ 1938 թ., Էրզրում՝ 1939 թ., Գարզան և Քուրթալան՝ 1944 թ., Բալու՝ 1946 թ., Անքեր՝ 1953 թ., Մուշ՝ 1955 թ.: Նշանակալից բարելավումներ տեղի ունեցան խճուղային ցանցում: Քաղաքներում և քաղաքներից դուրս հետզհետե ավելի շատ սկսեցին երևալ մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ: Էլեկտրականությունը մուտք գործեց շատ թե քիչ հայտնի քաղաքները և այլն:

Հակառակ այս համեմատաբար նպաստավոր պայմանների, մեծ փոփոխություններ չառաջացան արևելյան վիլայեթների սոցիալ-տնտեսական կյանքում, քանի որ Առաջին համաշխարհա-

յին պատերազմի նախօրյակին իրենց տնտեսական զարգացման մակարդակով դրանք զիջում էին երկրի մնացած արևմտյան շրջաններին: Այսինքն՝ դեռ չէին դարձանվել այն ավերները, որոնք առաջացել էին համիդյան բռնակալության, երիտթուրքերի ազգաջինջ բաղաբականության, քեմալականների կողմից հայերի, քրդերի և ոչ բուրք ժողովուրդների դեմ գործադրված բռնությունների հետևանքով:

Արևելյան վիլայեթների պատմությանը և տնտեսությանը մվիրված մի շարք ուսումնասիրություններում, մասնավորապես պատմաբաններ Ե.Ֆ.Լուշուվեյտի և Դ.Ս.Ջավրիևի աշխատություններում, ըստ արժանավայն ուշադրության է առնված այդ հանգամանքը ⁴²: Ահա մի քանի փաստեր, որոնք վերաբերում են արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի տարբեր կողմերին:

Արևելյան վիլայեթներում բնակչության խտությունը համեմատաբար ցածր էր՝ հակառակ բնակչության աճի բարձր տեմպերին: 1960 թ. տվյալներով, արևելյան վիլայեթների բնակչությունը կազմում էր Թուրքիայի բնակչության 18,6%-ը, չնայած նրան բաժին էր ընկնում Թուրքիայի տարածության 28,7%-ը: Տարածության և բնակչության բանակի այդ անհամապատասխանությունն ավելի սուր բնույթ էր կրում առավել քրդաբնակ վիլայեթների խմբում: Տարածության և բնակչության տոկոսներն են՝ առավել թուրքաբնակ վիլայեթների խմբում՝ 12,7 և 10,2, իսկ առավել քրդաբնակ վիլայեթների խմբում՝ 16 և 8,3:

Թուրք աշխարհագետները, տնտեսագետները, սոցիոլոգները փորձում են այդ տարբերությունները բացատրել աշխարհագրական պայմանների տարբերություններով: Այդ տեսակետն ինչ-որ չափով պարունակում է ճշմարտության հատիկ, սակայն չի պարզաբանում ամեն ինչ: Անկասկած, խտության տարբերությունները մեծ պայմաններում, մասնավորապես տնտեսական զարգացման մույն մակարդակում, հեշտությամբ կարելի է վերագրել աշխարհագրական պայմանների տարբերությանը: Եթե մույնիսկ հաշվի չառնենք, որ այս շրջանները միմյանցից տարբերվում են ի-

րենց զարգացման մակարդակով, ապա գիտական մոլորություն կլինի անտեսել կոտորածների և տարբեր բռնությունների հետևանքով խտության նվազումը, որն առանձին շրջաններում հասնում էր ամայացման: Այդ տեսակետից կարևոր չէ, թե այդ շրջանները նախկինում զարգացման ինչպիսի մակարդակի վրա էին գտնվում՝ ունեին համեմատաբար զարգացած գյուղատնտեսությամբ, առևտրով, արհեստներով, նույնիսկ՝ արդյունաբերությամբ զբաղվող հայտնի վայրեր՝ ինչպես Խարբերդը, Սասունը: Բոլոր դեպքերում՝ ամայացումը հետ գնալու անվիճելի նշան էր:

1891 թ., ըստ Վիտալ Քինեի ներկայացրած մի աղյուսակի, Խարբերդի դաշտի առավել հայտնի 15 գյուղերի ընդհանուր բնակչության թիվը 22 990 էր, այդ թվում՝ հայեր՝ 16 090, մահմեդականներ՝ 6 900 ⁴³: Եթե նույնիսկ հաշվի չառնենք այն հանգամանքը, որ այդ գյուղերում ավելի մեծ թվով հայեր էին բնակվում, քան ներկայացված է Քինեի աղյուսակում ⁴⁴, ապա դարձյալ ուշադրությունից չի վրիպում բնակչության նվազումը հայերի բնաջնջման հետևանքով: 1950 թվականին նույն 15 գյուղերում բնակվում էին 10 634 մարդ ⁴⁵, որը կազմում էր 1890 թ. (60 տարի առաջ) բնակչության հազիվ 46 %-ը:

Սասուն բնակավայրի կապակցությամբ դիմենք արևելյան վիլայեթների պատմական և տնտեսական աշխարհագրությանը քաջածանոթ Հյուսեին Սարաջօղլու վկայությանը: Սարաջօղլուն տուրք տալով ազգայնականությանը՝ անտեսում է Սասնա լեռնաշխարհի դատարկվելը հայությունից, ապա փորձում արդարացնել քրդերի դեմ գործադրած բռնությունները՝ այնուամենայնիվ թաքցնելով ստեղծված վիճակը: Նա գրում է. «Հանրապետության շրջանում էլ այս վայրերի բնակչությունը չի ուզել ենթարկվել ռասիականացված կյանքին: Նրանց ենթարկելու համար, մղված պայքարի ընթացքում, նրանցից շատերը աքսորվել են, որի հետևանքով արդեն մոտ քան բնակչությունը (հեղինակն ակնարկում է աշխարհագրական անմպաստ պայմանների հետևանքով բնակչության մոսթրությանը - Հ.Գ.) կրկնակի մոսթրացել է: Այսպիսով, այս շրջանը ներկայումս գտնվում է խիստ ամառի վիճակում, որոշ գյուղերում բնակչու-

թյունն այնքան սակավաթիվ է, որ կարելի է ասել՝ համարյա բնակչությունն չկա»⁴⁶:

Նույն երևույթը նկատվում է մահ մի շարք բաղադրներում: Հետաքրքիր է Հաբյարիի վիճակը: Ըստ թուրքական հանրագիտարանի, «50-60 տարի առաջ 20 խանութներից բաղկացած իր փոքրիկ շուկայով և 4 600 բնակչությամբ»⁴⁷ այն իսկական մի գյուղաքաղաք էր: Ներկայումս 500-600 բնակիչ ունեցող մի գյուղ է: Սակայն Բաղապետության սահմանների մեջ մտցված 8 թաղերի (գյուղերի - Հ.Գ.) շնորհիվ, ըստ 1965 թվականի վիճակագրության, 6 129 մարդ է»⁴⁸: Կան հետաքրքիր փաստեր մահ այլ բաղադրների մասին: Օրինակ՝ Սարաջօղլու վկայությամբ «Խնուսն ու Կարաշոքամը անցյալում մեծ և հարուստ գյուղաքաղաքներ էին, ներկայումս այդպես չեն»⁴⁹: Իրականում փոքր թիվ չեն կազմում այն բաղադրներն ու գյուղաքաղաքները, որոնք 1960 թվականին ունեին ավելի քիչ բնակչություն⁵⁰, քան Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, ինչպես Վանը, որը նախապատերազմյան մոտավորապես 40 հազար բնակչության⁵¹ փոխարեն 1960 թվականին ուներ 22 043 բնակիչ, Բիթլիսը մոտավորապես 40 հազարի⁵² փոխարեն՝ 16 636, Մուշը 25-30 հազարի⁵³ փոխարեն՝ 11 965, Ակնը (նոր անունով Քեմալիյե) 10 հազարի⁵⁴ փոխարեն՝ 2 652, Բակուն 8-9 հազարի⁵⁵ փոխարեն՝ 3 995, Արաբկիրը 20 հազարի⁵⁶ փոխարեն՝ 6 865 և այլն:

Արևելյան վիլայեթների մեծ մասը գյուղացիությամբ, արհեստներով, արդյունաբերությամբ և առևտրով զիջում էին Առաջին Համաշխարհային պատերազմի վիճակին: Նախընտրաբար դիմում ենք Սարաջօղլու վկայությանը, որը ներկայացնելով Խարբերդում մետաքսյա գործվածքների արտադրությունը՝ անուղղակիորեն պատկերացում է տալիս մահ առևտրի և գյուղատնտեսության ճյուղերից մեկի՝ շերամաբուծության մասին. «Նախքան Առաջին համաշխարհային պատերազմը, այդ շրջանում տարածված էր մետաքսագործությունը, ստացված մետաքսը գործում էին Խարբերդում և Էլազըղում: Արտադրած մետաքսյա կերպասները, վարագույրները, կտավները ամենուրեք մեծ ընդունելություն էին գտնում: Ներկայումս այստեղ երկաթագործության, կլայեկագործության

ման սովորական և մախնական արհեստներից բացի, ուրիշ ոչինչ չի երևում»⁵⁷:

Արհեստների և արդյունաբերության վերացման, երկրագործության զգալի չափով քայքայման հետևանքով անասնապահությունը մնում է որպես տնտեսության գերիշխող ճյուղը: Տիրող սոցիալ-տնտեսական պայմանները չնպաստեցին երկրագործության վերականգնմանը: Հայտնի են դեպքեր, որոնք ցույց են տալիս, որ անասնապահությունից մեծ շահ ունեցող ունևոր խավերը, երկրագործությամբ հայտնի դաշտերն իրենց հոտերի համար որպես արոտավայր օգտագործելու մպատակով, բացահայտ բշմամանքով խռնդոտում էին երկրագործության զարգացմանը:

Օրինակ՝ Մուշի դաշտի տարածությունը ենթադրում են 2,5 մլն դյոնյում⁵⁸: Դաշտը շրջապատված էր 80 գյուղերով⁵⁹, որոնք հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ: Երկրագործությունը կատարվում էր սեփական կարիքները մասամբ բարելավելու չափով: Ըստ տեխնիկական գյուղատնտեսության վարչության ենթադրությունների, 1960 թվականին 350 հազար դյոնյումը հազիվ առանձնացվեց երկրագործության համար, մնացած, ավելի քան, 2 մլն դյոնյում օգտագործվեց որպես արոտավայր:

Մուշի դաշտում անասնապահությունը կատարվում էր էքստենսիվ և ամենամախնական եղանակներով, օրինակ, չէին զբաղվում անասնակների մշակությամբ, արդյունավետ ձևով չէին օգտագործում խոտերը, հսկայական խոտավետ տարածությունները չէին բավարարում անասնապահության պահանջները: Զգացվում էր խիստ «սակավահողություն»: Երկրագործության ծավալումը ավելի էր սահմանափակում «արոտավայրերի» տարածությունը: Այս պատճառով կրակի էր տրվում այն երկրագործների հումձքը և ջարդվում արտադրության միջոցները, որոնք փորձում էին իրենց հողը մշակել արդիական եղանակներով: Ունևոր անասնատերերի կողմից կատարված այդ բռնությունների հետևանքով գյուղացիները այլ ելք չգտնելով, ստիպված էին իրենց ապրուստը հայթհայթել անասնապահությամբ⁶⁰:

Ամփոփելով, կարելի է ասել, որ ինչպես խոստովանում է

Սարաջօղլուն, «ոչ ոք չի կարող պնդել, թե արևելյան վիլայեթները մի շարք կողմերով հասել են իրենց նախկին վիճակին» 4:

Դեռևս լիովին չէին վերացվել թուրքական իշխանությունների՝ անցյալում վարած քաղաքականության հետևանքները, և համարապետական շրջաններում էլ արևելյան վիլայեթները չէին արժանացել հոգատարության, ուստի նրանք այդպես էլ մնացին որպես Թուրքիայի առավել թույլ զարգացած շրջան: N3 աղյուսակում տրվում են արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի 1960 թվականի դեմոգրաֆիական-տնտեսական-մշակութային վիճակի առանձին կողմերի վերաբերյալ տվյալներ, հիմնականում ամբողջ Թուրքիայի համեմատությամբ, տոկոսներով:

Այդ տոկոսները համեմատության մեջ դնելով շրջանի տարածության և բնակչության տոկոսների հետ, կարելի է տեսնել, որ արևելյան վիլայեթները գտնվում էին անմխիթար վիճակում:

Աղյուսակ 3

ԹՈՒՐԻԿԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՅՅԱԼ

ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՑՅԱԼ

ՄԻ ԶԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

I

Ամբողջ Թուրքիայի համեմատությամբ՝ տոկոսներով (1960 թ.)

	Արևելյան վիլայեթներում			Թուրքիայի մնացյալ մասում	Ամբողջ Թուրքիայում
	առավել քրդաբնակ վիլայեթների խմբում	առավել թուրքաբնակ վիլայեթների խմբում	ընդամենը		
1*. Տարածություն	16,98	11,75	28,73	71,27	100
2*. Բնակչություն	8,83	9,71	18,55	81,45	100
3*. Քաղաքային բնակչություն	6,36	8,03	14,39	85,61	100
4*. Աշխատավայրեր	3,06	6,06	9,12	90,88	100
5*. Աշակերտներ	4,81	8,39	13,20	86,80	100
6*. Բժիշկներ	2,68	3,92	6,60	93,40	100
7*. Ցամաքային ճանապարհներ	15,13	11,38	26,52	73,48	100

Շրջանի բնակչության հարաբերությամբ՝ տոկոսներով

8*. Հողագուրկներ	42	31	36	29	31
9*. Անգրագետներ	76	63	69	47	51

1*. "İstatistik Yıllığı", 1960-62, s. 55.

2*. Նույն տեղում:

3*. Քաղաք համարելով վիլայեթների և կազանների վարչական կենտրոնները: Նույն տեղում, էջ 56-59:

4*. Աշխատանքի օրենքին ենթակա աշխատավայրերը: Նույն տեղում, էջ 337-348:

5*. Նախնական և միջնակարգ (համրակրթական և մասնագիտական) դպրոցների աշակերտությունը: Նույն տեղում, էջ 145-168:

6*. Նույն տեղում, էջ 125:

7*. Այսպես կոչված «պետական» և «նահանգային» ճանապարհները, որոնք հիմնականում մեծ ու փոքր վարչական կենտրոնները միացնում են միմյանց: Նույն տեղում, էջ 452-456:

8*. Գյուղական վայրերում գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանիքների հարաբերությամբ հողագուրկների տոկոսները, Թուրքիայի գյուղական գործերի մինիստրության կողմից ցարդ հրապարակված 43 վիլայեթների վերաբերյալ տվյալների համաձայն: Տե՛ս Beşikçi, İsmail, Doğu Anadolunun düzeni, Ankara Cad., 1969, s. 79;

"Cumhuriyet" 13Eylül - 1Ekim 1969; Erol Zeytinoglu., Türkiye'nin iktisadi bünyesi dersleri, İstanbul, 1969, s. 65.

9*. Վեց և ավելի տարիք ունեցող բնակչության մեջ անգրագետների տոկոսները (1965 թ.): Տե՛ս, Beşikçi, İsmail, նշվ. աշխ., էջ 116: "Cumhuriyet", նույն տեղում:

ԾՆԹ. - Հաշվումները կատարված են մեր կողմից: Առավել քրդաբնակ վիլայեթների խմբի մեջ մտցված են տասը վիլայեթներ, որոնցից յուրաքանչյուրում 1960 թ. տվյալներով բուրբերենը որպես մայրենի լեզու ընդունողները բնակչության 50%-ից էլ քիչ են՝ Մարդին (19%), Սիիրդ (13%), Հաքյարի (19%), Բինգյոլ (32%), Դիարբեքիր (33%), Բիթլիս (34%), Ադրը (39%), Մուշ (47%), Վան (49%), Ուրֆա (49%): Պետք է հաշվի առնել, որ մարդահամարի ժամանակ բուրբերենը, որպես իրենց մայրենի լեզու ներկայացնում են մահ ոչ

թուրք ու ոչ բազմամարդ շրջաններում: Վարչական ապարատի ու բանակայինների կենտրոնացումը արհեստականորեն բարձրացնում է թուրքալեզուների տոկոսը, ուստի որպես 11-րդ վիլայեթ, այդ խմբի մեջ մտցվեց մակ թունջեյին (Դերսիմը), թեև ըստ պաշտոնական տվյալների, թուրքերենը որպես մայրենի լեզու ընդունողները կազմում են մեծամասնություն (57%): Առավել թուրքաբնակ վիլայեթների խմբի մեջ մտնում են 7 վիլայեթներ, որոնցից յուրաքանչյուրում թուրքալեզուները ավելի մեծ տոկոս են կազմում՝ Էլազըղ (60%), Մալաթիա (65%), Էրզինջան (77%), Կարս (79%), Էրզրում (83%), Ադրյաան (84%), Անթեր (84%): Մայրենի լեզվի վերաբերյալ տվյալները որքան էլ առանձին-առանձին վիճելի լինեն և հեռու՝ ազգային կազմի մասին ճիշտ պատկերացում տալուց, միանգամայն իրավացիորեն ցույց են տալիս, որ արևելյան վիլայեթների առաջին խումբը ամբողջությամբ վերցրած շատ ավելի քիչ է բնակեցված թուրքերով, քան՝ երկրորդը: Ոչ թուրքերի մեծամասնությունը քրդեր են: Ըստ պաշտոնական տվյալների, առաջին խմբի վիլայեթներից յուրաքանչյուրում քրդերենը որպես մայրենի լեզու ընդունողները կազմում են բնակչության մեծամասնությունը, բացառությամբ՝ Թունջեյի (որին անդրադարձանք վերևում) և Ուրֆայի, որտեղ քրդերը արաբների հետ ավելի մեծ քիվ են կազմում, քան՝ թուրքերը: Մամուլում և գրականության մեջ հրապարակված տվյալները զերծ չեն առանձին սխալներից: Տե՛ս և հմմտ. Beşikçi, İsmail, նշվ. աշխ., էջ 236-237, “Yönetim”, 18. 12, 1964; “Cumhuriyet”, 1. 4. 1968; “Forum”, 15. 1. 1968, s. 20-21; “Forum”, 15. 2. 1968.

Այդուսակը միաժամանակ ցույց է տալիս, որ արևելյան վիլայեթների առավել քրդաբնակ շրջանում տարածության կամ բնակչության դեմոգրաֆիական-մշակութային վիճակի առանձին կողմերի միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունը շատ մեծ է:

Պարզ է, որ այդ անհամապատասխանությունները նույնը չեն ուսումնասիրվող երևույթներից յուրաքանչյուրի համար: Այդ ուսումնասիրվող երևույթները տարբերվում են միմյանցից՝ ելնելով տնտեսական զարգացման մակարդակի հետ ունեցած կապի և հարաբերական ինքնուրույնության աստիճանից:

Այդ տեսակետից կարելի է առանձնացնել ուսումնասիրվող հատկանիշներից մի քանիսը՝ տարածությունը, բնակչությունը, քաղաքային բնակչությունը, աշխատանքի օրերնքին ենթակա ձեռնարկությունների քանակը, որոնցից ամեն մեկը, բերված կարգով, մալտրդի համեմատությամբ ավելի սերտ է առնչվում տնտեսական զարգացման մակարդակին և հանդիսանում է տնտեսական զարգացման մակարդակի հավաստի ու բարձրակարգ չափանիշ: Այդ պատճառով, հիշված կարգով, մի հատկանիշից մյուսին անցնելիս, արևելյան վիլայեթների տոկոսների աստիճանական նվազումը (տարածություն՝ 28,7%, բնակչություն՝ 18,6%, քաղաքային բնակչություն՝ 14,4%, աշխատավայրեր՝ 9,1%) կարելի է դիտել որպես արևելյան վիլայեթների հետամնացության պրոֆիլային արտահայտություն: Եթե մեր ձեռքի տակ ունենայինք տվյալներ ըստ վիլայեթների արդյունաբերական համախառն արտադրանքի, ապա կտեսնեինք, որ արևելյան վիլայեթների աշխատավայրերում արտադրվում է համախառն արտադրանքի փոքր տոկոսը, և արևելյան վիլայեթների դիմագծի մասին մեր պատկերացումը կլիներ ավելի ամբողջական:

Թեև թուրք տնտեսագետ Գյուլբեն Կազգանը, օգտվելով Աբիլլա Չելիքյովի մի աշխատությունից, գտել է, որ 17 արևելյան վիլայեթներում արդյունաբերության մեջ աշխատող մեկ շնչին ընկնող համախառն արտադրանքը շնչին չափով (4%) բարձր է Թուրքիայի մնացյալ մասից, սակայն, ինչպես ինքն է ընդգծում, այդ բարձրությունը հետևանք է նավթի և ստորերկրյա այլ հարստությունների տեր մի քանի վիլայեթներում (Արդվին, Մալաթիա, մասնավորապես Էլազըղ և Սդերդ) արդյունաբերության մեջ աշխատող մեկ շնչին ընկնող համախառն արտադրանքի զգալիորեն բարձր լինելուն: Արդյունահանության մեջ համախառն արտադրանքի արժեքի մեծությունը շրջանի տնտեսական զարգացման մակարդակի արտահայտությունը չէր, և մեծ նշանակություն չունեին նրա հետագա զարգացման համար, քանի որ արդյունահանող այդ ձեռնարկությունները պատկանում էին դրսից եկած կապիտալիստներին (պետական կամ մասնավոր), որոնք էլ յուրացնում էին արդյունահանու-

քյան մեջ ստեղծված հավելյալ արժեքը ⁶²:

Իրականում, աշխատանքի օրենքին ենթակա ձեռնարկությունների 1960 թվականի վերաբերյալ տվյալները, որոնք լայնորեն օգտագործվեցին ուսումնասիրողների կողմից, ցույց են տալիս ո՛չ միայն արդյունաբերական, այլև՝ 4 կամ ավելի բանվոր ու սևագործ աշխատող ունեցող ձեռնարկությունների քանակը: Համենայն դեպս, այդ տվյալները որոշ գաղափար են տալիս տնտեսական կյանքի ընդհանուր վիճակի մասին:

Արևելյան վիլայեթներում ձեռնարկությունները համեմատաբար քիչ էին՝ գոյություն ունեցողների մեծ մասը կրում էր ժամանակավոր բնույթ, առավել քրդաբնակ արևելյան վիլայեթների խմբում՝ 47%-ը, առավել թուրքաբնակ վիլայեթներում՝ 35%-ը, Թուրքիայի մնացյալ մասում՝ 22%-ը ⁶³: Աշխատավայրերի քանակի ավելի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ արևելյան վիլայեթներում արդյունաբերության զարգացման համար կան լուրջ դժվարություններ: Տնայնագործության, մանր ապրանքային արտադրության, մանուֆակտուրաների, մանր և միջակ արդյունաբերական ձեռնարկությունների անհետացումն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, դժվարացել է նրանց անցումն ավելի բարձր աստիճանների: Արևելյան վիլայեթները մեծ մասամբ կորցրել էին արդյունաբերության զարգացման համար պատրաստի սուղիալ-տնտեսական մախաղըրյալները: Այդ պատճառով զարգացման հիմնական ուղին եղել է համեմատաբար մեծ կապիտալի, մասնավորապես դրսից եկող սյետական և մասնավոր, շնորհիվ: Արևելյան վիլայեթների բուրժուազիայի բուլության արտահայտություններից էր այն, որ ձեռնարկությունների համեմատաբար մեծ մասը պատկանում էր պետական սեկտորին, առավել քրդական վիլայեթներում՝ 32%-ը, արևելյան վիլայեթների երկրորդ խմբում՝ 21%-ը, Թուրքիայի մնացյալ մասում՝ 14%-ը ⁶⁴, այն դեպքում, երբ տարածության և բնակչության համեմատությամբ, արևելյան վիլայեթներում էր գտնվում պետական ձեռնարկությունների փոքր մասը (առավել քրդաբնակ վիլայեթներում՝ 6,5%-ը, արևելյան վիլայեթների երկրորդ խմբում՝ 8,5%-ը ⁶⁵): Այդ տեսակետից հետաքրքիր է այն

հանգամանքը, որ առավել քրդաբնակ վիլայեթների խմբում, այսինքն՝ առավել հետամնաց շրջանում, ձեռնարկությունների ավելի մեծ խումբը՝ 88%-ը՝ «խոշոր» ձեռնարկություններ էին (10 և ավելի աշխատող ունեցող), այն դեպքում, երբ արևելյան վիլայեթների երկրորդ խմբում և Թուրքիայի մնացյալ մասում մնան աշխատավայրերը կազմում էին 65-66% ⁶⁶։ Իրականում «միջակ» ձեռնարկություններ (4-9 աշխատող ունեցող) կային առավել քրդական վիլայեթներից միայն Դիարբեքլիում (103 ձեռնարկություն) և առավել բուրքաբնակ արևելյան վիլայեթներից երեքում՝ Մալաթիա՝ 166, Անքեր՝ 192, Էրզրում՝ 257։ Մնացյալ 14 արևելյան վիլայեթներից ոչ մեկում չկային 4-9 աշխատող ունեցող ձեռնարկություններ։ Մակայն, արևելյան վիլայեթներում կային 1 832 ձեռնարկություններ, որոնք ունեին 10 կամ ավելի աշխատող ⁶⁷։ Մանր արհեստանոցների (1-3 աշխատող ունեցող), որոնց բանակը տրված չէ այդ վիճակագրության մեջ, և «խոշոր» ձեռնարկությունների միջև գոյություն ունեցող կապն իր հերթին վկայում է, որ 10 և ավելի աշխատող ունեցող ձեռնարկությունները ցարդ կազմում են շրջանի տնտեսական կյանքի հետ օրգանական կապ չունեցող այլասեռ մի խումբ։

Ամփոփենք։ Այդ ձեռնարկությունները մեծ մասամբ կրում էին ոչ արդյունաբերական բնույթ։ Մշակող արդյունաբերության ձեռնարկությունները համեմատաբար փոքրաթիվ էին։ Ըստ 1963 թվականի արդյունաբերական հաշվառման, արևելյան վիլայեթներում կային մշակող արդյունաբերության 89 ձեռնարկություններ, որոնց կեսից ավելին՝ 2 վիլայեթում (Անքեր՝ 43, Էրզրում՝ 18) ⁶⁸։ Մշակող արդյունաբերական ձեռնարկություններ չկային առավել քրդաբնակ վիլայեթներից 8-ում (Մարդին, Բինգյոլ, Ադրը, Ուրֆա, Հաքյարի, Վան, Մուշ, Թունջելի), ինչպես նաև երկրորդ խմբի վիլայեթներից մեկում (Ադրյաման) ⁶⁹։ Մշակող արդյունաբերության այդ ձեռնարկությունների միայն փոքր մասը, ժամանակակից առումով, գործարաններ էին։ Դա վկայում է, որ արևելյան վիլայեթների արդյունաբերությանը քաջածանոթ շատ դեմքեր, հաճախ անտեսելով այդ ձեռնարկությունների բազմությունը, խոսում են միայն մի քանի ձեռնարկությունների առկայության մասին։ Օրինակ, 1969 թվակա-

նին արևելյան վիլայեթների առևտրական գրասենյակների և բորսաների շրջանային ժողովում, առևտրի միության նախագահ պրոֆ. Նեֆմեդդին էրբակյանը բացման ճառում, խոսելով արևելյան վիլայեթներում կապիտալի և առևտրի փոքր ծավալի մասին, հայտնեց, որ շրջանում արդյունաբերությունը բացակայում է՝ բացառությամբ շաքարի և ցեմենտի գործարանների ⁷⁰:

Գյուղատնտեսությունը նույնպես գտնվում էր հետամնաց վիճակում: Օգտագործվում էին ընդհանրապես աշխատանքի հին գործիքներ, որոնցից ամենատարածվածը փայտե արոտն էր («կարասափան»): Արևելյան վիլայեթների առավել թուրքաբնակ խմբում յուրաքանչյուր հարյուր արոտի դիմաց կային 15 գութան, իսկ առավել քրդաբնակ վիլայեթների խմբում՝ 9-11 ⁷¹: Տրակտորի գործածությունը սկսեց տարածվել միայն կալվածատիրական և պետական տնտեսություններում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Գյուղերի մոտավորապես կեսը (46%) գուրկ էր ոռոգման հնարավորությունից: Թեև գյուղերի կեսից ավելին (54%) գուրկ էր այդ հնարավորություններից, սակայն դրանք կամ շատ քիչ էին, կամ օգտագործվում էին նվազագույն չափով: Հողերի ամգամ մեկ տոկոսը չէր ոռոգվում Ուրֆայում, չնայած ոռոգման հնարավորություն ունեին գյուղերի 20%-ը: Ոռոգվող հողերի ամենաբարձր տոկոսը հասնում էր 11,1%-ի՝ Մալաթիայում, որտեղ ոռոգման հնարավորություն ունեին գյուղերի 21%-ը ⁷²:

Գյուղերի մոտավորապես կեսը (41%) ⁷³ պարարտանյութեր էին օգտագործում: Թեև գյուղերի մի զգալի մասում (առավել քրդաբնակ վիլայեթների խմբում՝ 47%, առավել թուրքաբնակ վիլայեթներում՝ 72%) ⁷⁴ օգտագործվում էին պարարտանյութեր, հիմնականում՝ կենդանական, սակայն, անկասկած, այդ գյուղերի ներսում մշակվող հողերի միայն շատ փոքր մասն էր պարարտացվում: Այդ են վկայում Թուրքիայի ընդհանուր վիճակի վերաբերյալ տվյալները: Օրինակ, 1963 թվականին պարարտացվել էր ընդամենը 569 հազար հեկտար տարածություն ⁷⁵, որը կազմում էր նույն թվականին տարբեր գյուղատնտեսական կուլտուրաների մշակությանը

հատկացված տարածության (17 483 հազար հեկտար) ⁷⁶ հազիվ 3,3%-ը: Անկասկած, այդ տոկոսն ավելի ցածր էր արևելյան վիլայեթներում, քանի որ հայտնի է, որ պարարտամյուր օգտագործող տնտեսություններն ավելի սակավաթիվ էին արևելյան վիլայեթներում ⁷⁷:

Արհեստական պարարտամյութերի արտադրության անբավարարության, գների բարձրության, գյուղատնտեսության հետամնացության հետևանքով պարարտացման իմնական եղանակը կենդանական պարարտամյութով պարարտացումն էր: Սակայն կենդանական աղբի միայն փոքր մասն էր այդ նպատակով օգտագործվում, քանի որ գյուղացին ստիպված էր այն օգտագործել որպես վառելանյութ (աբար) ⁷⁸:

Սակայն գյուղատնտեսության համար գլխավոր չարիքը տիրող ագրարային հարարերություններն էին: Հողերի մեծ՝ բարերեր մասը պատկանում էին ունևոր փոքրամասնությանը (յուրաքանչյուրն ավելի քան 200 դյոնյում՝ մոտավորապես 20 հեկտար և ավելի)՝ հողասեփականատերերի կատեգորիային: Առանձին վիլայեթներում մշակվող հողերի մոտավորապես կեսը, երբեմն կեսից ավելին, պատկանում էր նրանց: Օրինակ՝ նրանց էին պատկանում հողերի 42%-ը Ադլյամանում, 42,5%-ը՝ Ադրբում, 49%-ը՝ Մարդինում, 52,1%-ը՝ Սդերդում, 63%-ը՝ Դիարբեքիում, 72%-ը՝ Ուրֆայում, չնայած նրանք կազմում էին հողասեփականատերերի մեկ տոկոսը (Ադլյամանում՝ 3,4%, Դիարբեքիում՝ 6,6%, Ուրֆայում՝ 19%) ⁷⁹, հետևաբար՝ առավել անմշան տոկոսն ամբողջ գյուղացիության հարաբերությամբ:

Ինչպես ցույց է տրվում N3 աղյուսակում, գյուղացիության 31,1%-ը հողագուրկներ էին արևելյան վիլայեթների առավել թուրքաբնակ խմբում, իսկ առավել քրդաբնակ վիլայեթների խմբում՝ 42%-ը: Հող ունեցողների մի մասն էլ տառապում էր սակավահողությունից: Օրինակ, հազիվ մի փոքրիկ հողամաս (առավելագույն 1 հեկտար) ունեին Ադլյամանում հողասեփականատերերի 54,9%-ը, Բիթլիսում՝ 57%-ը, Բինգյոլում՝ 57,5%-ը, Սիիրդում՝ 57,2%-ը, Հաքյաբում՝ 76,3%-ը ⁸⁰:

Հողագուրկների մի փոքրիկ մասն (2%) ուներ նյութական ու
բազմաթիվ հնարավորություններ, ձեռներեցություն, կապեր շուկայի հետ և
քաղաքամերձ վայրերում վարձակալական հիմունքներով վարում
էր սեփական տնտեսություն՝ կալվածատիրական կամ պետական
հողերի վրա: Հողագուրկների ավելի քան 80%-ն աշխատում էր որ-
պես գյուղատնտեսական բանվոր, իսկ մնացյալ մասը կիսարաբու-
թյան տարբեր հիմունքներով տնտեսություն էր վարում կալվածա-
տերերի հողերի վրա¹: Կախված այն հանգամանքից, թե ում են
պատկանում բնակելի շենքեր, աշխատանքի գործիքները, բանող ա-
նասունը, սերմնացուն և այլն՝ կալվածատիրոջը, թե՞ մշակողին,
բերքի մեկ տասնորդից մինչև երեք չորրորդը յուրացվում էր կալվա-
ծատիրոջ կողմից: Կիսարաբները ստիպված էին կալվածատիրոջը
մատուցել հավելյալ ծառայություններ և հաճախ կիսաճորտական
կախման մեջ էին գտնվում կալվածատիրոջից:

Սակավահող գյուղացիությունը քարշ էր տալիս իր գոյու-
թյունը փոքրիկ հողամասի վրա, մասամբ երկրորդ տնտեսություն
վարում կալվածատիրոջ հողում՝ կիսարաբության սկզբունքներով,
կամ իր եկամուտները «լրացնում էր»՝ տարվա որոշ ամիսներին աշ-
խատելով քաղաքներում և կալվածատիրական տնտեսություննե-
րում:

Կիսարաբները զուրկ էին ամեն տեսակ սոցիալական ապա-
հովությունից. կալվածատերն իրավունք ուներ հաջորդ տարին մի
կիսարաբ փոխարինելու ուրիշով: Այդ պատճառով կիսարաբը շա-
հագրգռված չէր հողերի պարարտացմամբ, ոռոգման համակարգի
կատարելագործմամբ: Կալվածատերերը մանր տնտեսությունների
հաշվին տնօրինում էին ոռոգման հնարավորությունները: Նրանք
անվճար կամ չնչին գներով տնօրինում էին պետական հողերը, ան-
գամ յուրացնում համայնքային սեփականություն համարվող արո-
տավայրերն ու մարգերը:

Գյուղատնտեսության տեխնիկան ցածր մակարդակի էր և
տիրող ագրարային հարաբերությունների պայմաններում ստաց-
ված բերքը չէր բավարարում աշխատավոր գյուղացու կարիքները:
Ըստ պետական պլանավորման կազմակերպության կատարած մի

ուսումնասիրության, Թուրքիայում, ամբողջությամբ վերցրած հող ունեցողների 49,6%-ի, կիսարանների 60,1%-ի գյուղատնտեսական եկամուտները հեռու էին բավարար լինելուց: Գյուղատնտեսական եկամուտները հազիվ բավարարում էին հողատերերի 45,6%-ին, կիսարանների՝ 38,3%-ին: Հողատերերի միայն 4,7%-ը և կիսարանների 1,5%-ն ունեին պահանջմունքներն անցնող եկամուտներ ²²: Ինչ վերաբերում էր գյուղատնտեսական բանվորներին, ապա նրանք միջին հաշվով ստանում էին օրական 12 լիրա ²³, որը դարձյալ հեռու էր պահանջմունքները բավարարելուց: Սակայն գյուղատնտեսական բանվորի եկամուտները ցածր աշխատավարձի և անգործության հետևանքով շատ ցածր էին արևելյան վիլայեթներում: Օրինակ, միջին հաշվով մեկ գյուղատնտեսական բանվորի եկամուտը կազմում էր 5,24 լիրա Անթեբում, 5,05 լիրա՝ Էրզրումում, 4,06 լիրա՝ Դիարբեքիրում, 4,01 լիրա՝ Էլազըղում, 2,74 լիրա՝ Վանում ²⁴:

Ինչ վերաբերում է ճանապարհաշինարարության, լուսավորության, առողջապահության մնան պետական ձեռնարկություններին, ապա դրանք կախված տնտեսական զարգացման մակարդակից, ունեին խիստ մեծ ինքնուրույնություն, հատկապես՝ ճանապարհաշինարարությունը, և կարող էին ակնկալվածից բարձր կամ ցածր ցուցանիշներով ներկայանալ՝ կապված կառավարող շրջանների վարած քաղաքականության հետ:

Ինչպես ցույց է տալիս N3 աղյուսակը, արևելյան վիլայեթների առավել քրդաբնակ շրջանում, այդ ծառայություններից ստացած բաժինն իր տարածության կամ բնակչության հարաբերությամբ եղել է զգալիորեն քիչ, բացառությամբ՝ ճանապարհաշինարարության, որի մասին կանոնադրաբանաբար ստորև:

Արևելյան վիլայեթներում ճանապարհները միշտ չէ, որ պիտանի էին երթևեկության համար: Օրինակ, տարվա բոլոր եղանակներին անանցանելի էին արևելյան վիլայեթների առավել քրդաբնակ շրջանում ճանապարհների 43%-ը, առավել քուրբաբնակ շրջանում՝ 62%-ը, իսկ Թուրքիայի մնացյալ մասում՝ 70%-ը ²⁵:

Իրականում այդ ճանապարհները զլխավոր մայրուղիներ էին, որոնք միացնում էին միմյանց (պետական ճանապարհներ) ա-

ռաջին աստիճանի վարչական կենտրոնները (վիլայեթների կենտրոններ), երկրորդ ու երրորդ աստիճանի վարչական կենտրոնները (կազաների և նահիեների կենտրոններ) առաջին աստիճանի վարչական կենտրոններին և պետական ճամապարհներին (նահանգային ճամապարհներ), և ապա բոլորը գտնվում էին պետության և տեղական իշխանությունների «խնամքի» տակ:

Այսպիսով, այդ ճամապարհները միմյանց էին միացնում բնակավայրերի մի փոքրիկ խումբ: Ինչ վերաբերում էր գյուղերը միմյանց և գլխավոր մայրուղիներին միացնող ճամապարհներին, ապա դրանք մնում էին վիճակագրությունից դուրս և հատկապես արևելյան վիլայեթներում գտնվում էին անմխիթար վիճակում: Դրանք ձմռանն ընդհանրապես անանցանելի սայլուղիներ էին կամ լեռնակածաններ, որոնցով հազիվ էին անցնում ջորիներով՝ անգամ ամենապաստավոր եղանակին:

Կլիմայական պայմանների հետևանքով ձմռանն ընդհանրապես խզվում էր ոչ միայն գյուղական, այլև՝ պետական և նահանգային ճամապարհների կապն առանձին շրջանների միջև՝ պատճառ դառնալով առաջին անհրաժեշտության ապրանքների սպեկուլյացիայի, խանգարելով տարբեր կենսական կարիքների բավարարմանը: Օրինակ՝ Պերվարիում 1966 թվականին զրկված լինելով բժշկական ամենամախմակյան օգնությունից՝ դեղորայքից, կարմրուկից մահացան 80 երեխաներ ⁸⁶:

Լուսավորության բնագավառում որակական տարբերություններն առնչվում էին ուսման տարբեր փուլերին: Արևելյան վիլայեթների նախնական և միջնակարգ դպրոցների աշակերտության (Թուրքիայի աշակերտության 13,2%-ը) մեծ մասը, նախնական դպրոցների ⁸⁷ աշակերտներ էին: Նախնական ուսուցման տարիքի երեխաների մի մասը, հիմնականում դպրոցների անբավարարության հետևանքով, զրկվում էին ուսանելու հնարավորությունից: Օրինակ, 1964 թվականին, երբ արդեն զգալիորեն ընդարձակվել էր դպրոցական ցանցը, Թուրքիայում նախնական ուսուցման տարիքի երեխաներից 77%-ն էր սովորում դպրոցներում, իսկ 1965 թվականին՝ 80%-ը ⁸⁸: Սակայն մույն տարիներին (1964-1965 տարում)

արևելյան վիլայեթներում նույն տարիքի երեխաների շատ ավելի փոքր տոկոսն էր սովորում: Նման ցածր տոկոսներով աչքի էին ընկնում Բիկնգյուրը՝ 52, Բիքիսը՝ 45, Վանը՝ 41, Դիարբեքիրը՝ 40, Սդերդը՝ 39, Հաքյարին՝ 27 %:

Ուսուցման հաջորդ փուլերում դպրոցների անբավարար քանակի, ծնողների չբավորության և տիրող սոցիալ-տնտեսական պայմաններում, ուսման գործնական նշանակությունից զուրկ լինելու հետևանքով, մեծ թվով երեխաներ մնում էին առանց ուսման: 1965 թվականի տվյալներով Թուրքիայում 13-15 տարեկանների միայն 19,4%-ն էին դպրոցականներ, իսկ 16-18 տարեկանների՝ միայն 5,2%-ը %: Անկասկած, այդ տոկոսներն ավելի ցածր էին արևելյան վիլայեթներում: Դրա վկայությունն այն է, որ եթե Թուրքիայի նախնական դպրոցների աշակերտների 13,5%-ն էր գտնվում արևելյան վիլայեթներում, ապա միջնակարգ դպրոցի աշակերտության՝ 11,5%-ը %: Մեր ձեռքի տակ չունենք բնակչության և աշակերտության հասակային կազմի վերաբերյալ ըստ վիլայեթների առանձնացված տվյալներ, բավարարվում ենք միայն աշակերտների թիվը հարաբերության մեջ դնելով բնակչության ընդհանուր թվի հետ: Այդ հաշվումների համաձայն, 1960 թվականի տվյալներով արևելյան վիլայեթների առավել քրդաբնակ շրջանում յուրաքանչյուր հազար բնակչից 58-ը նախնական դպրոցի և միայն 7-ը՝ միջնակարգ դպրոցի աշակերտներ էին, արևելյան վիլայեթների առավել թուրքաբնակ շրջանում այդ թվերը բարձրանում էին 90-ի և 13-ի, իսկ Թուրքիայի մնացյալ մասում՝ 110-ի և 19-ի %:

Արևելյան վիլայեթների դպրոցները (նախնական կամ միջնակարգ) իրենց ուսուցման մակարդակով զիջում էին արևմտյան վիլայեթների դպրոցներին՝ որակյալ ուսուցիչների, գրադարանների, լաբորատորիաների, ուսումնադաստիարակչական այլ միջոցների բացակայության կամ անբավարարության, ինչպես նաև աշակերտների՝ գրքից ու գրենական տարբեր ալիտույքներից զրկված լինելու հետևանքով: Մեծ թիվ չկազմող միջնակարգի շրջանավարտների մի փոքր մասը հետամտում էր բարձրագույն ուսում ստանալ և շատ անգամ անհաջողության մատնվելով մուտքի քն-

նություններում՝ չէր կարողանում իրականացնել իր ցանկությունը: Օրինակ, 1962 թվականին Անկարայի համալսարանում մուտքի քննությանը մասնակցած Թուրքիայի 147 դպրոցների շրջանավարտների քննություններից ստացված արդյունքները ցույց են տվել, որ առաջին տեղերում արևմտյան վիլայեթների դպրոցներն էին, իսկ վերջին՝ 125-147-րդ տեղերի դպրեցների 75-80%-ն էր պատկանում արևելյան վիլայեթներին ⁹²:

Առողջապահական բնագավառում, որակական առումով, կարելի է անդրադառնալ բժիշկների մասնագետ լինելու հանգամանքին:

Արևելյան վիլայեթներում շատ քիչ թվով մասնագետ կամ ոչ մասնագետ բժիշկներ կային (Թուրքիայի բժիշկների 6,6%-ը): Արևելյան վիլայեթների առավել բրդաբնակ շրջանում բնակչության 9 322 շնչին ընկնում է մեկ բժիշկ, առավել թուրքաբնակ վիլայեթներում՝ 7 003 շնչին, իսկ Թուրքիայի մնացյալ մասում՝ 2 463 շնչին:

Հատկապես մասնագետ բժիշկների սակավաթիվ լինելը ցույց է տալիս, որ առողջապահության գործի կազմակերպումն արևելյան վիլայեթներում վատթար վիճակում էր, քան ցույց են տալիս բժիշկների ընդհանուր թվի վերաբերյալ տվյալները: Արևելյան վիլայեթների առավել բրդաբնակ շրջանում բժիշկների միայն 36%-ն էին մասնագետներ, առավել թուրքաբնակ շրջանում՝ 46%-ը, իսկ Թուրքիայի մնացյալ մասում՝ 54%-ը ⁹³:

Բժիշկների, մասնագետ կամ ոչ, թիվը բոլորովին կայուն չէր: Մի տարվա ընթացքում կարող էին տեղի ունենալ փոփոխություններ, մի քիչ ավելանալ կամ խիստ նվազել, այն դեպքում, երբ շրջանում, ավելի քան Թուրքիայի այլ մասերում, տարածված էին մի շարք հիվանդություններ՝ ինչպես մալարիան, բոքսիտը, բորոտությունը, մասնավորապես տրախոման ⁹⁴:

Աղյուսակ 3

	Տրախոմա	Թոքախոտ	Մալարիա	Բորոտուրյուն
Ամբեր	378	54	41	7
Մարդին	190	7	11	3
Աղբյանան	165	27	15	1
Մուշ	65	19	76	16
Վան	91	29	93	76
Բինգյոլ	55	81	58	15
Էլազըլ	37	10	43	25
Էրզրում	19	20	16	11
Բիքլիս	18	9	47	23
Թունջլի				
(Դերսիմ)	14	12	11	5

Shu "Cumhuriyet", 13 Eylül 1969 - 1Ekim 1969.

Այդ փոփոխությունների ընթացքում պատահում էր, որ երբեմն ամբողջ հիվանդանոցում հնարավոր չէր գտնել մեկ բժիշկ: Ինչ վերաբերում էր որոշակի մասնագիտության տեր բժշկին, ապա նրա բացակայությունն ավելի երկարատև էր լինում ո՛չ միայն առանձին հիվանդանոցներում, այլև՝ մի շարք վիլայեթներում: Օրինակ, 1967 թվականին «Ջումհուրիյեթ» թերթի թղթակից Մեհմեդ Մերջանը տեղեկացնում էր, որ առաջին աստիճանի տրախոմայի շրջան հանդիսանալով հանդերձ, Մարդինի, Բիքլիսի, Մուշի, Վանի, Հաքյարիի, Աղըրի, Ուրֆայի հիվանդանոցներում ակնաբույժներ չգտնվելու պատճառով բոլոր հիվանդների բուժումը մնում էր Դիարբեքիի տրախոմայի դիսպանսերում աշխատող միակ ակնաբույժին:

Նույն հաղորդման կամաձայն, այդ վիլայեթներից ոչ մեկում չկային քիթ-կոկորդի, վարակիչ հիվանդությունների մասնագետներ, ռենտգենոլոգներ, մամրեաբաններ և այլն: Չկային վիրաբույժներ Մարդինում, Բիքլիսում, Վանում, Բինգյոլում և Հաքյարիում: Բոլորը դիմում էին Դիարբեքիի «Նյումունե» կենտրոնական հիվանդանոց: Իսկ Դիարբեքիի այդ հիվանդանոցում բժիշկ չլինելու պատճառով փակ էին աչքի, քիթ-կոկորդի, վարակիչ հի-

վանդությունների բաժինները %:

Երկու տարի անց «Ուլուս» թերթը տեղեկացնում էր, որ հարավ արևելյան վիլայեթներում, տրախտմայի ամենից տարածված շրջանում, ընդամենը մեկ ակնաբույժ կար, որն աշխատում էր Դիարբեքիի տրախտմայի 15 մահճակալանոց դիսպանսերում⁹⁷:

Ըստ վիլայեթների վիճակագրական տվյալների վերլուծության՝ լիովին ամեն ինչ չի բացահայտվում: Օրինակ՝ այդ տվյալները ցույց չեն տալիս, որ պետական ծառայությունների մի փոքր մասն էր մատուցվում աշխատավոր մասսաներին և ազգային փոքրամասնություններին:

Թուրքական պաշտոնական վիճակագրությունն ընդհանրապես անտեսում էր սոցիալական շերտավորումը: Այնուամենայնիվ պարզ էր, որ այդ ծառայությունների մեծ մասը կենտրոնացված էին քաղաքներում: Գյուղերի զգալի մասը գուրկ էր էլեկտրականությունից: Խճուղիների ցանցը հիմնականում միմյանց էր միացնում քաղաքները: 1961 թվականին պետական պլանավորման կազմակերպության կողմից 14 հազար գյուղերում կատարված ուսումնասիրության համաձայն, որի արդյունքները հրապարակվեցին 1969 թվականին, Թուրքիայում գյուղական բնակչության 38%-ն իր ամբողջ կյանքում չէր հեռացել իր գյուղից: Մի տարվա ընթացքում անգամ ամենամոտ քաղաքը չայցելողները կազմում էին գյուղական բնակչության 46%-ը: Գյուղում ծնվածների 74%-ի ամբողջ կյանքն անցնում էր գյուղական շրջանակում⁹⁸: Առողջապահական հիմնարկները կենտրոնացված էին քաղաքներում: Իսկ այն բուժական հիմնարկները, որոնց կարելի էր հիվանդանոց կոչել՝ միայն մեծ քաղաքներում: Նույնը կարելի էր ասել դպրոցական ցանցի մասին: Շատ գյուղերում դեռևս նախակրթարաններ չկային: 1967 թվականի տվյալներով, Հաքյարիի և Էրզրումի վիլայեթներում գյուղերի 46%-ը չունեին նախակրթարաններ, Էլազըղում՝ 49%-ը, Ուրֆայում՝ 53%-ը, Մուշում և Դիարբեքիում՝ 57%-ը, Վանում՝ 62%-ը⁹⁹: Միջնակարգ ուսուցման առաջին փուլը (6-8-րդ դասարաններ) ընդգրկող դպրոցները գտնվում էին միայն քաղաքներում¹⁰⁰, իսկ երկրորդ փուլի դպրոցները (լիցեյներ)՝ խոշոր քաղաքներում¹⁰¹ (վիլայե-

քի կենտրոնական քաղաքում): Այդ պատճառներով էլ անգրագետներն ավելի մեծ տոկոս էին կազմում գյուղերում: Օրինակ՝ Մարդինի վիլայեթում (1965 թ.) անգրագետները քաղաքներում կազմում էին բնակչության 58%-ը, գյուղերում՝ 87%-ը: Սիիրդում՝ քաղաքներում՝ 59%-ը, գյուղերում՝ 87%-ը, Բինգյուլում՝ քաղաքներում՝ 50%-ը, գյուղերում՝ 78%-ը, Դիարբեքիքում՝ քաղաքներում՝ 52%-ը, գյուղերում՝ 86%-ը և այլն ¹⁰²:

Գյուղի և քաղաքի հակադրությունը ցույց տվող այս տարբերությունները խիստ կարևոր են այն պատճառով, որ արևելյան վիլայեթներում, քան Թուրքիայի մնացյալ մասում, բնակչության մեծամասնությունը բնակվում էր գյուղերում ¹⁰³:

Գյուղի ունևոր խավի համար քաղաքից հեռավորությունը, բնականաբար, էական չէր: Ուստի նա ինչքան էլ հեռու լիներ քաղաքից, կարողանում էր օգտվել պետական ծառայությունների մեծ մասից: Ավելին, խոշոր կալվածատերերը վարկերից և այլ արտոնություններից հեշտությամբ օգտվելու համար հաստատվում էին քաղաքներում: Նրանցից շատերը, գյուղում կիսաֆեոդալական հարաբերությունները պահպանելով հանդերձ, քաղաքում դարձել էին բուրժուաներ: Նրանք քաղաքներում ունեին պանդոկներ, խանութներ և մանր արտադրական ձեռնարկություններ ¹⁰⁴: Ըստ Իսմայիլ Բեշիկչիի հաշվումների, գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանիքների 4,5%-ը բնակվում էր քաղաքներում և նրանց էր պատկանում հողերի 30%-ը ¹⁰⁵:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԲՐԱՍԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎԻՃԱԿԸ

Թուրքական վիճակագրությունը տվյալներ չի տալիս ազգային փոքրամասնությունների վիճակի մասին: Վիլայեթների՝ ըստ ազգային կազմի, ըստ առավել թուրքաբնակ կամ քրդաբնակ լինելու հանգամանքի, խմբավորումը մեր կողմից, որոշ պատկերացում է տալիս այդ մասին: Այնուամենայնիվ, մա ցույց չի տալիս առանձին ազգությունների վիճակը վիլայեթում: Այլ տեղեկություններ լրացնում են մեր պատկերացումները: Օրինակ, քաղաքի և գյուղի հակադրությունն իր հերթին, որոշ լույս է սփռում այդ հարցի վրա, քանի որ գյուղում ավելի շատ բնակվում էին քրդերը, քան՝ թուրքերը: Կան նաև առանձին հստակ տեղեկություններ: Դրանցից մեկը վերաբերում է գրագիտությանը:

Ըստ համրապետական շրջանի առաջին մարդահամարի (1927)՝ Թուրքիայի բնակչության միայն 10,6%-ն էր կարողանում կարդալ և գրել ¹⁰⁶: Նման, կարելի է ասել համատարած, անգրագիտության պայմաններում հեշտությամբ կարելի է ենթադրել, որ մեծ տարբերություններ չկային թուրքերի և քրդերի միջև: Հետագայում լուսավորության ցանցի աստիճանաբար ընդարձակման, մասնավորապես այբուբենի ռեֆորմի շնորհիվ, հետզհետե բնակչության մեծ մասը սկսեց դառնալ գրագետ: Սակայն զարգացման այդ հնարավորություններից չկարողացան հավասարապես օգտվել բոլոր ազգությունները, որի հետևանքով գրագիտության աստիճանի տարբերությունները սկսեցին ակնհայտորեն մեծանալ: Օրինակ, 1955 թվականի տվյալներով թուրքերի մեջ գրագետները կազմում էին 40%, իսկ քրդերի մեջ՝ 11% ¹⁰⁷: Զգալիորեն ցածր էին գրագիտության տոկոսները նաև արաբների մոտ՝ 22% ¹⁰⁸: Եթե ենթադրենք, որ մախկնում քրդերի մոտ տիրում էր բացարձակ անգրագիտություն, ապա ստացվում է, որ Համրապետություն հռչակվելուց հետո, անցած 32 տարիների ընթացքում հազիվ 11%-ով քրդերի մոտ նվազել

էր անգրագիտությունը:

Քրդերի զարգացման դժվարությունները կապված էին ո՛չ միայն պետական ծառայությունների անհավասար բաժանման, այլև՝ ազգային ճնշումների և բռնությունների հետ: Դեռևս ուսումնասիրված չեն, քե ինչպիսի դժվարությունների առջև կանգնեցին, երբ իրենց տեղերը վերադարձան «թուրքական մշակույթը» յուրացնելու նկատառումներով արևմտյան վիլայեթներ արքայազնները: Սակայն, կան փաստեր, որոնք խոսում են լուրջ դժվարությունների առաջացման մասին: Օրինակ, Էմրուլլահ Գյունեյը արևելյան վիլայեթների բշվառությունը բացատրում էր ոչ միայն ընդհանրապես բռնություններով, այլև՝ բռնազաղրով: Պակասում են մանրամասները, սակայն կան նաև այլ օրինակներ: Հիշենք դրանցից մեկը՝ Կըրվա աշիրեթը, որը նախկինում, որպես մատակյաց, բնակվում էր Դիարբեքիի 6 գյուղերում, հետագայում բռնաբերված կյանք էր վարում Էլազըղում: Բռնվոր ցեղերին, առանց լուրջ վերափոխումների և պետական օժանդակության, ստիպելը մատակյացության, վերջին հաշվով խեղճացրեց նրանց, քանի որ խաշնաբած ամասնապահները խիստ տուժեցին, զրկվելով շարժման հնարավորությունից, իսկ մատակյացության անցնելով՝ հարկադրված էին զբաղվել նաև երկրագործությամբ, որի համար ոչ մի փորձ և պատրաստություն չունեին:

Հետաքրքիր է Իսմայիլ Բեշիկչիի այն դիտողությունը, որ տարբեր ժողովուրդների բնակած գյուղերի և անգամ քաղերի միջև տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման մակարդակի տարբերություններ կան¹⁰⁹, ընդ որում՝ այդ տարբերությունները հաստատում են ոչ թուրքերի առավել հետամնաց վիճակը: Բեշիկչին կանգ է առնում խիստ հետաքրքրական մեկ օրինակի վրա: Նա գրում է. «Արժանի է ուսումնասիրության Աիլաթի (Ախլաթ, Խլաթ-Հ.Գ.) քաղապետության մաս կազմող Քըրքլար քաղի և Աիլաթին ենթակա նախկինում հայկական Կարմուջ (Եմիքյովուր)»¹¹⁰ գյուղի վիճակը: Թե՛ մեկը, քե՛ մյուսը գտնվում էին Աիլաթ քաղաքից մոտավորապես մույն հեռավորության վրա (9 կմ): Քըրքլարում բնակվում էին թուրքեր, իսկ Կարմուջում՝ քրդեր: Երկու բնակավայ-

ընդի տնտեսական հիմքը հենվում էր գյուղատնտեսության վրա, Քրքրլարում տնտեսական հարաբերությունները և Աիլաթի հետ ինտեգրացումը կրում էին ավելի դիմամիկ բնույթ: Արտադրության աճի միտումը պատճառ էր, որ մուտք գործեն ավտոն և տրակտորը, որից հետո էլ՝ էլեկտրականությունը, ջուրը, ռադիոն և սպառման տարբեր ապրանքներ: Այնինչ Կարմուզ գյուղում չկա դրանցից և ոչ մեկը»¹¹¹:

Հետաքրքրական է նաև այն, որ տիրող արտադրական հարաբերությունները զարգանում էին Կարմուզ գյուղի հաշվին: «Գյուղացիների մի զգալի մասը հողագուրկ էին: Մերձակա հողերը տնօրինվում էին ավելի շատ Քրքրլար թաղի բնակիչների կողմից: Կարմուզից այդ հողերը մշակում էին որպես մարաբաներ, օրթախջիներ և կամ որպես վարձակալներ»¹¹²:

Ինչպես նշում է Բեշիկչին, անբավարար է Քրքրլարի զարգացման ընթացքը բացատրել, առաջ քաշելով այն տեսակետը, որ «նա թաղապետության սահմանների մեջ է գտնվում և զարգանում է թաղապետության ընծայած հնարավորությունների շնորհիվ»¹¹³: Նրա կարծիքով, Կարմուզ գյուղը Օսմանյան կայսրության ժամանակ կամ Հանրապետության առաջին տարիներին հանդիպել է կենտրոնական իշխանությունների բուռն զայրույթին կամ տեղական բախումների ընթացքում ծանր հարված է ստացել և չի կարողացել վերստին վերականգնվել¹¹⁴: Բախումները տարբեր ժողովուրդների միջև չեն վերացել: Մեր կարծիքով, ո՛չ միայն կառավարող շրջանների վարած ազգային քաղաքականության, այլև սոցիալ-տնտեսական պակասությունների սրվելու հետևանքով հետզհետե նոր կոնֆլիկտներ էին առաջանում տարբեր ժողովուրդների միջև, ըստ որում՝ այդ կոնֆլիկտից տուժելով դուրս էին գալիս նրանք, ովքեր ոչ թուրքեր էին, կամ նրանք՝ ովքեր գրկված էին թուրքական իշխանությունների հովանավորությունից: Օրինակ, նույն Քրքրլար և հարևան գյուղերի միջև, երբեմն կոնֆլիկտներ էին առաջանում, և ավելի շատ Կարմուզ գյուղից էին ընտանիքներ գնում Դատվան ու աշխատանք «որոնում»¹¹⁵: Նման բախումներ էին առաջանում նաև Աիլաթի այլ գյուղերում քրդերի և չերքեզների միջև,

«որի հետևանքով կողմերից մեկը (մեր ենթադրությամբ՝ քրդերը-
Հ.Գ.) ստիպված էր լքել գյուղը, հաստատվել քաղաքներում և գյու-
ղաքաղաքներում, ընդհանրապես Դատվանում»¹¹⁶:

Գաղթն արևելյան վիլայեթներում կրում էր առավել դիմա-
միկ բնույթ¹¹⁷: Այդ միգրացիոն հոսանքների մեջ, որպես ամենից ա-
վելի շարժման մեջ գտնվողների, կարելի է առանձնացնել Թերեքե-
մեններին¹¹⁸: «Թերեքեմենները, որոնք բնակվում էին մասնավորա-
պես Կարսի և Աղբրի շրջաններում, հողագուրկներ էին, ընդհանրա-
պես գնում էին Վանի լճի մերձակայքը, մասնավորապես՝ Աիլաթի և
Աղիլջեվազի (Ալջավազ) կողմերը: Այդ շրջանների գյուղերում
բնակվում էին չերեքցներ: Մակայն քերեքեմենները ավելի շատ էին
աճում և այդ ընթացքում տնօրինում սեփականությունն ու արտադ-
րությունը, որի հետևանքով անհամաձայնություններ էին առաջա-
նում կողմերի միջև և թույլերը՝ հիմնականում՝ չերեքցները, վաճառե-
լով իրենց ամբողջ ունեցվածքը՝ լքում էին գյուղը և հաստատվում
Դատվանում: Հետաքրքրական է դիտել այդ երևույթները, օրինակ,
Աիլաթի ենթակա Դեվլիկ, Հուլիկ, Յողուրթյեմեզ գյուղերում»¹¹⁹:

Նման կոնֆլիկտներ առաջանում էին ոչ միայն տարբեր
ազգությունների, այլև տարբեր դավանանքի պատկանողների՝
սուննիների և ալեվիների միջև: Նախկինում, օսմանյան սուլթան-
ների վարած քաղաքականության հետևանքով, այդ երկու դավա-
նանքին պատկանողները ցարդ թշնամարար էին նայում միմյանց,
հատկապես՝ գյուղերում¹²⁰: Օրինակ, միմյանց աղջիկ չէին վերցնում
¹²¹: Սուննիմ չէր ուտի ալեվիի պատրաստած կերակուրը¹²²: Ալեվի-
ների և սուննիների փոխհարաբերությունների պատմական տեղա-
շարժերի ընթացքում, սուննիները տիրացել էին մեծ կարողության
և մշակելի բերքատու հողերը զանվում էին նրանց ձեռքում¹²³: Խա-
ռը բնակեցված գյուղերը սակավաթիվ էին: Խառը բնակեցված գյու-
ղերում սուննիները միշտ որոնում էին ալեվիներին գյուղից վտարե-
լու ուղիներ, որի հետևանքով սկսվում էին արյունոտ կռիվներ¹²⁴:

Բերված օրինակներն ինչ-որ չափով կապվում էին ագրա-
րային հարցի սրման հետ, ըստ որում՝ կողմերից մեկն իր պահանջ-
ները լուծում էր մյուսի հաշվին: Արևելյան վիլայեթներում և այլուր,

ալելվիների և սուննիների միջև տեղի են ունեցել մասսայական բախումներ՝ կապված սուննիական հետադիմական շրջանների հետ¹²⁵։ Այնուամենայնիվ, այդ գործողությունները ևս բոլորովին զերծ չէին տնտեսական դողապատճառներից։ Վերջին հաշվով ծառայում էին սուննիական բուրժուազիայի և կապվածատերերի շահերին, քանի որ այդ հարձակումների ընթացքում սուննիական ամբողջը ջարդում էր ալելվիներին պատկանող վաճառատեղերը և խանութները, ինչպես օրինակ, Էլբիստանում (Ալբստան) և Զըրըքհանում¹²⁶։

Առանձին շրջաններում ազգային հարցի սրման արտահայտություն կարելի է համարել այն, որ գավառներում բնակվող հայերը, հաճախ հարկադրված էին հեռանալ իրենց բնակավայրերից, «խուճապահար և հկիհև» դիմում էին Ստամբուլ¹²⁷։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻՄԱՅԵԹՆԵՐՈՒՄ

1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1960 թվականի մայիսի 27-ին պետական հեղաշրջման հետևանքով իշխանությունը գրավեց Ազգային միասնության կոմիտեն, որը ժամանակավորապես ցրեց մեջլիսը, արգելեց կուսակցությունների գործունեությունը, վերջ տվեց Դեմոկրատական կուսակցության գոյությանը:

Ազգային միասնության կոմիտեն, նոր սահմանադրության և ընտրական նոր Օրենքի մշակումից հետո, երկրի կառավարումը հանձնելու էր քաղաքական կուսակցություններին: 1960 թվականի ՄՅԻ Օրենքով ստեղծվեց պետական պլանավորման կազմակերպություն, որն ընդունվեց և հաստատվեց՝ 1961 թվականի սահմանադրական Օրենքով: Պլանավորման կազմակերպությունը, 1962 թվականի համար ժամանակավոր պլան պատրաստելուց հետո, մշակեց զարգացման առաջին հնգամյա պլանը 1963-1967 թթ. համար ¹²⁸:

Պլանում տեղ էին գտել սկզբունքներ, որոնք պահանջում էին ուշադրություն դարձնել առանձին շրջանների միջև գոյություն ունեցող անհամաչափություններին, զարկ տալ հետամնաց շրջանների, այդ թվում՝ արևելյան վիլայեթների, ամստեսական զարգացմանը:

Այդ նպատակով առաջադրվում էին մի շարք միջոցառումներ՝ ինֆրաստրուկտուրային և հասարակական ծառայություններին հատկացվող պետական կապիտալ ներդրումների բաշխումը կատարել թույլ զարգացած շրջանների օգտին՝ խրախուսելու համար կապիտալի հոսքը դեպի թույլ զարգացած շրջանները, շնորհիվ մի շարք արտոնություններ՝ որոշ ժամանակով հարկերից զերծ մնալ, արտասահմանից առանց մաքսատուրքի մեքենաներ ներմուծել, վարկեր ստանալու վերաբերյալ դյուրություններ և այլն:

Մակայն տնտեսական զարգացման պլանավորումն ընդ-

հանրապետ և պլանով առաջադրված խնդիրները մասնավորապես չէին ընդունվել կառավարող շրջանների կողմից, որովհետև իշխանության պարագլուխները գտնվում էին ակամա պլան կատարողի դերում: Այդ պատճառով անհրաժեշտ ուշադրություն չդարձվեց պլանով առաջադրված խնդիրներին: Օրինակ, պլանում նախատեսվում էր անցկացնել հողային ռեֆորմ¹²⁹, որը պարտավորեցնում էր նաև 1961 թվականի սահմանադրությունը, նախատեսվում էր նաև վարչական ռեֆորմ՝ կապված պլանավորման անցնելու հետ¹³⁰: Սակայն կառավարող շրջանները, պլանի քննարկման ժամանակ կամ հետագայում՝ պլանի կատարման ընթացքում, այդ հարցերն անտեսելով, մերժեցին առաջարկված փոփոխությունները¹³¹:

Իշխանության պարագլուխները, կռալիցիոն կառավարությունները և հետագայում 1965 թ. նրանց հաջորդող Արդարության կուսակցության կառավարությունն անհրաժեշտ ուշադրություն չդարձրեցին նաև արևելյան վիլայեթների զարգացման հարցին¹³², հակառակ ընդդիմադիր կուսակցությունների, մտավորականության և արևելյան վիլայեթների բնակչության պահանջներին: Այդ են վկայում արևելյան վիլայեթների զարգացման համար տրամադրված միջոցների չափերը, նրանց կառուցվածքը և պլանի կատարման աստիճանը:

Ըստ Իբրահիմ Ակսեսի մի ուսումնասիրության, 13 արևելյան վիլայեթներում, առաջին հնգամյա պլանի հինգ տարիների ընթացքում (1963-1967 թթ.) շատ քիչ միջոցներ տրամադրվեցին նրանց զարգացմանը: Հնգամյակի առաջին տարում տրամադրված միջոցները կազմում էին պետական կապիտալ ներդրումների միայն 6,2%-ը: Հետագա տարիներին արևելյան վիլայեթների բաժինը, աստիճանաբար աճելով, հնգամյակի վերջին տարում կազմեց պետական կապիտալ ներդրումների 10,8%-ը: Բնակչության թվի հարաբերությամբ, մույնիսկ այդ դեպքում, շատ քիչ էր արևելյան վիլայեթների բաժինը: Ամբողջ հնգամյակի ընթացքում 13 արևելյան վիլայեթներում բնակչության մեկ շնչին ընկնող պետական կապիտալ ներդրումները տարեկան միջին հաշվով կազմեցին 168 լիրա, իսկ Թուրքիայի մնացյալ մասում՝ 234 լիրա, ինչպես ցույց

է տրվում N4 աղյուսակում:

Աղյուսակ 4*

**Բնակչության մեկ շնչին ընկնող կապիտալ ներդրումները
(լիրաներով)**

	Արևելյան	Մնացյալ	Ամբողջ
Թվական	13 վիլայեթներում	54 վիլայեթներում	Թուրքիայում
1963	87	182	171
1964	128	213	203
1965	162	239	230
1966	211	256	251
1967	246	279	275
միջին հաշվով՝			
(1963-1967)	168	234	226

*) "Milliyet", 8.7.1967

Նման ընթացքը ո՛չ միայն չէր կարող վերացնել արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև գոյություն ունեցող անհամաչափությունը, այլև զգալիորեն նպաստում էր դրա խորացմանը: Այդ անհամաչափության խորացմանն իր հերթին նպաստում էր պետական կապիտալ ներդրումների կառուցվածքը: Հնգամյա պլանը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերին կարևոր դեր ընծայելով հանդերձ, առաջնահերթ նշանակություն էր տալիս արդյունաբերության զարգացմանը, որովհետև այն դիտվում էր որպես զարգացման էիմնական ուղի, այն պատճառով, որ նախատեսվում էր գյուղական չքավորությանը մասամբ արդյունաբերության մեջ ներգրավելու շնորհիվ մեղմացնել ագրարային հարաբերությունների հետևանքով գյուղում տիրող սոցիալական հակասությունները: Այդ նպատակով համեմատաբար մեծ միջոցներ էին տրամադրվում՝ արդյունաբերության զարգացման համար, չնայած բնակչության փոքր մասն էր զբաղվում արդյունաբերության մեջ՝ գյուղատնտեսության համեմատությամբ: Իսկ արևելյան վիլայեթներում, ընդ-

հակառակը, ավելի մեծ միջոցներ տրամադրվում էին գյուղատնտեսության զարգացման համար¹³²: Ագրարային հարաբերությունների անփոփոխ սլայմաններում այդ միջոցները օգնում էին գյուղի ունևոր խավերի և կալվածատերերի հարստացմանը:

Վերջապես, պետք է արձանագրել, որ արևելյան վիլայեթներում ցածր են եղել պլանի իրականացման տոկոսները: Օրինակ, եթե ամբողջությամբ վերցրած Թուրքիայում պլանով նախատեսված պետական կապիտալ ներդրումները իրականացվել են 1963 թ.՝ 89,5%-ով, ապա արևելյան վիլայեթներում այդ տոկոսը երբևիցե չի անցել 65-ից ¹³⁴:

Թեև, ըստ վիլայեթների կամ շրջանների, երկրորդ հնգամյա պլանի (1968-1972 թթ.) արդյունքներն ամփոփող նյութերը պակասում են, սակայն այն իր բովանդակությամբ և կիրառությամբ առաջին հնգամյա պլանի շարունակությունն էր: Ավելին, պատրաստվել էր իշխանությանը տիրող Արդարության կուսակցության սոցիալ-տնտեսական հարցերում վարած քաղաքականությանը համապատասխան: Օրինակ, ի տարբերություն առաջին հնգամյա պլանի, երկրորդ հնգամյա պլանը պարբերաբար խոստովել էր տիրող կարգերում փոփոխություն նախատեսող կոնկրետ առաջարկներից, ինչպես հողային և վարչական ռեֆորմները ¹³⁵: Երկրորդ հնգամյա պլանի կատարման ընթացքում մեջլիսում արված հայտարարությունները, մասնավոր հրապարակված նյութերը խոսում էին այն մասին, որ կառավարող շրջանները, ըստ արժանավույն, կարևորություն չեն տալիս արևելյան վիլայեթների զարգացմանը: Իսկ արևելյան վիլայեթների զարգացման համար նախատեսված մի շարք միջոցառումները՝ դեպի արևելյան վիլայեթները մասնավոր կապիտալի հոսքը խրախուսելու նպատակով խոստացված արտոնությունները, ոչ մի արդյունք չունեցան: Անհնար եղավ հանդիպել որևէ մեկին, որը լուրջ կապիտալ ներդրումներ կատարեր արևելյան վիլայեթներում ¹³⁶:

Այդպես էլ չվերացավ արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև գոյություն ունեցող անհամաչափությունը. «Եթե քարտեզի վրա արևելյան վիլայեթներին արևմուտքից անջատող

մի ուղիղ զիծ քաշեք. - գրում է լրագրող Իլիան Սելչուկը, ապա այդ ուղիղ զծի աջ կողմում կնկատեք դատարկություն: Պետական ներդրումները և պետության օժանդակությունը վայելող մասնավոր ներդրումները կենտրոնացված են արևմուտքի որոշ շրջաններում»¹³⁷: Ի դեպ, բոլորովին հակառակը չէր պնդում մահ վարչապետ Սուլեյման Դեմիրելը: Նա, 1970 թվականին, Էրզրումի կառավարական հրապարակում արտասանած ճառում հայտարարեց. «Մեր երկիրը հետ է մնացել: Արևելյան վիլայեթները շատ ավելի հետ են»¹³⁸: Իսկ այլ կարծիքների համաձայն, այդ տարբերությունները ո՛չ միայն կան, այլև ժամանակի ընթացքում մեծանում են¹³⁹:

Այնուամենայնիվ, չի կարելի անտեսել այն փաստը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կառավարող շրջանները հետզհետե ավելի և ավելի էին շահագրգռվում արևելյան վիլայեթներով: Դա կարելի է բացատրել նրանով, որ կառավարող շրջանները ստիպված էին հաշվի առնել արևելյան վիլայեթների բնակչության և ընդդիմադիր կուսակցությունների պահանջներն ու որոշ զիջումներ անել, իրականում, ինչպես տեսանք, կառավարող շրջանները միշտ էլ ունեին որոշ դրդապատճառներ՝ շահագրգռվելու արևելյան վիլայեթներով: Այդ դրդապատճառները ժամանակի ընթացքում ակտիվացել էին, և առաջացել էին նորերը:

Այդ ակտիվացումը հետևանք էր որոշ անաջընթացի: Թուրքիան բոլոր դեպքերում 20-ական թվականների Թուրքիան չէր: Ոչ քիչ աճ էր ապրել կապիտալիզմը (պետական կամ մասնավոր), այնքան, որ կարելի էր, թեկուզ ծրագրի սահմաններում զարկ տալ արևելյան վիլայեթների արդյունաբերությանը և արտադրանքը արտահանել Միջին Արևելքի երկրները¹⁴⁰:

Արևելյան վիլայեթները այլևս 20-ական թվականների վիլայեթները չէին: Սպառման մի շարք ապրանքների պահանջարկը մեծացել էր և շահավետ կլիմեր հիմնել մի քանի արդյունաբերական կամ արդյունահանող ձեռնարկություններ՝ շրջանի կարիքները բավարարելու համար: Իրականում մի շարք ապրանքների պահանջարկն արևելյան վիլայեթներում նախկինում էլ փոքր չէր, սակայն բուրքական արդյունաբերական և առևտրական բուրժուազիան

ընկնելով ավելի հեշտ և խոշոր շահույթների հետևից՝ չէր ձգտում բավարարել այդ կարիքները: Օրինակ, մի շարք քաղաքներում, անգամ Էրզրումում, հնարավոր չէր հայթհայթել փայտի, փայտածուխի, քարածուխի մնան վառելանյութեր, և բնակչությունը ստիպված որպես վառելանյութ օգտագործում էր աթարը: Ավելին, Միրզա Գյոկգյուլը, անդրադառնալով հյուսիսարևելյան վիլայեթների վիճակին նշում է, որ «աթարի օգտագործումը շրջանում այնքան է տարածված, որ զինվորական միավորումներն անգամ ջեռուցման նպատակով անհրաժեշտ աթարը գնելու համար ծանուցում են տալիս տեղական քերթերում»¹⁴¹: Ապրանքը գտնվելու դեպքում խիստ բարձրանում է ապրանքի գինը փոխադրական ծախսերի և դժվարությունների հետևանքով: Օրինակ, Վանում, 1963 թվականին մեկ տոպրակ ցեմենտն արժեք 20 լիրա, այն դեպքում, երբ Ադանայի ցեմենտի գործարանը տեղում այն վաճառքի էր հանձնում 8,5 լիրայով¹⁴²:

Արևելյան վիլայեթների բնակչության և ընդհանրիւր կուսակցությունների պահանջները կառավարող շրջաններին ստիպեցին ավելի մեծ մասշտաբներով պետական և մոնոպոլիստական կապիտալը մտցնել արևելյան վիլայեթները: «Միլլիյեթ» քերթը հաղորդում էր, որ «արևելյան վիլայեթները զարգացնելու» և արդյունաբերական ապրանքների արտահանումն ավելացնելու նպատակով պետական պլանավորման կազմակերպության նախաձեռնությամբ հիմնվեց «Արևելյան Հոլդինգ» անունով մի ընկերություն, որը խոշորագույնն էր Թուրքիայում: Ընկերությունը ֆինանսավորելու էին թուրքական շուրջ տասը բանկ և մի շարք խոշոր կապիտալիստական ընկերություններ: Ընկերությունը տեքստիլագործության, սննդաարդյունաբերության և մետաղագործության ճյուղերում ունենալու էր մեծ գործունեություն և առաջին հերթին ինքնը գործարաններ էր հիմնելու հետամնաց ութը վիլայեթներում՝ Կարս, Էրզրում, Ադրը, Էլազըղ, Մալաթիա, Դիարբեքիր, Ուրֆա և Տրապիզոն¹⁴³:

Հնարավոր էր, որ օտարերկրյա կապիտալը նույնպես օգուտներ կբաղեր արևելյան վիլայեթները «զարգացնելու» աշխա-

տանքին մասնակցելուց: Թուրքիայի գյուղատնտեսական գրասենյակների միության գլխավոր քարտուղար Ջեքի Յուջեքյուրքը հանդիպումներ ունենալով մի քանի արևելյան վիլայեթների (Էրզրում, Կարս, Էրզինջան) գյուղացիների, ըստ երևույթին գյուղական վերնախավի հետ, հայտնել էր, որ «ԱԻԴ-ի ամերիկյան օժանդակության կազմակերպության հետ համատեղ մշակելու են արմատիքի մի ծրագիր, որը ընդգրկելու էր արևելյան Անատոլիայի հյուսիսային, միջին և հարավային վիլայեթները: Հիմնելու էին գյուղատնտեսական արդյունքները մշակող գործարաններ»¹⁴⁴:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մի քանի խոշոր քաղաքների արագ աճը, մասնավորապես գյուղական չքավոր բնակչության հոսքը դեպի այդ քաղաքները, քաղապետություններին կանգնեցրին անլուծելի դժվարությունների առջև, ինչպես, օրինակ, ջրի մատակարարումը կամ տարբեր ծառայությունների կազմակերպումը: Կարիք զգացվեց միգրացիոն հոսանքներին տարբեր ուղղություններ տալու համար ստեղծել «ձգողության» մոր կենտրոններ, որտեղ կենտրոնացված լինեին արդյունաբերությունը, առևտուրը կամ պետական ծառայությունները: Պետական պլանավորման կազմակերպության կողմից մախսատեսվում էին արևելյան վիլայեթներում այդպիսի քաղաքները դարձնել կենտրոններ՝ Էրզրումը, Էլազըը, Դիարբեքիը և Անքերը¹⁴⁵:

Դժվար չէ նկատել, որ արևելյան վիլայեթները զարգացնելու վերաբերյալ ցանկությունների հիմքում ընկած էին նորահայտ դրդապատճառներ:

Հարևան սոցիալիստական երկրների մվաճումները, արաբական երկրներում անցկացվող սոցիալ-տնտեսական վերափոխումները մեծ արձագանք էին գտնում Թուրքիայի աշխատավոր զանգվածների և առաջադիմական մտավորականության շրջանում, նրանց գոտեպնդում ժաղավրդավարության համար մղված պայքարում:

Կառավարող շրջանների համար անախորժ այդ արտաքին ազդեցությունները ալյազան պատճառներով (հարևանություն, շփումներ, ազգային, ցեղային ընդհանրություններ, ռադիոհաղոր-

դումների ընդունում և այլն) ավելի հեշտությամբ էին թափանցում սահմանամերձ շրջանները: Կառավարող շրջանները միշտ դիմում էին սահմանամերձ շրջաններում հսկողությունն ու ճնշումը ուժեղացնելու, ազգայնական, պանթուրքիստական ճառերով աշխատավոր զանգվածներին մոլորեցնելու մեթոդին: Մակայն տարածվեց այն միտքը, որ քաղաքական և գաղափարախոսական ճնշումն ինքնըստինքյան բավարար չէր հակազդելու արտաքին այդ ազդեցություններին, պետք էր դիմել նաև տնտեսական որոշ միջոցառումների, ինչ-որ չափով զարգացնելու սահմանամերձ շրջանները՝ նպատակ ունենալով մեղմացնել այն հակադրությունը, որ գոյություն ուներ Թուրքիայի սահմանամերձ շրջանների և հարևան երկրների միջև: Ըստ որում, արտաքին ազդեցությունների հակազդելու այդ ձգտումը միահյուսվում էր ստրատեգիական մտահոգությունների, որոնք, իբր, նպատակ ունեին ավելացնել երկրի պաշտպանողականությունը: Նման պայմաններում հայտնի հրապարակագիր Վա-Նյուն (Վալա Նուրեդդինը) գտավ, որ ստրատեգիական սխալ է սահմանամերձ շրջանների զարգացման համար հոգ չտանելը: Նրա կարծիքով, ընդհակառակը, է՛լ ավելի պետք էր հոգ տանել այդ շրջանների զարգացման մասին, ավելացնել սահմանամերձ շրջանների պոտենցիալը և՛ բնակչության քանակով, և՛ զարգացման մակարդակով:

Վա-Նյուն հիշեցնում էր, որ այդ կարծիքը բաժանում է նաև պետական և զինվորական փորձառու գործիչներ, որոնց հետ ինքը մոտիկից շփվել էր ¹⁴⁶:

Իսկ Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի քաղաքական և տնտեսական աշխարհագրության դասախոս դոկտ. պրոֆ. Համիդ Սադի Մելեմը, 1955 թվականի տվյալներով, ուսումնասիրելով բնակչության աշխարհագրական տեղաբաշխումը, հանգեց այն եզրակացության, որ մեծ կարևորություն պետք է տալ սահմանամերձ շրջանների զարգացմանը, բնակեցմանը, մասնավորապես մեծ, բազմամարդ քաղաքների առաջացմանը, որպես տնտեսական-մշակութային խոշոր կենտրոնների, հակառակ հարևան երկրների: Ինչպես ինքն է ձևակերպում,

հարևան երկրների դեմ պայքարն ունի երկու ուղղություն. բնակչության խտությունը և մշակութային կենտրոնի գերազանցությունը:

Համիդ Սադի Սելենի կարծիքով, այդ տեսակետից հոգատարության կարիք զգացող երկու շրջաններ կան Թուրքիայում:

Առաջինը Կարսի-Էրզրումի շրջանն է, որը թեև բնակչության խտությամբ Թուրքիայի աչքի ընկնող շրջաններից մեկն է, այնուամենայնիվ, այդ խտությունն այնքան բարձր չէ, որքան այն շարունակում է բարձրանալ Թուրքիայի սահմաններից դուրս ¹⁴⁷, հարևան երկրներում: Նրա կարծիքով, խիտ բնակեցված մի շրջանի կողքին մոտ բնակեցված շրջանի առկայությունն առաջիկայում կարող է անպատեհություններ ներկայացնել մոտ բնակեցված շրջանի համար: Այն պետք է լցնել ¹⁴⁸, որպեսզի կարողանա պայքարել քաղաքական սահմաններից դուրս շարունակվող խտությունների դեմ ¹⁴⁹: Ինչ վերաբերում է մշակութային կենտրոնի գերազանցությանը, ապա Համիդ Սադի Սելենի կարծիքով, անհրաժեշտ է ունենալ մեծ մի կենտրոն՝ պատմական կենտրոն հանդիսացող Երևանի դեմ ¹⁵⁰: Նա գոհունակությամբ նշում է, որ Էրզրումում Արաբյուրքի անվան համալսարանի հիմնելը այդ ուղղությամբ արված մի քայլ է ¹⁵¹:

Երկրորդը Արևելյան Միջերկրականի, հիմնականում Կիլիկիայի շրջանն է, որը Միքիայի հյուսիսային շրջանի հետ կազմում է աշխարհագրական ամբողջություն: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը այդ շրջանն ամբողջությամբ գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում, որպես առանձին վիլայեթ՝ Հալեպի վիլայեթ: Այն ժամանակ Հալեպ քաղաքն ամբողջ շրջանի խոշորագույն տնտեսական-վարչական կենտրոնն էր: Առաջին համաշխարհային պատերազմից հետո հաստատված քաղաքական սահմանները շրջանը բաժանեցին երկու մասի: Համիդ Սադի Սելենի կարծիքով, «կամա թե ակամա առաջացել է պայքար մշակութային կենտրոնի համար» և 1939 թվականին Միքիայի հողերից Անթաքիայի և Իսկենդերունի անցումը Թուրքիայի՝ մի քայլ էր այդ հարցն ի նպաստ Թուրքիայի լուծելու ուղղությամբ ¹⁵²: Այնուամենայնիվ, այստեղ դարձյալ զգացվում էր մշակութային կենտրոն ունենալու

կարիքը՝ պատմական կենտրոն հանդիսացող Հալեպի դեմ¹⁵⁵։ Համիդ Մադի Սելենը գոհունակությամբ նշում է, որ արագորեն աճում է հսկենդներուն քաղաքը¹⁵⁶։

Նշենք, որ Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի ուսանողներից մեկը, հանդես գալով «Ջումհուրիյե» թերթի ազատ սյունակում, (առանց Երևանի անունը հիշելու) կրկնեց Երևանի և Հալեպի ազդեցությանը հակադրվելու վերաբերյալ իր դասախոսի մտքերը¹⁵⁷։

Կարծում ենք, որ արևելյան վիլայեթների խառնությունը բարձրացնելու անհրաժեշտությունը բաժանող այդ կարծիքների հիմքում ընկած են քաղաքական-ստրատեգիական նույն մտահոգությունները, թեև ոչ միշտ են բացահայտվում այդ «անհրաժեշտության» դրդապատճառները։ Որպես օրինակ բերենք Շելվեթ Սյուրեյայի հետևյալ կարծիքը. «Ազգային քաղաքականության հիմքը պետք է լինի ոչ թե արևելյան վիլայեթների դատարկվելը բնակչությունից, այլ ընդհակառակը՝ նրա բնակեցումը։ Այդ բնակեցման հարցում, գիտակցորեն անցկացվող մի արդյունաբերականացում, այսինքն՝ տեխնիկական և մշակույթը արևելյան վիլայեթներ տանելը պետք է լինի պետության մեծ պայքարը, այն էլ՝ շտապ և կազմակերպված պայքարը»¹⁵⁸։

Արտաքին ազդեցություններին հակադրվելու ցանկության արտահայտություն է, որ չնայած արևելյան վիլայեթների մի շարք քաղաքներում բացակայում էր էլեկտրիֆիկացումը, կամ հեռու էր պահանջմունքները բավարարելուց, արդեն սկսվել է մի քանի գյուղերի էլեկտրիֆիկացումը։

«Ջումհուրիյե» թերթի թղթակից Մագուն Թանժուն նշելով այն փաստը, որ Մարդինի վիլայեթի միայն 13 գյուղերում էլեկտրականություն կա, գրում է. «Որպեսզի օտարի առաջ ամոթալի չլինի, ներկայումս մեր մեծերը հրամայում են, որ էլեկտրաֆիկացվեն սահմանամերձ գյուղերը, որոնք հանդիպակաց կողմից դիտվելու դեպքում կշողան լույսերի մեջ»¹⁵⁹։

Քաղաքական դրդապատճառներից մեկը, որը կառավարող շրջաններին դրդում էր շահագրգռվել արևելյան վիլայեթներով, քր-

դական հարցն է:

Ամեն անգամ, երբ աշխուժանում էր ազգային իրավունքների համար պայքարն Իրաքյան Բուրդիստանում կամ Թուրքիայի քրդաբնակ վիլայեթներում, արևելյան վիլայեթներում ուժեղանում էին ճնշումն ու բռնությունները:

Թուրքական առաջադիմական մտավորությունը, թեև ոչ հետևողականությամբ, սակայն մեղադրեց կառավարող շրջաններին՝ քրդերի դեմ գործադրվող բռնությունների համար: Նույնիսկ մտավորականության կամ բյուրոկրատիայի հետադեմ ներկայացուցիչներն արտահայտվեցին ավելորդ, անտեղի բռնությունների դեմ, բանի որ դրանք հակառակ արդյունքն էին տալիս՝ քրդերին մղում հակադրվել պետությանը, թուրքական ազգայնականությանը և խափանում քրդերին ծուլելու հեռանկարները:

Հետևաբար, բռնությունը «դատապարտող» կարծիքների հիմքում միշտ չէ, որ ընկած են ժողովրդավարական կամ հումանիստական սկզբունքներ: Բացի դրանից, սոցիալ-քաղաքական ինչպիսի հայացքների հետ էլ առընչվեին այդ կարծիքները, չյուրացվեցին կառավարող շրջանների կողմից: Ուստի այդ կարծիքները, որոնց ստորև կծանոթանանք, պատմության համար արժեքավոր են նրանով, որ ուղղակի կամ անուղղակի հաստատում են կառավարող շրջանների և տեղական իշխանությունների խտրական վերաբերմունքը, գործադրված ճնշումն ու բռնությունները և քրդական հարցի լուծման համար առաջարկում տնտեսական-մշակութային միջոցառումներ, որոնք, թեև ոչ անմիջապես, մերժումներից ու տատանումներից հետո, հետգիտես յուրացվում են կառավարող շրջանների կողմից:

Հրապարակագիր Ռեֆիկ Նոյանը 1953 թվականին, «Կաթան» թերթի մի խումբ թղթակիցների հետ արևելյան վիլայեթներն այցելելուց հետո, գրեց, որ շրջանում ճանապարհները հեռու են պահանջմունքները բավարարելուց և գյուղերի մեծ մասում դպրոցներ չկան: Ուստի առաջարկում էր առաջին հերթին զարկ տալ ճանապարհաշինարարությանը և դպրոցական ցանցի ընդարձակմանը՝ վերացնելու համար բնակչության մեջ տարածված այն համո-

զումը, որ «կառավարությունը չի հոգում մեր մասին», կամ «չեն ուզում, որ սովորենք»¹⁵⁸:

Նման առաջարկներ կատարում էր մահ հայտնի հրապարակագիր Ֆենի Բաշկուտը, որն ավելի բացահայտ ձևով էր կանգնած բուրքացման դիրքերում: Նա թեև Թուրքիայի քրդերին ու արաբներին էր ծագումով բուրք համարում, այնուամենայնիվ քննության էր առնում այն հանգամանքը, որ ազգային ընդհանրություններից բացակայում էին լեզվի և այսպես կոչված շահերի ընդհանրությունը: Նա փաստանքով արձանագրում էր, որ քրդերեն կամ արաբերեն են խոսում արևելյան վիլայեթների բնակչության կարևոր մի մասը, օրինակ՝ Բիթլիսում՝ 63%-ը, Դիարբեկիում՝ 64%-ը, Հաքյարիում՝ 88%-ը:

Նրա կարծիքով, եթե իշխանություններն ուզում են, իրոք, ձեռք մեկնել արևելյան վիլայեթներին, ապա ամենից առաջ պետք է զբաղվել լեզվի հարցով¹⁵⁹, այսինքն՝ բուրքական դպրոցների ցանցն ընդարձակելու շնորհիվ ավարտել ձուլումը: Չնայած ազգայնականությունը, ըստ էության, այն գաղափարախոսությունը չէ, որ կարողանա իր շուրջը համախմբել ոչ բուրք ժողովուրդներին, սակայն հողվածագրի կարծիքով, արևելյան վիլայեթների զարգացմամբ ինչ-որ չափով հետաքրքրվելը կհեշտացնի այդ համախմբումը, ընդհանուր շահերի գիտակցության առաջացումը: Նա, անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Ինչ վերաբերում է շահերի միասնության, ցարդ ինչ օգուտներ ենք ապահովել այդ շրջանին (արևելյան վիլայեթներին - Հ.Գ.) որ մեան եզրակացության հանգեմք: Դպրոցներ կա՞ն: Ճանապարհներ կա՞ն: Ջուր կա՞: Բժիշկներ կա՞ն: Բնակարաններ կա՞ն: Ժամդարմերիայից բացի մրանց ի՞նչ ենք տարել, որպեսզի մրանք հնարավորություն ունենային մտածելու, թե մեզ հետ ունեն շահերի ընդհանրություն»¹⁶⁰:

Բարձրաստիճան զինվորական Ֆարուկ Գյուվենքյուրթը, կառավարության ներկայացրած 19. 9. 1967 թվակիր գաղտնի տեղեկագրում¹⁶¹, խոսելով քրդական վտանգի լրջության մասին՝ առաջարկել է մի շարք միջոցառումներ՝ վնասագերծելու այդ վտանգը, այդ թվում՝ այնպիսի միջոցառումներ, որոնք վերաբերում են արևե-

լյան վիլայեթների զարգացմանը: Ֆարուք Գյուլենթյուրքը իր տեղեկագրով կառավարությանն առաջարկել է. «Հարավ-արևելյան վիլայեթներում ամենակարճ ժամանակում ավարտել հասարակական, մշակութային, տնտեսական միջոցառումները: Ջիզրե-Սիլոպիի ¹⁶² շրջանում պետական սեկտորին պատկանող մեկի փոխարեն 50-60 օրինակելի խոշոր տնտեսություններ հիմնել տրված հողերում, Սդերդի և Վանի շրջաններում արագորեն զարգացնել շաքարի և ցեմենտի արդյունաբերությունը» ¹⁶³:

Հայտնի պետական-քաղաքական գործիչ Ավնի Դոդանը, որը արևելյան վիլայեթներում բարձր պաշտոններ է վարել և քաջատեղյակ է քրդերի կենցաղին, բարքերին, սովորություններին ու ձգտումներին: «Դյունյա» թերթի 1962 թվականի սեպտեմբերի 3-10 համարներում հրատարակել է մի հոդվածաշար, որտեղ հայտնում է, որ ճնշումն ու բռնությունները ոչ մի արդյունք չեն ունեցել քրդական հարցի լուծման գործում: Ավնի Դոդանը կառավարությանը առաջարկում է հոգ տանել արևելյան վիլայեթների տնտեսական զարգացման համար, ընդարձակել դպրոցական ցանցը, բուրդ երեխաներին փոքր հասակից դաստիարակել պանթուրքիզմի ոգով՝ օգտագործելով մասն մահմեդական կրոնը: Ավնի Դոդանի կարծիքով, իբր, «ոչ թուրքական տարրերը անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելուց հետո, իրենք արդեն կգիտակցեն, կըմբռնեն թուրքական կուլտուրայի դերն ու նշանակությունը, աստիճանաբար կմերժեն մասն թուրքական լեզվին և կուլտուրային, և, դրանով իսկ, առանց լուրջ դժվարության կլուծվի արևելյան վիլայեթների հարցը» ¹⁶⁴:

Հրապարակախոս Կայհան Սադլամեերը հավանություն չի տալիս թուրքական պաշտոնական տեսակետը պաշտպանող բարձրաստիճան մի թուրք զինվորականի այն կարծիքին, ըստ որի Թուրքիայում քրդական հարց չկա և «եթե իրոք Թուրքիայում գոյություն ունի քրդական ազգայնականություն, ապա գլուխ բարձրացնելու դեպքում ունենք այնքան ուժ, որ կարող ենք անմիջապես ճնշել»: Կայհան Սադլամեերի կարծիքով, մախսթան արյունահեղության հասցնելը, պետք է որոնել հարցի լուծման այլ ուղիներ ¹⁶⁵:

Քրդական հարցը լուծելու համար արևելյան վիլայեթները զարգացնելու գաղափարը, չհաշվելով բացառությունները, արժանացել էր ընդհանուրի, այդ թվում՝ կառավարող շրջանների հավանությանը: Այդ պատճառով մենք զանց առանք այն կարծիքները, որոնք առաջարկում էին ո՛չ միայն տնտեսական-մշակութային, այլև սոցիալական միջոցառումներ, ինչպես հողային ռեֆորմը, բանի որդրանք դեռ յուրացված չէին կառավարող շրջանների կողմից: Ուստի բերում ենք մտավորականության «առաջադիմական» թևին պատկանող այդ կարծիքներից միայն մեկը՝ ցույց տալու համար, որ անգամ սոցիալական վերափոխումներ անցկացնելու գաղափարի հիմքում ընկած էին ավելի շատ բաղաքական, քան սոցիալական մտահոգություններ: Ըստ այդ կարծիքներից մեկի, արևելյան վիլայեթներում պետական տնտեսությունների կողքին շտապ կերպով պետք էր հաստատել այդ տնտեսությունների օժանդակությունը վայելող մանր հողասեփականատիրություն: Հողային ռեֆորմի ձգձգումը վտանգավոր էր: Եթե արևելյան վիլայեթներում գյուղացիները արագ կարգով մանր սեփականատիրությանը տիրաճային, Թուրքիան կվայելեր իրեն կապված, խեղացի և աշխատասեր զանգվածների օգնությունը: Հակառակ դեպքում այս ընդարձակ տարածությունները, որոնք, ինչպես ներկայումս թվում է, թե կարելի էր աղաների, բեյերի, շեյխերի ու աղանդների ձեռքում պահել, վաղ թե ուշ կարող էին մեծ անկարգությունների թատերաբեմ հանդիսանալ¹⁶⁶:

Հետաքրքիր է, որ անգամ իրենք իրենց սոցիալիստ համարող մի շարք մտավորականներ մտածում էին քրդական հարցը «լուծել», առանց հարգելու քուրդ ժողովրդի ազգային իրավունքները: Իսմայիլ Բեշիկչիի վկայությամբ մի շարք գիտնականներ և գրողներ ասում են. «արևելյան վիլայեթներում քրդական ազգայնականությունը արծարծողները, հարցին աշխուժություն տվողները աղաներն են, շեյխերը և ցեղապետերը: Նրանց կվերացնենք, և իրականացնելով սոցիալիզմը, վերջ կտանք ժողովուրդների՝ միմյանց շահագործելուն: Այսպիսով, վերացրած կլինենք քրդական ազգայնականությունն էլ, քրդերեն լեզուն էլ»¹⁶⁷:

Բավարար համարենք բերված օրինակները և ամփոփումը կատարենք Դոդան Ավջըօղլու խոսքերով. «Բոլորի համար գաղտնիք չէ, որ վերջին տարիներին արևելյան վիլայեթները զարգացնելու գաղափարի հիմքում ընկած է մահ քրդական հարցում ինչ-որ լուծում գտնելու ցանկությունը»¹⁶⁸:

Ինչպիսին էլ լինի քրդական հարցի կապը սոցիալ-տնտեսական հարցերի հետ, կասկած չի կարող լինել, որ ազգային հարցը, ըստ էության, չի նույնանում սոցիալ-տնտեսական հարցերի հետ: Հետևաբար, կառավարող շրջանների կողմից մալսատեսված միջոցառումները խիստ անբավարար են սոցիալ-տնտեսական հարցերը լուծելու տեսակետից, առավել ևս՝ անգոր են լուծել ազգային հարցը:

Իրականում այդ միջոցառումները մերթ Բացահայտ, մերթ քողարկված ձևով ձգտում էին քրդերին ձուլելու շնորհիվ լուծել ազգային հարցը: Բացահայտ, կամ ոչ, ենթադրվում է, որ այդ միջոցառումների հետևանքով առաջացած փոփոխությունները կօգնեն՝ քրդերին ձուլել թուրքերին: Չարգացման ընթացքում թուրք ազգայնականների կողմից ամեն մի ընդհանրության առաջացում ընդունվում էր որպես ազգային ընդհանրության մոր նշան: Օրինակ, տնտեսական ինտեգրացումը դիտվում էր որպես ազգային ինտեգրացման հասնելու ուղիներից մեկը¹⁶⁹, ըստ որում՝ ազգային ինտեգրացում ասելով հասկացվում էր ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին՝ քրդերի, միաձուլումը թուրքերին¹⁷⁰:

Այդ տեսակետից, թուրք ազգայնականներին լավատեսության էր մղում այն, որ քրդերի մոտ դեռ գերիշխում էր ոչ թե ազգային գիտակցությունը, այլ՝ ցեղային պատկանելության զգացումը: Քրդական ցեղերը դիտվում էին որպես ազգային գույն չունեցող միություններ:

Հակառակ այն բանին, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կառավարող շրջաններն ավելի ու ավելի էին շահագրգռվում արևելյան վիլայեթներով, սակայն ժամանակի ընթացքում անհամաչափությունը՝ արևելյան վիլայեթների ու Թուրքիայի մնացյալ մասի միջև առավել խորացավ, այլ կերպ ասած, ավելացել

էր արևելյան վիլայեթների հարաբերական հետամնացությունը:

Թե այսուհետև զարգացման տեմպերի ինչպիսի տարբերություններ կլինեն արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև, փաստերը ցույց են տալիս, որ թե՛ մեկում, թե՛ մյուսում առաջընթացն իրականացվում էր տիրապետող դասակարգերի օգտին՝ բնակչության մեծ մասին հետամնացության, բշվառության և տգիտության դատապարտելու շնորհիվ: Այլ բացատրությամբ այն հետ էր մնում պահանջների աճից, կապված՝ մի կողմից՝ բնակչության աճին, որը կրում էր բավականին դինամիկ բնույթ, մյուս կողմից՝ պահանջումների պատմական զարգացմանը, թեև այդ զարգացումը տեղի էր ունենում դանդաղ տեմպերով:

Օրինակ, անկարելի է չնկատել գրագիտության առաջընթացը: 1927 թվականին գրագետները Թուրքիայի բնակչության հազիվ 11%-ն էին կազմում, իսկ 1965 թվականին այդ տոկոսը բարձրացավ 49-ի: Սակայն այդ ընթացքում աճեց մահ անգրագետների բացարձակ քանակը՝ 1927 թվականի 9,4 միլիոնից 1965 թվականին բարձրանալով 13,1 միլիոնի ¹⁷¹:

Եթե գյուղատնտեսության մեքենայացումը դիտում ենք որպես առաջընթաց, ապա դժվար չէ նկատել, որ տիրող ագրարային հարաբերությունների պայմաններում այն սպառնալիքի տակ է առնում կալվածատիրոջ հողը մշակող գյուղացու հացը, ստիպում նրան հեռանալ գյուղից ¹⁷², դիմել դեպի քաղաքները, որտեղ բավարար քանակով արդյունաբերական ձեռնարկություններ չգտնվելու հետևանքով, հարկադրված էր պատահական աշխատանքով մի կերպ քարշ տալ իր գոյությունը: Բնական աճը ևս տիրող սոցիալ-տնտեսական պայմաններում դժվարացնում էր ապրուստը գյուղում և մտավորապես ունենում այնպիսի հետևանքներ, ինչպիսին ունենում էր գյուղատնտեսության մեքենայացումը:

Նման պայմաններում դժվար էր զարգացման արտահայտությունը համարել միայն քաղաքային բնակչության աճը: Այդ աճը, իրոք, կար, և առավել կամ նվազ չափով նշան էր առաջընթացի: Եթե քաղաքաբնակները, 1927 թվականին կազմում էին Թուրքիայի բնակչության 23%-ը, ապա այդ հարաբերությունը 1968 թվականին

քարձրացավ 36%-ի:

Սակայն հակառակ բնակչության հոսքին դեպի քաղաքները և առանձին գյուղերի ամայացմանը, ամբողջությամբ վերցրած իր հերթին աճեց նաև գյուղական բնակչությունը՝ 1927 թվականի 10,9 միլիոնից 1968 թվականին դառնալով 21,4 միլիոն ¹³:

Նշանակում է, բնական աճն ու գյուղատնտեսության մեքենայացումը ոչ միայն գյուղացուն վանում էին դեպի քաղաքները, այլև՝ լեռներն ու անտառները՝ նրանց դատասպարտելով ավելի ու ավելի չքավոր կյանքի: Սակայն նրանք գերադասում էին նաև մնալ գյուղում, կալվածատիրոջ հողի վրա կամ սեփական մանր տնտեսության մեջ՝ առաջին դեպքում հանդուրժելով շահագործման ծանր պայմանները ¹⁴, երկրորդ դեպքում՝ տնտեսության արդեն սահմանափակ եկամուտները բաժանելով ընտանիքի աճող անդամների միջև՝ ավելացնելով քաղցից տառապողների թիվը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է ասել հետևյալը.

Հայերի ցեղասպանության և Արևմտյան Հայաստանից նրանց բռնի տեղահանության հետևանքով, ինչպես նաև ոչ բուրք ժողովուրդների հեռացմամբ, արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական-տնտեսական վիճակում տեղի ունեցած քանակական ու որակական մեծ փոփոխություններ: Դեմոգրաֆիական վիճակում առաջացած կարևոր փոփոխություններից մեկը բնակչության բլի կրճատումն էր, որը մեծ փոփոխություններ առաջացրեց արևելյան վիլայեթների տնտեսական դրության մեջ: Բազմաթիվ քաղաքների ու գյուղական շրջանների առավել կամ նվազ չափով ամայացումը հանգեցրեց հազարավոր արհեստավորական-արդյունաբերական և գյուղատնտեսական տնտեսությունների անհետացմանը: Այսինքն՝ քանակական առումով մեծ փոփոխություններ առաջացրեց տնտեսության մեջ: Սակայն բնակչության բլի կրճատումը տեղի էր ունեցել ոչ պատահականորեն, այլ՝ «ընտրովի»՝ բնակչության այն մասի անհետացմամբ, որն առաջատար դեր էր խաղում արևելյան վիլայեթների տնտեսության մեջ: Ուստի տնտեսական անկումը եղավ շատ ավելի խոր՝ և՛ քանակական, և՛ որակական առումով: Դրա հետևանքով, ընդհանրապես բնակչության հարաբերությամբ, ավելի շատ կրճատվեց քաղաքային բնակչությունը:

Քանակական և որակական փոփոխություններ նկատվեցին տնտեսության բոլոր ճյուղերում: Ըստ որի երկու փոփոխությունների միջև կար որոշ համապատասխանություն: Ինչպես տեսանք, որակական փոփոխություններ առաջացան մույնիսկ անասնապահության մեջ, որը քանակական առումով համեմատաբար քիչ էր տուժել, քանի որ անասնապահությամբ զբաղվում էին ոչ միայն արևելյան վիլայեթներից հեռացող, այլև, և ավելի շատ, արևելյան վիլայեթներում մնացող ժողովուրդները: Ամենամեծ որակական փոփոխությունները նկատվեցին արդյունաբերության մեջ և արհեստներում, որոնք քա-

նակական առումով տնտեսության ամենից ավելի տուժող ճյուղերն էին: Երկրագործությունը և՛ քանակական, և՛ որակական փոփոխությունների տեսակետից զբաղեցնում էր միջին տեղը:

Առավել խոշոր որակական փոփոխությունը սակայն, արևելյան վիլայեթների տնտեսական կառուցվածքում տեղի ունեցածն էր: Արդյունաբերությունն ու արհեստները անհետացել էին՝ իրենց տեղը զիջելով երկրագործությանը: Երկրագործությունն իր հերթին խիստ տուժել էր և իր տեղը զիջել անասնապահությանը: Անասնապահությունը տուժել էր մեղմ ձևով և դարձել տնտեսության գերիշխող ճյուղը:

Տնտեսության առանձին ճյուղերի և ենթաճյուղերի անկումն իր հերթին բացասական ազդեցություն գործեց մյուսների վրա: Թուլացան կապերը տնտեսության տարբեր ճյուղերի և տնտեսական առանձին շրջանների միջև: Արևելյան վիլայեթների տնտեսությունը, ավելի քան նախկինում կրում էր բնատնտեսային բնույթ: Այդ բոլորի հետևանքով առևտուրը կորցրեց իր կենսունակությունը: Կիսովին ցամաքեցին տեղական իշխանությունների եկամտի աղբյուրները: Դա էլ դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի այլ փոփոխությունների հետ միասին դժվարացրեց արևելյան վիլայեթների հետագա զարգացումը, քանի որ, ըստ սահմանված կարգի, մի շարք սոցիալ տնտեսական-մշակութային հարցեր, ճանապարհաշինարարությունից մինչև դպրոցաշինարարություն, պետք է լուծվեին տեղական միջոցների հաշվին:

Արդյունաբերության, մանուֆակտուրայի, մանր ապրանքային արտադրության անհետացումը մի կողմից, մյուս կողմից՝ հայերից և այլ ոչ թուրք ժողովուրդներից դատարկված հողերի բռնագրավումը կալվածատերերի կողմից ծանր հարված հասցրին նոր ձևավորվող բուրժուական հարաբերություններին: Շրջանում տիրապետող դարձան կիսաֆեոդալական ագրարային հարաբերությունները:

Արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական-տնտեսական վիճակում նմանօրինակ փոփոխություններ առաջացրին պատերազմը, պատերազմի ընթացքում երիտթուրքերի վարած քաղաքականությունը, թուրքական իշխանությունների կողմից Կարսի և հարակից շր-

ջանների զավթումը, քրդերի նկատմամբ գործադրված հալածանքները: Արևելյան վիլայեթների, ավելի ճիշտ՝ նրա առավել սահմանամերձ շրջանների տնտեսության վրա, բացասական ազդեցություն գործեց նաև առևտրական-տնտեսական կապերի կազմալուծումը՝ այդ շրջանների և հարևան երկրների միջև տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերի հետևանքով: Այդ բոլորը միահյուսվեցին իրար, բարդվեցին միմյանց վրա, որի հետևանքով ինչ-որ չափով խճճվեցին պատճառների և հետևանքների միջև գոյություն ունեցող կապերը: Այնուամենայնիվ, տարբեր պատճառներով առաջացած փոփոխությունները մի շարք առանձնահատկություններով տարբերվում էին միմյանցից: Օրինակ, հայերի և ոչ թուրք այլ ժողովուրդների բնաջնջմամբ ու հեռացմամբ առաջացած փոփոխություններն ընդգրկում էին ամենաընդարձակ տարածություններ, բոլոր արևելյան վիլայեթները: Վերջապես այդ փոփոխություններն աչքի էին ընկնում ժամանակի դեմ ցուցաբերած իրենց կայունությամբ: Տասնամյակներ անցնելուց հետո էլ մի շարք արևելյան վիլայեթների հետամնացությունը բացատրել ռազմական գործողությունների պատճառած ավերներով՝ ծածկելով երիտթուրքերի կողմից գործածված մեծագույն ավերը, քեմալականների հալածանքը հայերի, հույների, ասորիների, քրդերի նկատմամբ, ինչպես այդ արվում է թուրքական պատմագրության մեջ՝ հեռու է իրականությունից:

Ներկա ուսումնասիրության արդյունքները, չհերքելով տարբեր պատճառների ազդեցությունը, հաստատում են, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական վիճակում առաջացած ցավալի փոփոխությունները, տնտեսական դժվարությունները հիմնականում կապված էին հայերի և ոչ թուրք այլ ժողովուրդների բնաջնջման և հեռացման հետևանքով բնակչության թվի կրճատման և բնակչության ազգային կազմում տեղի ունեցած փոփոխությունների հետ:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական և տնտեսական վիճակում առաջացած փոփոխությունների ուսումնասիրությունը, նրանց մալասալատերազմյան և հետպալատերազմյան վիճակի համեմատությունը,

ինչպես տեսանք, ներկա աշխատության հիմնական խնդիրն է: Սակայն մենք կանգ առանք նաև Առաջին համաշխարհային պատերազմից հետո արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև գոյություն ունեցող տարրերությունների վրա, քանի որ այդ տարրերությունները խորացել էին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում դեմոգրաֆիական-տնտեսական վիճակում առաջացած խնդիրների հետևանքով, և դրանց ուսումնասիրությունը իր հերթին լույս է սփռում ուսումնասիրվող հարցի վրա: Այն համզամանքը, որ հետպատերազմյան վիճակագրական տվյալներն առավել հավաստի և մանրամասն տեղեկություններ են տալիս դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի մասին՝ եզրակացության բաժնում, դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի առանձին կողմերի վերլուծությունից ստացված արդյունքներն ի մի բերելու և դրանց միջև համեմատություն անցկացնելու շնորհիվ:

Դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի տարբեր կողմերի վերաբերյալ 1927 թվականի վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական-տնտեսական տարբեր հատկանիշներով հազեցվածության աստիճանի խիստ ցածր լինելը:

Նկատելի է, որ տարբեր հատկանիշներով հազեցվածության աստիճաններն իրենց մեծությամբ տարբերվում են միմյանցից, այսինքն՝ արևելյան վիլայեթները համեմատաբար շատ են հազեցած դեմոգրաֆիական-տնտեսական հատկանիշներից մեկով, քան՝ մի ուրիշով: Այդ տարրերությունները, բնականաբար, պատահական չեն, քանի որ դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի այլազան կողմեր միանգամայն տարբերվում են միմյանցից՝ արտադրողական ուժերի զարգացման մակարդակի հետ ունեցած կապի և հարաբերական ինքնուրույնության աստիճաններով:

Այդ պատճառով, կարելի է ի մի բերել դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի տարբեր կողմերի վերաբերյալ հազեցվածության աստիճանները, և տեսնել, թե արևելյան վիլայեթներն ավելի շատ ինչի՞ պակասից են տառապում: Սակայն, հատկանիշների այդ բազմությունից նախընտրաբար առանձնացնում ենք մի քանիսը, որոնք ա-

ռավել էական են և իրար հետ սերտորեն կապված լինելով՝ կազմում են հատկանիշների առանձին մի խումբ, որի մեջ անհամատեղելի են մնացյալ հատկանիշները: Հատկանիշների այդպիսի խումբն հստակ պատկերացում է տալիս ամբողջի մասին: Նման հատկանիշների յուրահատուկ խումբ է կազմում տարածությունը, որը բացի տնտեսական նշանակությունից, ներկա աշխատության մեջ չափման հարաբերական միավոր է, և դեմոգրաֆիական-տնտեսական կողմերից երբեք՝ բնակչությունը, քաղաքային բնակչությունը, արդյունաբերող բնակչությունը:

Դժվար է ներկայացնել նշված հատկանիշներից յուրաքանչյուրի արտադրողական ուժերից կախվածության և հարաբերական ինքնուրույնության աստիճանը: Սակայն նրանք այդ տեսակետից կազմում են որոշակի շարք, որտեղ հայտնի է յուրաքանչյուրի տեղը: Ըստ որի, ամեն մեկը բերված կարգով, նախորդի համեմատությամբ ավելի սերտ էր առնչվում արտադրողական ուժերի զարգացման մակարդակին և այդ պատճառով հանդիսանում տնտեսական մակարդակի զարգացման առավել բարձրորակ և հավաստի մի չափանիշ:

Հետևաբար, արևելյան վիլայեթների հազեցվածության աստիճանական միավորը (Թուրքիայի տարածության 37,2%-ը, բնակչության 24,4%-ը, քաղաքային բնակչության 17,9%-ը, արդյունագործող բնակչության 13,7%-ը) մեր կարծիքով արևելյան վիլայեթների հետամնացության պրոֆիլային արտահայտությունն է: Բնականաբար, Թուրքիայի մնացյալ մասում մի հատկանիշից մյուսին անցնելիս, հակառակը, նկատվում է աստիճանական աճ: Նրան բաժին է ընկնում Թուրքիայի տարածության 62,8%-ը, բնակչության 75,6%-ը, քաղաքային բնակչության 82,1%-ը և արդյունագործող բնակչության 86,3%-ը:

Իհարկե, եթե մեր ձեռքի տակ ունենայինք այնպիսի տվյալներ, որոնք ցույց տային, թե արևելյան վիլայեթների այդ արդյունագործողները երկրի ազգային եկամտի կամ համախառն արտադրանքի ո՞ր մասն են արտադրում, ապա կտեսնեինք, որ շատ փոքր մաս են ստեղծում, և մեր պատկերացումը արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի մասին՝ կլիներ ավելի ամբողջական:

Վերևում նշված կարգով մի հատկանիշից մյուսին անցնելիս՝ արևելյան վիլայեթներին ընկնող բաժնի նվազումը մի ընդհանրացում է, որը բնորոշում է ամբողջությամբ բերքրած արևելյան վիլայեթների և առանձին վիլայեթների, որոնք կարող են ունենալ տարբեր դիմագծեր: Հետաքրքրական է, որ արևելյան վիլայեթների ընդհանուր դիմագիծը պահպանվում է, այսինքն՝ տարածության հարաբերությամբ քիչ բնակչություն, ավելի քիչ քաղաքային բնակչություն, արդյունագործող քիչ բնակչությամբ խմբավորված 16 սանջակներից ինը՝ Վանը, Բիթլիսը, Կարսը, Սվազը, Էրզրումը, Էյսազիզը, Մարաշը, Էրզինջանը, Դիարբեքիրը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արևելյան վիլայեթների մեջ հայ ազգաբնակչության քվով գրավում էին առաջին ինը կամ տասը տեղերը:

Մյուս սանջակներն արևելյան վիլայեթների ընդհանուր դիմագծից տարբերվում էին որոշ շեղումներով: Օրինակ՝ Մալաթիան և Շաբին-Կարահիսարը տարբերվում էին նրանով, որ տարածության համեմատությամբ ունեին ավելի բնակչություն՝ հարաբերական իմաստով: Ոմանք ավելի շատ «նմանվում էին» Թուրքիայի մնացյալ մասին, սակայն չունեին համապատասխան քանակով արդյունագործողներ, ինչպես Ամասիան: Միայն մեկ սանջակի՝ Անթրի դիմագիծը համընկնում էր Թուրքիայի մնացյալ մասի դիմագծին: Նրան բաժին էր ընկնում Թուրքիայի տարածության 1,47%-ը, բնակչության 1,58%-ը, քաղաքային բնակչության 2,76%-ը, արդյունագործողների 3,07%-ը:

Նման շեղումների շնորհիվ հայաբնակ վիլայեթների միայն չորրորդ խումբը, այսինքն՝ նախկինում համեմատաբար նվազ հայաբնակ սանջակների խումբը, ամբողջությամբ վերցրած կորցնում է արևելյան սանջակներին հատուկ տիպիկ հետամնացության դիմագիծը: Հանդես է գալիս որպես միջակա տիպ արևելյան մյուս սանջակների և Թուրքիայի մնացյալ մասի միջև: Այդ խմբին բաժին է ընկնում Թուրքիայի տարածության 8,06%-ը, բնակչության 7,98%-ը, քաղաքային բնակչության 8,83%-ը, արդյունագործող բնակչության 7,08%-ը:

Եթե բնակչության, մասնավորապես արդյունագործող քա-

ղաքային բնակչության սակավությունը դիտում ենք որպես արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակի արտահայտություն , բնականաբար, չենք բացառում դրանցից ամեն մեկի նշանակությունը տնտեսական զարգացման մեջ: Այստեղ մեր կարծիքը տարբերվում է թուրք բուրժուական սոցիոլոգների տեսակետից: Նրանք, անտեսելով դեմոգրաֆիական վիճակի տարբեր կողմերի կախվածությունը՝ արադրողական ուժերի զարգացման մակարդակից, գերազնահատում են նրանցից մեկի կամ մյուսի նշանակությունը: Բնակչության կամ քաղաքային բնակչության սակավությունը նրանց կողմից դիտվում է ոչ թե հետամնացության հետևանք այլ որպես պատճառ:

Դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի մի քանի կողմերի համատեղ ուսումնասիրությունն օգնում է մեզ չընկնել մոլորության մեջ: Արևելյան վիլայեթների սակավաբնակչությունից ելնելով՝ կարևորություն ենք տալիս դրան, որպես զարգացումը արգելակող մի գործոնի, սակայն կանգ ենք առնում ավելի խոշոր և կարևոր մի պակասի՝ արտադրողական ուժերի զարգացման մակարդակին:

Ի դեպ, գիտական ոչ մի սկզբունք մեզ չի պարտադրում դեմոգրաֆիական վիճակի նշված կողմերը դիտել բերված կարգով, ամեն մեկն անպայման հարաբերության մեջ դնել նախորդի հետ, բայց ոչ հաջորդի: Այդ դեպքում նկատում ենք, որ արևելյան վիլայեթներն իրենց արդյունագործող բնակչության հարաբերությամբ ունեն ավելի շատ քաղաքային բնակչություն, դրանից էլ՝ ավելի տարածություն (տեղիտորիա): Հարց է առաջանում, դրանից ո՞րն է խանգարում արևելյան վիլայեթների զարգացմանը: Մեր կարծիքով, ոչ մեկը: Ընդհակառակը, ամեն մեկը ինչ-որ չափով պոտենցիալ հնարավորություններ է բովանդակում զարգացման համար, սակայն այդ հնարավորությունների իրականացումը կախված է արտադրողական ուժերի զարգացման մակարդակից:

Դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի տարբեր կողմերի ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի խորը անհամաչափություն արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև՝ իրակա-

նում ավելի խորը, քան երևում է ներկա աշխատությունից, որն իր արջև նպատակ դնելով հարցերի ուսումնասիրությունը, չէր կարող այդ անհամաչափությունը ներկայացնել իր ամբողջ խորությամբ:

Անհամաչափությունն արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև գոյություն ունեւր մակ Առաջին համաշխարհային պատերազմի մախօրյակին: Այն առաջացել էր դարերի ընթացքում, հիմնականում օսմանյան իշխանությունների՝ արևելյան վիլայեթներում վարած քաղաքականության, մասնավորապես սխտեմատիկ կոտորածների, հարստահարությունների և այլ բռնությունների հետևանքով: Այդ պատճառով էլ արևելյան վիլայեթներում տիրող վիճակը մրանց բնական վիճակը չէր: Հակառակ դրան, արևելյան վիլայեթները դեռևս ունեին անցյալից ժառանգած և մոր ձեռք բերած արժեքավոր շատ բան, որոնք խիստ անհրաժեշտ էին հետագա զարգացման համար, եթե նպաստավոր քաղաքական պայմաններ լինեին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տարբեր ժողովուրդների բնաջնջմամբ և բռնագաղթով, հատկապես արևմտահայության կորուստից հետո, համարյա ամբողջովին անհետացավ այդ բոլորը, և մի անգամ ևս խորացավ անհամաչափությունն արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև: Իրականում անհամաչափության խորացումը կարող էր շատ ավելի սուր բնույթ կրել, սակայն չարաբաստիկ մի «գուգաղիպություն»՝ Թուրքիայի մնացյալ մասում մամուրիմակ փոփոխությունների առաջացումը խանգարեց դրան:

Այդ փոփոխությունները ո՛չ միայն խորացրին անհամաչափությունն արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև, այլև մեծ չափով դժվարացրին արևելյան վիլայեթների հետագա զարգացումը, այսինքն՝ պայմանավորեցին մակ այդ անհամաչափության հետագա խորացումը: Արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև գոյություն ունեցող անհամաչափությունը կարող էր աստիճանաբար մեղմանալ միայն այն դեպքում, եթե արևելյան վիլայեթներին հաջողվեք զարգանալ ավելի արագ, քան ընդհանրապես Թուրքիան: Սակայն այն դժվարությունները, որոնք առաջացել էին արևե-

լյան վիլայեթների բնակչության ազգային կազմում կատարված փոփոխությունների հետևանքով, ոչ միայն չէին արտոնում զարգացման տեմպերով գերազանցել Թուրքիայի մնացյալ մասին, այլև երկար ժամանակ խոչընդոտում էին անցյալի դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի վերականգնմանը, ինչպես ցույց են տալիս ներկա աշխատության մեջ բերված բազմաթիվ փաստեր:

Արևելյան վիլայեթները, անշուշտ, չմնացին այն վիճակում, որում գտնվում էին Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Հաջորդ տասնամյակներում, երբեմն մահ պետական միջոցառումների շնորհիվ, տեղի ունեցան որոշ դրական փոփոխություններ, որոնք այն պատրանքն էին ստեղծում, իբր «արևելյան վիլայեթները կարծես թե վերսկսել են իրենց բնականոն կյանքը»¹⁷⁵: Իրականում, արևելյան վիլայեթները, հակառակ մման դրական փոփոխությունների, տասնամյակներ անցնելուց հետո էլ, դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի մի շարք կողմերով զիջում էին իրենց անցյալին:

Այս պատճառով չի կարելի չհամաձայնվել Մարաջողու հետ, որն արևելյան վիլայեթների աշխարհագրությանը նվիրած իր գրքում, անդրադառնալով արևելյան վիլայեթների անցյալին, նշում է. նախկինում ավելի բազմամարդ և բարեկեցիկ գյուղերի, բազմամարդ և բարեկարգ քաղաքների գոյությունը, խոսում է արհեստների ու արդյունաբերության, առևտրի, երկրագործության, առանձին դեպքերում՝ նույնիսկ ամասնապահության անցյալում ավելի զարգացած լինելու մասին: «Ոչ որ չի կարող պնդել, գրում է նա, - որ Արևելյան Անատոլիան (արևելյան վիլայեթները - Հ.Գ.) մի շարք կողմերով հասել է իր այդ նախկին վիճակին»¹⁷⁶: Միաժամանակ, հեղինակը փորձում է արդարացնել հայերի ցեղասպանությունը, գտնելով, որ «գոնե ստեղծվել է ցեղային միասնություն»¹⁷⁷:

Ինքը անհամաչափություն է նկատվում մահ արևելյան վիլայեթների ներսում, ինչպես ցույց են տալիս դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի տարբերությունները նախկինում առավել հայաբնակ և համեմատաբար նվազ հայրենակ շրջանների միջև:

Ենթադրելով, որ հայերի և Բեշիկչին, որ Հաբլարիի և

արևելյան մյուս վիլայեթների միջոց գոյություն ունեցող տարբերությունն ավելի մեծ է, քան ամբողջությամբ վերցրած արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև: Մի շարք պատճառներով Բեշիկչին իրավացի է այդպիսի անհամաչափության համար մատնանշելով միայն Հաքյարին, քանի որ նրա դիտողությունը վերաբերում է 60-ական թվականներին ¹⁷:

Սեզ հետաքրքրող ժամանակաշրջանում այդպիսի սանջակներ էին Հաքյարին, Վանը, Բիթլիսն ու Մուշը, որոնք այդ թվականներին մտնում էին մեկ վարչական միավորի մեջ՝ գրականության մեջ հիշվելով մերք որպես Բիթլիսի, մերք՝ որպես Մուշի վիլայեթ, և վերջապես՝ Բայազեդ: Այդ հինգ սանջակներին, միասին վերցրած, բաժին էր ընկնում ամբողջ արևելյան վիլայեթների տարածության 23,6%-ը, բնակչության՝ 8,9%-ը, քաղաքային բնակչության՝ 3,2%-ը, արդյունագործող բնակչության՝ 1,9%-ը: Այդ սանջակները խիստ հետ էին մաս իրենց երկրագործությամբ: Առանց հաշվի առնելու Բայազեդը, որը 1927 թ. գյուղատնտեսական հաշվառման չէր ենթարկվել, այդ սանջակներում գտնվում էին արևելյան վիլայեթներում մշակվող հողերի ընդամենը 2,9%-ը:

Այդ տոկոսներից վերջին չորսը հարաբերության մեջ դնելով տարածության տոկոսի հետ՝ ստանում ենք այդ սանջակների՝ ամբողջությամբ վերցրած արևելյան վիլայեթների համեմատությամբ հարաբերական հագեցվածության աստիճանները՝ բնակչությամբ՝ 38%, քաղաքային բնակչությամբ՝ 14%, արդյունագործող բնակչությամբ՝ 8%, և մշակվող տարածությամբ՝ 15%: Այն դեպքում, երբ արևելյան վիլայեթների՝ ամբողջությամբ վերցրած Թուրքիայի համեմատությամբ նույն հատկանիշներով հագեցվածության աստիճանները ավելի բարձր էին՝ 66, 48, 37 և 53:

Այդ սանջակների վրա պետք է ավելացնել Դերսիսը (հետագայում՝ Թունջլի) և Գենջը (հետագայում՝ Բինգյոլ), որոնք 1927թ. վարչական բաժանումով տարբեր սանջակների մաս էին կազմում և դեմոգրաֆիական-տնտեսական վիճակի տարբեր կողմերի վերաբերյալ առանձնացված վիճակագրական տվյալներ չունեն:

Մի քանի սանջակներ դեմոգրաֆիական-տնտեսական վի-

ճակի առանձին կողմերով խիստ հետ էին մնում ոչ միայն ընդհանրապես Թուրքիայից, այլև ամբողջությամբ վերցրած արևելյան վիլայեթներից: Դրանք են՝ Կարսն իր քաղաքային բնակչությամբ և արդյունաբերական աշխատողներով, Էրզինջանը՝ արդյունաբերական աշխատողներով և Մոկերը՝ մշակվող տարածությամբ:

Դրանցից մի քանիսը՝ Դերսիմը, Գեմջը, Մոկերը, Հաքյարին, Բայազեդը՝ մասամբ աշխարհագրական պայմանների, մասամբ օսմանյան տիրապետության բացասական ազդեցության, տեղի ունեցած դեմոգրաֆիական փոփոխությունների հետևանքով արևելյան վիլայեթների առավել հետամնաց շրջաններն էին համարվում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, պատերազմի ընթացքում և հետագա ժամանակաշրջանում: Խիստ հետ էր մնացել Հաքյարին, որն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին քեև մեծ քաղաքներ չուներ, այնուամենայնիվ բնակչության խտությամբ այնքան էլ հետ չէր մնում արևելյան վիլայեթներից: Հաքյարիում եթե ոչ արդյունաբերությունն ու արհեստները, ապա անասնապահության կողքին զարգացած էին երկրագործության որոշ ճյուղեր, ինչպես ծխախոտագործությունը, այգեգործությունը և այլն:

Դեմոգրաֆիական-տնտեսական այդ փոփոխությունների հետևանքով առավել հետամնաց սանջակների վրա ավելացան նորերը՝ Վանը, Բիթլիսը, Մուշը, մասամբ՝ Կարսն ու Էրզինջանը:

Այսպիսին են արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական-տնտեսական վիճակում առաջացած փոփոխություններն իրենց ընդհանուր գծերով և առանձնահատկություններով:

1. Այս մասին մանրամասն տե՛ս. Новиков А.Н. Экономика Турции в период мировой войны. Л.-М., 1935.
2. Հայերից և տարրեր ազգության պատկանող երկրագործներից դատարկված հողերում բնակվեցին սահմանափակ փորձ ունեցող երկրագործներ: Նրանց երկրագործական մշակույթի մակարդակը հեռու էր շրջանին հատուկ բնակլիմայական պայմաններից համապատասխանելուց:
3. Տե՛ս Завряев Д.С. К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, с. 301.
4. Կարելի է հիշել Վանում արհեստական ոռոգման ցանցի, մասնավորապես Շահմիրամի ջրանցքի, ինչպես նաև հայ բանբարների կողմից մեծ վարպետությամբ ջրհորներ բացելու շնորհիվ ստորերկրյա ջրերի օգտագործումը և նրանց մեծ մասամբ լրված վիճակը Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Տե՛ս Թուրքմյան Հ.Գ., Ջրաօգտագործման սխտեմը Վասպուրականում, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1967, N2-3, էջ 246-253:
5. 1925 թվականի փետրվարին, քրդական ապստամբությունը ծագելուց հետո, Մուստաֆա Քեմալը շտապ իր մոտ հրավիրեց Ստամբուլի անվտանգության կազմակերպության տնօրեն Էփրեմ Բալդարին՝ Ստամբուլի քրդերի մասին տեղեկություններ ստանալու համար: Կայացած գաղտնի տեսակցության ընթացքում, որին մասնակցում էին մեջլիսի նախագահ Քյազըմ փաշան, Էփրեմ Բալդարը հայտնեց, որ Ստամբուլում գտնվում են շուրջ 10 հազար քրդեր, որոնք մաքսատներում և բեռնաֆափման այլ կենտրոններում զբաղված են բեռնակրությամբ: Տե՛ս “Cumhuriyet”, 19.8.1971.
6. Հարցի լուծման համար օգտագործվեցին տարրեր եղանակներ՝ սկզբում մի քանի տարով պետական ծառայողների համար սահմանվեց արևելյան վիլայեթներում ծառայելու պարտավորություն. հետագայում օգտագործվեցին պետական ծառայողներին հրապուրելու եղանակներ՝ «գրկանքի շրջանում» պաշտոնավարելու համար հավելյալ վճարում, քմակելի շենքերի կառուցում, ակումբների ստեղծում և այլն: Այնուամենայնիվ, մինչև օրս հարցը բնավ չի

դադարել գոյություն ունենալուց:

7. St'u "Cumhuriyet", 2. IX. 1967:

8. St'u "Cumhuriyet", 29. VIII. 1971:

9. St'u "Ulus", 23. VIII. 1952:

10. Ըստ ժամանակակից վարչական բաժանման և մարդահամարի տվյալների (1965 թ.): Թուրքական վիճակագրությունը ըստ ազգությունների՝ տվյալներ չի տալիս, տալիս է տվյալներ ըստ լեզվական պատկանելության: Այդ տվյալների համաձայն առաջին խմբի վիլայեթներից ամեն մեկում բնակչության ավելի քան 50%-ը որպես մայրենի լեզու ընդունում էր թուրքերենը, իսկ երկրորդ խմբում՝ թուրքերենից բացի այլ լեզուներ, հիմնականում՝ քրդերեն: Վիլայեթների բնակչության ազգային կազմի վերաբերյալ որոշ մանրամասնություններ տրվում են N3 աղյուսակին կցված բացատրության մեջ:

11. 4188 կմ՝ «Ժամանակակից Թուրքիան», Երևան, 1967, էջ 121, 4173 կմ՝ Дандия Б.М., Турция, М., 1949, с. 185,

4018 կմ՝ Cillov H. Türkiye ekonomisi, Ist ., 1962, s. 359,

4 018 կմ՝ Zeytinoglu Erol, Türkiyenin ikkısadı, bünyesi dersleri, Ystambul, 1969, s. 396.

12. "Istatistik yilligi", 1960-62, s. 515.

13. Дандия Б.М. Перспективы торговых отношений СССР с Турцией, "Новый восток", М., 1925, N1/7/, с. 154.

14. St'u Дандия Б.М., Турция, М., 1949, с. 186.

15. St'u "Istatistik yilligi", 1934-35, s. 613.

16. Завриев Д.С. К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, с. 287.

17. Նույն տեղում:

18. St'u "Istatistik yilligi", 1960-62, s. 515:

19. St'u "Istatistik yilligi", 1960-62, s. 515:

20. Նույն տեղում, էջ 611-612:

21. Նույն տեղում:

22. Համեմատաբար տարբեր էր վիճակը Թուրքիայի արևելյան վիլայեթներում: Կարսն իր խճուղիներով շատ վեր էր կանգնած

Թուրքիայից՝ ամբողջությամբ վերցրած: 1942 թ. Կարսում միջին հաշվով յուրաքանչյուր 1 000 կմ տարածությունն ընկնում էին 50 կմ երկարությամբ խճուղիներ, իսկ ամբողջությամբ վերցված Թուրքիայում՝ 24 կմ: Եթե Կարսում խճուղիների 83%-ն էր գտնվում լավ վիճակում, ապա ամբողջությամբ վերցրած Թուրքիայում՝ 60%-ը:

23. Տե՛ս Давтян Б.М., Тургая, М., 1949, с. 205:

24. Նույն տեղում, էջ 186:

25. Նույն տեղում, էջ 186:

26. Տե՛ս "İstatistik yilligi", 1960-62, s. 515:

27. Տե՛ս Запруден А.С. նշվ. աշխ., էջ 258:

28. Cillov Halik. Türkiye ekonomisi, Ist ., 1962, s. 345.

29. Erim Wihat. Doğu illirene dair, "Ulus", 23.VIII. 1952.

30. Ընդհանրապես գյուղատնտեսության հետամնացության, մասնավորապես ռոտզման համակարգի բացակայության հետևանքով «երաշտը» արևելյան վիլայեթներում կրում էր մշտական բնույթ:

«Արևելյան վիլայեթներում ժողովրդական զանգվածների համար սովը տևական է: Մինչդեռ ժողովրդական զանգվածները տևականորեն կոտորվում են բոքախտից և այլ նման հիվանդություններից, այն տարիներին, երբ ձմեռը սկսվում է վաղ և տևում՝ երկար: Արևելյան վիլայեթների աղաները, իրենց մեծաքանակ անասունները առանց ծախսի մինչև գարուն պահելու համար, պառլամենտի իրենց ներկայացուցիչների միջնորդությամբ, սով լինելու մասին աղմուկ էին բարձրացնում և գտնում պետությունից նորանոր անփոխադարձ օժանդակություն պոկելու ուղիներ» (Թուրքիայի բանվորական կուսակցության անդամ, դեպուտատ Թարըք Ջիա Էփինջիի «Դոդու Տրամը» վերնագրով գրքույկից, որը ընդլայնված ձևով տալիս է մեջլիսում նրա ունեցած ելույթներից մեկը: Մեջբերումը ըստ Չեփին Ալթանի նույն վերնագրով հոդվածից: Տե՛ս "Aksam", 9. IX. 1967:

31. "Ulus", 23. VIII. 1952.

32. "Ulus", 19. I. 1962.

33. Տե՛ս Erim Wihat. Doğu illirene dair, "Ulus", 23.VIII. 1952; Erim Wihat. Doğu bölgeleri yolları, "Ulus", 23.II. 1952; Erim Ali Riza Doğu illeri

kolkinmasi, "Ulus", 15. IX. 1953.

34. St'u "Ulus", 23.VIII. 1952.

35. St'u "Ulus", նույն տեղում: "Ulus", 15.IX. 1953.

36. Arisoy M. Sunullah Doğu Sorununda gersek, St'u "Ulus", 28.VIII. 1969.

37. «Ճարաջը» հարկի մի տեսակ էր, որ զանձվում էր ոչ մահմեդականներից: Այստեղ օգտագործված է անարդարացիորեն, ապօրինաբար, բռնությամբ վերցված դրամի առումով:

38. Թրակիան այն վայրերից մեկն էր, ուր արքայիցին քրդերը:

39. St'u Yünney Emrullah, Güngörmes gün doğu elleri, "Ulus", 20.III. 1971:

40. St'u "Ulus", 23.VIII. 1952.

41. Սկզբում ժողովրդական լայն խավերի մոտ Դեմոկրատական կուսակցության բարյացակամության շուրջ ստեղծված պատրանքը շուտով ցրվեց: Մշակութային հետամնացության պայմաններում ժողովրդական լայն խավերը միայն փորձի շնորհիվ են տալիս երևույթների ճիշտ գնահատականը: Այդ մասին կարող է որպես օրինակ ծառայել վանեցի ոչ շատ հայտնի բանաստեղծ Մերաբիի աշուղական ոճով գրված բանաստեղծությունը, որտեղ հայտնվում է այն միտքը, որ «եթե ամբողջ է», ապա բոլորի հետ պետք է վարվել «հավասար», և շարունակում՝ «իշխանությունը կանցնի հնից նորին. մի կարծիր, որ ինչ-որ նոր բան կա քեզ համար. ցավդ եթե մեկն է, կավելանա ևս մեկով»: St'u "Van sesi", 26. 2. 1952:

42. St'u Илчмывеѣт Е.Б. Тургая, М., 1955; Завершев Д.С., նշվ. աշխ.:

43. Cuinet Vital, La Turguie d'Asie, Tome II, Paris, 1891, p. 352.

44. St'u Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1905, էջ 163: Հայկ Վահե, Խարբերող և անոր ոսկեղեն դաշաղ, Նյու-Յորք, 1957: Դիզմենյան Ս., Խարբերող և իր գավակները, Կալիֆորնիա, 1955:

45. Հաշվառումը կատարված է մեր կողմից: Խնդրո առարկա գյուղերն են՝ Հյուսեյնիկ, Զեսիբիկ, Սուրմուրի, Բազմաշեն, Հապուսի, Իջմեն, Խուլյու, (Թլկատին), Բարջանն, Հողեն, Վարդաթիլ, Դատեն, Մորենիկ, Աղմեզիթթ, Շեյխաջի, Ախտ: St'u "Türkiye Ansiklo nedis", cilt II,

Ankara, 1956, s. 234:

46. Saracoglu Hüseyin, Doğu Anadolu, cilt I, İstambul, 1956, 73: Անհրաժեշտ ենք համարում ընդձեռն, որ հեղինակը նկատի ունի ոչ միայն Սասունի կազան, որպես վարչական ենթաշրջան, այլ ամբողջ Սասունի լեռնաշխարհը, այսինքն՝ նաև հարևան կազանների այն շրջանները, որոնք աշխարհագրականորեն հարում են Սասունին:

47. Ըստ Վիտալ Քինեի (1891 թ.), Ջուլամերկի բնակչությունը կազմում էր 2 600 մարդ, այդ թվում՝ 3 000 քրդեր, 1 600 թուրքեր: St'u Cuinet Vital, La Turguie d'Asie, T. II, Paris, 1891, p. 728:

48. "Türk Ansiklopedisi", cilt: XVIII, s. 331.

49. Saracoglu Hüseyin, նշվ. աշխ., էջ 493:

50. Զաղաքների 1960 թվականի բնակչությունը տե՛ս "İstatistik yilligi", 1960-62, s. 56-59:

51. 38 հազար բնակիչ, այդ թվում՝ 20 հազար հայեր (Ս-դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 17): 30-40 հազար բնակիչ, այդ թվում՝ 25 հազար հայեր, 10 հազար թուրքեր ("Annuaire Oriental", Constantinople, 1914): 48 հազար բնակիչ, այդ թվում՝ 24 հազար հայ, 24 հազար թուրք ("Vatan", Van ilâvesi, 12. 11. 1952, s. 9):

52. Ըստ Բիթլիսի վիլայեթի 1319 թ. (1892 թ.) Սալնամեի 44 հազար բնակիչ ("Türk Ansiklopedisi", cilt: VIII, Ankara, 1956, s. 14), 40 հազար բնակիչ, այդ թվում՝ 15 հազար հայեր ("Annuaire Oriental", Constantinople, 1914): Հայեր՝ 18 հազար («Հայ ժողովրդի պատմություն», Հ. 3, Երևան, 1967, էջ 453):

53. 30 հազար բնակիչ, այդ թվում՝ 10 հազար հայ, («Հարազատ պատմություն Տարամոյ», Գահիրե, 1662, էջ 21): 27 հազար բնակիչ, այդ թվում՝ 12,9 հազար հայ (Cuinet Vital, La Turguie d'Asie, T. II, p. 576): 25 հազար բնակիչ ("Hayat Tarih Mecmuasi", 1968, wisan-ilâ vesi):

54. Ըստ 1881 թվականի մի վիճակագրության՝ 9 728 մարդ, այդ թվում՝ 5 442 հայեր (Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903, էջ 38): Ըստ Վ.Ս.Թեմուրճյանի, Առաջին համաշխարհային պատերազմին մնացել էր այդ հայ ազգաբնակչության մեկ երրորդը («Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 1, Երևան, 1970, էջ 38): Ըստ Վիտալ Քինեի 1891 թ.՝ 19 հազար բնակիչ, այդ թվում՝

7 561 հայեր:

55. Ըստ Վիտալ Քինեի՝ 7 500 քնակիչ, այդ թվում՝ 1 700 հայեր, այլ տվյալներ վկայում են, որ հայերի թիվը նվազեցված է (Էփրիկյան Ս., Պատկերագարդ բնաշխարհիկ քառարան, հ. 1, Վենետիկ, 1903, էջ 373):

56. 20 հազար քնակիչ, այդ թվում՝ 9 հազար հայեր (Cuinet Vital, La Turguie d'Asie, T. II, p. 359):

57. Saragoğlu Hüseyin, Doğu Anadolu, cilt I, İstambul, 1956, s. 383.

58. Դյոնյումը հավասար է մոտավորապես 0,1 հա-ի:

59. Նախքան Առաջին համաշխարհային պատերազմը «հարյուրից ավելի մեծ և բարեկարգ գյուղեր կային», Saragoğlu Hüseyin, նշվ. աշխ., էջ 460:

60. Kanlıolat Yahya, Mus ilinde sosyal düzen, "Forum", 1. XI. 1960, sayı 158, s. 7-9.

61. Saragoğlu Hüseyin, նշվ. աշխ., էջ 493:

62. Şi'ü Kazgan Gülten, Doğu ve güneydoğu Anadolunun ekonomik yapısı üzerine bir araştırma, "İktisat Fakültesi Mecmuası", cilt: 24, 1969 Ekim, s. 139:

63. Հաշվառումները կատարված են մեր կողմից: Şi'ü "İstatistik yillığı", 1960-62, s. 337-348:

64. Նույն տեսում:

65. Նույն տեսում:

66. Նույն տեսում:

67. Նույն տեսում:

68. Şi'ü Besikçi İsmail, Doğu Anadolunun düzeni, Ankara cad., 1969, s. 61:

69. Նույն տեսում:

70. "Akşam", 25. 7. 1969. Թուրքիայի շաքարի 17 գործարաններից չորսը գտնվում էին առավել թուրքաբնակ արևելյան վիլայեթների խմբում (Էլազըղ, Էրզինջան, Էրզրում, Մալաթիա), որոնք 1968 թվականին արտադրեցին 82660 հազար տոննա շաքար, Թուրքիայի շաքարի արտադրության 12,7%-ը: Իսկ Թուրքիայի ցեմենտի 20 գործարաններից երկուսը գտնվում էին արևելյան վիլայեթների մոյն

խմբի երկու վիլայեթում (Էլազըղ և Անթեք), որոնք 1968 թվականին արտադրեցին 550 հազար տոննա ցեմենտ, Թուրքիայի ցեմենտի արտադրության 11,6%-ը: Տե՛ս Zeytinoğlu Erol, Türkiye'nin iktisadi bünyesi dersleri, Istanbul, 1969, s. 183, 205:

71. Հաշվումները կատարված են մեր կողմից: Տե՛ս Beşikç i İsmail, նշվ. աշխ., էջ. 110 և “Cumhuriyet”, 13. XI. 1969 - 1. X. 1969:

72. Տե՛ս , Beşikç i İsmail, նշվ. աշխ., էջ. 115:

73. Beşikç i İsmail, նշվ. աշխ., էջ 114:

74. Հաշվումները կատարված են մեր կողմից: Տե՛ս նույն տեղում:

75. Zeytinoğlu Erol, Türkiye'nin iktisadi bünyesi dersleri, Istanbul, 1969, s.75:

76. Նույն տեղում, էջ 58-60:

77. Ozankaya Özer, Doğ u Anadolu, “Forum”, 15. 1. 1968, s. 9; Babacan Filiz, Doğ u ve güneydiğ u Anadolu'da toprak durumu, նույն տեղում, էջ 21:

78. Եմթադրվում է, որ մեկ տարվա ընթացքում զոյանում է 120 միլիոն տոննա կենդանական աղբ, որի միայն 18 միլիոն տոննան օգտագործվում էր որպես պարարտանյութ, 67 միլիոն տոննան՝ որպես վառելանյութ և 35 միլիոն տոննան մնում էր արտավայրերում և մարզերում: Zeytinoğlu Erol, նշվ. աշխ., էջ 73:

79. Տե՛ս “Cumhuriyet”, 13 Eylül 1969 - 1 Ekim 1969; Beşikç i İsmail, նշվ. աշխ., էջ 80-81:

80. Նույն տեղում:

81. Հաշվումները կատարված են մեր կողմից: Տե՛ս “Cumhuriyet”, նույն տեղում: Babacan Filiz, Doğ u ve güneydiğ u Anadolu'da toprak durumu, “Forum”, 15. 1. 1969, s. 21-22. Վերապահությամբ կարելի է ընդունել, որ հողագործների մեծ մասը գյուղատնտեսական քանվորներ էին: Դրանից չի կարելի հանգել այն եզրակացության, որ իբր կիսարարության նման կիսաֆեոդալական հարաբերությունները սահմանափակ ծավալ ունեին արևելյան վիլայեթներում, քանի որ մեծ քիվ էր կազմում նաև սակավահող գյուղացիությունը, որի կարևոր մասը նույնպես զբաղվում է կիսարարությամբ - Հ.Գ.:

82. “Cumhuriyet”, 24. 4. 1971:

83. Նույն տեղում:

84. Նույն տեղում:
85. Հաշվումները կատարված են մեր կողմից: Տե՛ս "Istatistik yilligi", 1960-62, s. 425-426:
86. "Cumhuriyet", 11. 5. 1966.
87. Նախնական ուսուցումը Թուրքիայում բաժանվում էր երկու փուլերի: Առաջինն ընդգրկում էր նախակրթարանի 1-3-րդ, իսկ երկրորդը՝ 4-5-րդ դասարանները: Սակայն գյուղերի մեծ մասում դպրոցները բաղկացած էին առաջին երեք դասարաններից: Տե՛ս Р.С.Давидян, Просвещение в Турции, (1923-1960), Ереван, 1971, с. 90.
88. Zeytinoğlu Erol, Գշվ. աշխ., էջ 31:
89. Նույն տեղում:
90. Նույն տեղում, էջ 32-33:
91. Հաշվումները կատարված են մեր կողմից: Տե՛ս "Istatistik yilligi", 1960-62, s. 165-168:
92. Նույն տեղում:
93. Beşikçi İsmail, Doğu sorunu ve doğ u mitingleri, "Forum", 15. 1. 1968, s. 14.
94. Հաշվումները կատարված են մեր կողմից: Տե՛ս "Istatistik yilligi", 1960-62, s. 125:
95. Որպես օրինակ բերում ենք արևելյան մի քանի վիլայեթներում այդ հիվանդություններից տառապող գյուղերի թիվը:
96. Տե՛ս "Cumhuriyet", 11. 8. 1967:
97. "Ulus", 15. 5. 1969.
98. "Akşam", 1. 9. 1969; "Ulus", 5. 9. 1969; "Cumhuriyet", 14. 9. 1969.
99. Р.С.Давидян, Просвещение в Турции, (1960-1965), «Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», Հ. 5, Երևան, 1970, էջ 171:
100. Р.С.Давидян, Просвещение в Турции, 1923-1960, Ереван, 1971, с. 101.
101. Նույն տեղում, էջ 103:
102. "Cumhuriyet", 13. IX. 1969 - 1. X. 1969.
103. Քաղաք համարելով բոլոր վարչական կենտրոնները (վիլայեթների և կազանների կենտրոնները), ըստ մեր հաշվումների, 1960 թվականի տվյալներով արևելյան վիլայեթներում գյուղական բնակչությունը

կազմում էր ընդհանուր բնակչության 75%-ը, իսկ Թուրքիայի մնացյալ մասում՝ 66%-ը: Տե՛ս «İstatistik yillığı», 1960-62, s. 56-59:

104. Beşikç i İsmail, նշվ. աշխ., էջ 67:

105. Նույն տեղում:

106. «Türkiye Ansiklopedisi», cilt: IV, Ankara, 1957, s. 321.

107. Նույն տեղում, էջ 322:

108. Նույն տեղում:

109. Beşikç i İsmail, նշվ. աշխ., էջ 147:

110. «Եմիքուփրյու» թուրքերեն նշանակում է «նոր կամուրջ»: Գյուղը նախկինում կոչվում էր Կարսումջ կամ Կամուրջ: Ուներ 570 հայ բնակիչ՝ քաժանված 83 տուն: Նրանց նյութական կարողությունն էլ բավական լավ էր: Ուներին Ս.Ստեփաննոս և Ս. Դանիէլ անունով երկու եկեղեցի (տե՛ս Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ քառարան, հ. 1, Վենետիկ, 1903, էջ 269): 1950 թվականին բնակչությունը կազմում էր 238 մարդ (տե՛ս «Türkiye Ansiklopedisi», cilt: I, Ankara, 1956, s.79Մ:

111. Նույն տեղում, էջ 148:

112. Նույն տեղում, էջ 147-148:

113. Նույն տեղում:

114. Նույն տեղում:

115. Նույն տեղում:

116. Նույն տեղում, էջ 147:

117. Նույն տեղում:

118. Նույն տեղում:

119. Նույն տեղում:

120. Նույն տեղում, էջ 175:

121. Նույն տեղում:

122. Նույն տեղում:

123. Նույն տեղում:

124. Նույն տեղում:

125. Տե՛ս «Cumhuriyet», 7. 8. 1967:

126. Տե՛ս «Cumhuriyet», 3-5. VII. 1967, «Cumhuriyet», 15. 3. 1971, «Vatan» 17. 3. 1971.

127. Տե՛ս Հովհաննիսյան Ռ.Փ., Տաս օր Թուրքիայում, Երևան, 1967, էջ 3, 28-29:
128. Okyar Osman, Doğunun iktisadi meseleleri, "Forum", 1. 10. 1963, sayı: 228, s. 9.
129. Beşikç i İsmail, նշվ. աշխ., էջ 12:
130. Նույն տեղում:
131. Նույն տեղում:
132. Aldan Çetin, Doğu dramı, "Akşam", 4. 9. 1967.
133. Օրինակ, 1966 թվականի տարեկան պլանով գյուղատնտեսության և արդյունաբերության համար նախատեսված կապիտալ ներդրումների (2 միլիարդ 48 միլիոն լիրայի) 47%-ը հատկացվում էր արդյունաբերությանը, իսկ 17 արևելյան վիլայեթներում՝ 27%-ը: Տե՛ս Aldan Çetin, Doğu dramı, "Akşam", 4. 9. 1967.
134. Նույն տեղում:
135. Beşikç i İsmail, նշվ. աշխ., էջ 12-13.
136. "Milliyet", 13. 10. 1970.
137. "Cumhuriyet", 7. 5. 1970.
138. "Milliyet", 13. 10. 1970.
139. "Cumhuriyet", 11. 5. 1970.
140. Տե՛ս Ժողովրդա-Հանրապետական կուսակցության ընտրական հայտարարությունը, "Ulus", 24. 8. 1969:
141. Gökğöl Mirza, Şimali-şarki Anadolu yaylasında ziraat araştırmalazı, İstanbul, 1937, s. 23.
142. "Forum", 1. 10. 1963, s. 9.
143. Տե՛ս "Milliyet", 1. 3. 1970.
144. "Milliyet", 26. 8. 1970.
145. "Milliyet", 1. XI. 1970.
146. Տե՛ս "Akşam", 28. 5. 1952.
147. Pzof. Dr. Selen Hâmid Sadi, Türkiyede nüfus dağılışı, Ankara, 1957, s. 9-10.
148. Նույն տեղում, էջ 4: Ծանոթանալով Համիդ Սելեմի մտահոգություններին, ընթերցողը կարող է կռահել, որ նա հիմնականում մտահոգված է Խորհրդային Հայաստանի

գարգացմամբ: Մեր կարծիքով խտության տարբերությունները երբևիցե չեն եղել վճռական գործոն հարևան ժողովուրդների փոխհարաբերության համար: Բնակչության խտությանը տրված նշանակությունը կախված է քաղաքականության ուղղությունից: Ռեակցիոն, ագրեսիվ քաղաքականություն վարողներն օգտվում են խտության տարբերություններից կամ ջանում խտության հարաբերությունը փոխել իրենց օգտին: Այդպիսի օրինակներ են համիդյան ջարդերը, 1915 թվականի Եղեռնը, Կարսի և նրա շրջակայքի զավթումը, Հայաստանն ի սպառ քարտեզից վերացնելու Կարաբեքիր փաշայի երազները և այլն: Նման քաղաքականություն վարողները կամ յուրացնողները, որոնցից մեկը, ըստ երևույթին, Համիդ Սադի Սելենն է, վրդովվում են՝ տեսնելով, որ չեն հասել լիակատար հաջողության, որ վերագարքնել է կործանման եզրին կանգնած հայ ժողովուրդը:

149. Նույն տեղում, էջ 4:

150. Նույն տեղում, էջ 4:

151. Նույն տեղում, էջ 4, 9-10:

152. Տե՛ս Նույն տեղում, էջ 9: Անթաքիան և Իսկենդերունը Թուրքիային հանձնվեցին ֆրանսիացիների կողմից մանդատային իշխանության օրոք: Այդ կարգադրությունը սրեց հարաբերությունները մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Սիրիայի և այլ արաբական երկրների միջև:

153. Նույն տեղում, էջ 4:

154. Նույն տեղում, էջ 9:

155. Տե՛ս “Cumhuriyet”, 21. III. 1971:

156. “Cumhuriyet”, 13. 5. 1970.

157. Tanju Sadun, Altı bin yıl sonra güney-doğu, “Cumhuriyet”, 10. 8. 1975. Մարդինի վիլայեթն ունի 708 գյուղ - Հ.Գ.:

158. Noyan Rebik, Şark vilayetlerimizizin islahi lâzımdır, “Vatan”, Bitlis ilâvesi, 8. VII. 1953.

159. Fehmi Cevat Başkut, Doğuda yapacağımızilk iş, “Cumhuriyet”, 22. 2. 1962.

160. Նույն տեղում:

161. Իր կողմից հրապարակվում է տեղեկագրի այն մասը, որի

հրապարակումը անպատեհ չի համարվում:

162. Ջիզրեն և Սիլուսին Մարդինի վիլայեթի այն ենթաբջաններն են, որտեղ հողագութրկները խիստ մեծ տոկոս են կազմում. Սիլուսիում՝ 60%, իսկ Ջիզրենում՝ 66%: Տե՛ս Kûçük Sami, Toprak' ve tarım sorunlarımız, "Cumhuriyet", 11. V. 1967:

163. "Türk Basını", 1970, Birinci yarı, s. 658.

164. Տե՛ս Աղիբյան ՇԱ., Քրդերի ազգային-ազատագրական շարժման մի քանի հարցերի մասին, «Երևանի Պետական Համալսարան, երիտասարդ գիտաշխատող, հասարակական գիտություններ», N7, 1968, էջ 32-33:

165. Տե՛ս "Cumhuriyet", 23. 4. 1966; "Yeni Istanbul", 15. 5. 1969:

166. Sağlamer Kayhan, Türkler, Kürtler, ve Araplar, "Yeni Istanbul", 9. 3.

1971. Կոմանդոսները լեռներում ապաստանած ըմբոսների և բանդիտների դեմ պայքարելու նպատակով հատուկ մարտական պատրաստություն տեսած ոստիկաններ են, որոնք ապաստանած փախստականներին հայտնաբերելու պատրվակի տակ, մտնում են մաև գյուղերը և բռնություններ գործադրում բնակիչների վրա (Հ.Գ.):

167. Նույն տեղում:

168. Նույն տեղում:

169. Նույն տեղում:

170. Տե՛ս "Cumhuriyet", 13. 5. 1970.

171. Տե՛ս Beşikçi İsmail, նշվ. աշխ., էջ 260-261: Ինչպես էլ լինի քրդական վերնախավի կապը արծարծվող հարցերի հետ, ինչպես նշում է Բեշիկչին, մա չի հանդիսանում ո՛չ քրդական ազգայնականության, ո՛չ էլ քրդերեն լեզվի արաբիչը:

172. Տե՛ս Avcioğlu Doğan, Meselesi Kürt, "Yön", 16. 12. 1966 (մեջբերումը ըստ Բեշիկչիի մի հոդվածի՝ Beşikçi İsmail, Doğu sorunu açısından Türkiyenin düzeni, "Akşam", 22. 3. 1969:

173. Տե՛ս անստորագիր և առաջնորդողի բնույթ կրող հետևյալ հոդվածը. Doğuya Yönelme ihtiyacı, "Forum", 15. 1. 1968, s. 1:

174. Թուրքական իշխանություններին վրդովմունք է պատճառում անգամ այն, որ Արևմտյան Հայաստանում կամ հարևան գավառներում մնացած արևմտահայության բեկորները, թուրքերին

ծուլվելու փոխարեն, վերջերս ավելի սերտ կապեր են հաստատել ստամբուլահայ համայնքի հետ և իրենց զավակներին ուղարկում են Ստամբուլ՝ հայկական դպրոցներում կրթություն ստանալու համար: Տե՛ս «Մարմարա» 24. 11. 1969:

175. Տե՛ս Джиллов Халюк , Экономика Турции, Москва, 1971, с. 45-47.

176. Ըստ կատարված հաշվումների, մեկ տրակտորը վերջ է տալիս կալվածատիրոջ հողի վրա կիսարտոթյան սկզբունքներով գործող 20-50 տնտեսության աշխատանքին: Cem Ismail, Türkiye'de geri kalmışlığın tarihi, Istanbul, 1971, İkinci baskı, s. 424.

177. Տե՛ս Моксеев П.П., Аграрный строй современной Турции, М., 1970, с. 216.

178. Օրինակ, Ուրֆայի գյուղերից մեկում կալվածատիրոջ հողերի վրա քնակվող և աշխատող հողագուրկ գյուղացիների պատմածի համաձայն, տրակտորի գործածությունից հետո կալվածատերը «նոր հարաբերություններ» է հաստատել, գյուղացիներին հաղորդելով հետևյալը. «Չեր աշխատանքը նվազեց: Ամբողջ աշխատանքը կատարում է մոտորը (տրակտորը - Հ.Գ.): Դրա համար պետք է մի քան խորհել: Մինչև հիմա հումձը կես առ կես բաժանում էինք: Այսուհետև հումձի կեսը առանձնացնելու են մոտորին, մնացյալ կեսը կկիսենք առաջվա մեջ...» (Տե՛ս Otyam Fikret, Gide gide, 1-3, Istanbul, 1972, baskı İkinci, s. 22:)

179. Տե՛ս Saracoğlu Hüseyin, Doğu Anadolu, cilt I, Istanbul, 1956, s. 493:

180. Նույն տեղում:

181. Նույն տեղում:

182. Բեշիկչին միայն Հաքյարին մատնանշելու գործում իրավացի է այն պատճառով, որ դրանով ակնարկում է ոչ միայն դեմոգրաֆիական-տնտեսական վիճակը, այլև արտադրական հարաբերությունները: Նրա կարծիքով, Հաքյարիում բոլոր հասարակական հարաբերությունների հիմքում ընկած են ցեղային (աշիրեթային) հարաբերությունները: Տե՛ս Beşikçi İsmail, Doğu Anadolunun düzeni, İst., 1969, s. 23, 199-200:

ПОЛИТИКА ПРАВИТЕЛЬСТВА РЕСПУБЛИКАНСКОЙ ТУРЦИИ В ВОСТОЧНЫХ ВИЛАЙЕТАХ (1920-1960)

Насильственная депортация армянского населения Западной Армении и ряда вилайетов Восточной Анатолии, завершившаяся массовым геноцидом 1915-1916 гг., внесла количественные и качественные изменения как в демографической картине, так и экономическом положении восточных вилайетов Турции. Резко сократилась численность населения, были разорены многие тысячи развитых хозяйств, исчезли многочисленные, в том числе редкие ремёсла, свёрнуто промышленное и кустарное производство. Сильно пострадало земледелие, ослабла связь между отдельными экономическими районами. В результате, развитие восточных вилайетов значительно замедлилось. Захват крупными феодалами земель, ранее обрабатываемых армянами и другими нетурецкими народами, нанёс ощутимый удар по зарождавшимся капиталистическим отношениям.

Эти и другие причины привели к тому, что даже спустя несколько десятилетий после окончания первой мировой войны, восточные вилайеты страны не смогли оправиться от нанесённых потерь демографического, экономического и другого характера, и неравномерность их развития по сравнению с любой из других частей Турции стала ещё более ощутимой.

Между тем, в современной турецкой буржуазной историографии делаются попытки игнорировать или скрыть истинные причины заметного отставания восточных вилайетов по сравнению с другими районами страны. Умалчивается и шовинистическая политика кемалистов в отношении армян, курдов, греков, ассирийцев, также нанёсшая большой урон нормальному развитию Восточной Анатолии.

За последнее время турецкие правящие круги стали уделять больше внимания проблеме ускоренного развития восточных вилайетов страны, исходя из задач как экономического, так и политического характера.

TÜRK YÖNETİM ÇEVRELERİNİN DOĞU VILAYETLERİNDEKİ POLİTİKALARI (1920-1960) (Eserin özeti)

Ermeni nüfusunun Batı Ermenistan ile Doğu Anadolu'nun bazı vilayetlerinden 1915-1916 yıllarındaki kitlesel soykırım ile sonuçlanan zoraki tehciri, Türkiye'nin doğusunda demografik dokuyu sayısal olduğu kadar, yapısal açıdan da olumsuz şekilde etkilemiş, bölgenin ekonomisi üzerinde büyük bir tahribata yol açmıştır. Nüfus yoğunluğu söz konusu vilayetlerde müthiş bir düşüş göstermiş, engin tarihi geçmişi olan el sanatları, küçük ölçekli işletmeler ve esnaflık tamamen çökmüştür. Buna paralel olarak tarım büyük zararlara uğramış, bölgeler arasındaki ekonomik bağlar temelde kopmuştur. Ermeniler ve onların yanı sıra Türk olmayan diğer halkların işledikleri topraklar büyük toprak ağalarının eline geçmiş, bu durum ise ülke çapında kapitalist ilişkilerin gelişmesini ciddi biçimde engellemiştir.

Bütün bu olumsuz gelişmelerin sonucu olarak ülkenin doğu vilayetlerinde demografik, ekonomik ve diğer nedenlerden kaynaklanan somut kayıplar, Birinci Dünya Savaşı'nın ardından seneler geçmesine rağmen bir türlü telâfi edilememiş, Türkiye'nin kalkınmasında varolan bölgelerarası dengesizlikler aksine daha da bozulmuş, eşitsizlikler derinleşmiş, kalkınmayı tehdit eder bir hal almış, sonuç itibarıyla yörede açılan yaralar asla sarılamamıştır.

Bununla beraber, çağdaş Türk tarihçileri doğu vilayetlerinde geri kalmışlığın içeriğini inceler ve bu sonucu diğer bölgelerdeki sonuçlara karşılaştırırken, yukarıda sıralanan olumsuzlukları bilinçli olarak gözardı etmekte, kalkınmayı engelleyen asıl nedenleri büyük bir özenle gizlemeye çalışmaktadırlar. Bu arada kemalistlerin Doğu Anadolu'nun kalkınması önünde büyük bir set oluşturan, yöre halklarından Ermenileri, Rumları,

ՀՀ գիտութիւնների ակադեմիա
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳԱՆՈՒՍՏՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ
(1920-1960-ական թվականներ)

Խմբագիր՝ Վ. Բայբուրդյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Ծուղունյան
Սրբագրիչ՝ Ա. Չանգլյան
Շարվածք՝ Լ. Հակոբջանյան

Հանձնված է շարվածքի 05.08.1999թ.
Ստորագրված է տպագրության՝ 04.09.1999թ.
Չափսը՝ 84x60 1/16, թուղթը՝ օֆսեթ N1,
տպագրություն՝ օֆսեթ: Ծավալը՝ 7 տպագր. մամուլ:

«ԵԳԵԱ» հրատարակչություն
Հասցե՝ Երևան, Մ. Խորենացի 24
Հեռ.՝ 228694

[1000 7p.]

A $\frac{ii}{85531}$

«ԵԳԵԱ

ԵՐԵՎԱՆ 1999